



Բաց հասարակության հիմնադրամներ -

OSF – Armenia



«Համայնքների ֆինանսիստների Հայաստան
միավորում» ՀԿ

CFOA

Հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցների կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն

ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԱՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
Համառոտագիր	6
Ներածություն	11
Հետազոտության նպատակները և խնդիրները	11
Հետազոտության մեթոդաբանությունը	12
Բաժին 1. Միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարանների և ավագ դպրոցների կրթական ծրագրերի նմանությունները և տարբերությունները	13
Ընդհանուր տեղեկատվություն	13
Չափորոշիչների, դասագրքերի, ուսումնական պլանի հետ կապված խնդիրներ	14
Միջնակարգ և ավագ դպրոցների ուսումնական արդյունքների համեմատական վերլուծությունը	17
Բաժին 2. Միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարաններում և ավագ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթության կազմակերպման պայմանները և հնարավորությունները	19
Բաժին 3. Միջնակարգ և ավագ դպրոցների ֆինանսավորման մեխանիզմների, կրթական և ֆինանսական վիճակի համեմատական վերլուծությունը և գնահատումը	25
Միջնակարգ և ավագ դպրոցների ֆինանսավորման մեխանիզմների համեմատական վերլուծությունը և գնահատումը	25
Մոդելային միջնակարգ և ավագ դպրոցների կրթական և ֆինանսական վիճակի համեմատական վերլուծությունը և գնահատումը	27
Կրթության համակարգային ոչ ֆինանսական ցուցանիշներ	29
Կրթության ֆինանսական ցուցանիշներ	33
Եզրակացություններ	35
Առաջարկություններ	39
Օգտագործված գրականության և տեղեկատվության ցանկ	41
Հավելված 1. Վիճակագրական տեղեկատվություն ՀՀ միջնակարգ և ավագ դպրոցների տեղաբաշխվածության վերաբերյալ	42
Հավելված 2. Հանրակրթական դպրոցների պետական ֆինանսավորման վերլուծությունը	43
Հավելված 3. Մոդելային 10 դպրոցների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն՝ բացարձակ ցուցանիշների տեսքով	47
Հավելված 4. Կրթության համակարգային ոչ ֆինանսական ցուցանիշների սահմանումը և գնահատումը	49
Հավելված 5. Կրթության ֆինանսական ցուցանիշների սահմանումը և գնահատումը	51

Հավելված 6. Մոդելային 10 դպրոցների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝
 հարաբերական ցուցանիշների տեսքով..... 53

Հավելված 7. Սոցիոլոգիական հետազոտության արդյունքները 55

ՆԱԽԱԲԱՆ

Սույն զեկույցում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը <Համայնքների ֆինանսիստների միավորում> (ՀՖՄ) ՀԿ-ն է, և նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ՀՖՄ-ն: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի կամ խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի տեսակետներին:

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ <Ավագ դպրոցների և հանրակրթական միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարանների կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն> թթ. 18936 և 18999 ծրագրերի շրջանակներում:

Սույն ծրագրերը ՀՖՄ-ի կողմից իրականացվել են 2014թ. դեկտեմբեր – 2015թ. հուլիս ամիսների ընթացքում, թիրախային ՀՀ 4 մարզերից և Երևան քաղաքից ընտրված հանրակրթական մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցներում:

Սույն զեկույցը վերոնշյալ ծրագրերի շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքն է և վերաբերում է ՀՀ միջնակարգ և ավագ դպրոցների կրթական ծրագրերի բովանդակության, ֆինանսավորման և իրականացման բնագավառում առկա հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

Ծրագրի անձնակազմը շնորհակալություն է հայտնում հետազոտությանը մասնակցած բոլոր մոդելային դպրոցների տնօրեններին, փոխտնօրեններին, մանկավարժներին, փորձագետներին՝ տվյալներ տրամադրելու, հարցազրույցներին և ֆոկուս խմբերի աշխատանքներին մասնակցելու, իրենց արժեքավոր տեսակետների և գնահատականների համար:

Ծրագրի անձնակազմը շնորհակալություն է հայտնում ՀՀ կրթության և գիտության նախարարության ղեկավարությանը, հանրակրթության և ֆինանսական վարչությունների մասնագետներին՝ հետազոտությանը մեծապես աջակցելու և փորձագիտական կարծիք ներկայացնելու համար:

Հետազոտական թիմը շնորհակալություն է հայտնում Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան գրասենյակին՝ հետազոտության թեման կարևորելու և հետազոտության ընթացքում մշտական աջակցություն ցուցաբերելու համար:

- Ծրագրի ղեկավար՝ Վահան Մովսիսյան**
Ծրագրի փորձագիտական խմբի ղեկավար՝ Վահրամ Շահբազյան
Ծրագրի փորձագետներ՝ Մերոբ Խաչատրյան, Արմինե Շահբազյան
Ծրագրի սոցիոլոգիական հետազոտության ղեկավար՝ Յուլիանա Մելքումյան
Ծրագրի հարցազրուցավարներ՝ Մարիամ Մխիթարյան, Նվարդ Մելքոնյան, Աննա Խաչատրյան
Ծրագրի համակարգող՝ Աբրահամ Արտաշեսյան

*<Համայնքների ֆինանսիստների միավորում> ՀԿ, info@cfoamail.am
 Սեպտեմբեր, 2015թ.*

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԿԳՆ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՀՀ-Հ	Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
ՀՖՄ	Համայնքների ֆինանսիստների միավորում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԿԱԻ	Կրթության ազգային ինստիտուտ
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ԳԹԿ	Գնահատման և թեստավորման կենտրոն
ԿՊՏ	Կրթության պետական տեսչություն
ԲՈՒՀ (բուհ)	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՆՄՈՒՀ	Նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր

Համառոտագիր

Ներածություն

Սույն ծրագրի շրջանակներում հետազոտվել, ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ միջնակարգ և ավագ դպրոցներում առկա բազմապիսի խնդիրները՝ կրթական ծրագրերի բովանդակության, ֆինանսավորման և իրականացման բնագավառում:

Հետազոտության նպատակը

- իրականացնել միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարանների և առանձնացված ավագ դպրոցի կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ հաշվի առնելով կրթության նպատակադրումը, բովանդակությունը, ֆինանսավորումը և ստացված արդյունքները, պարզել առկա խնդիրները և նախանշել դրանց լուծման ուղիները:

Հետազոտության խնդիրները

- վերլուծել կրթական ծրագրերի իրականացման բովանդակային նմանությունները և տարբերությունները միջնակարգ և ավագ դպրոցներում,
- համեմատել միջնակարգ և ավագ դպրոցներին ֆինանսական միջոցների հատկացման մեխանիզմները, վերլուծել դրանց բաշխման և ծախսման արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանությունը

- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ հանրակրթական օրենսդրությունը, պետական հանրակրթական ռազմավարությունները և ծրագրերը,
- ուսումնասիրել հասանելի վիճակագրական տեղեկատվությունը, նախկինում կատարված նմանատիպ հետազոտություններն ու վերլուծությունները,
- ՀՀ մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցներում իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն, հանրակրթության բնագավառի հայտնի մասնագետների ու փորձագետների հետ անցկացնել որակական հարցազրույցներ,
- մոդելային 10 դպրոցներից ձեռքբերել տեղեկատվություն՝ սահմանելու և գնահատելու կրթության համակարգային և ֆինանսական ցուցանիշները,
- փորձագիտական վերլուծությունների արդյունքները համեմատել և համադրել սոցիոլոգիական հետազոտության արդյունքների հետ,
- մշակել համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Հետազոտության առանցքային արդյունքները և հիմնական եզրակացությունները

Հետազոտության հիմնական եզրակացություններն են՝

1. Առանձնացված ավագ և միջնակարգ դպրոցների միջև կան ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Ընդհանրություններից են՝
 - ա. Միջնակարգ դպրոցի աշակերտները հնարավորություն ունեն սովորել կրթական այն ծրագրով, որով սովորում են ավագ դպրոցի ընդհանուր հոսքի աշակերտները:

- բ. Դպրոցների ավարտական և միասնական քննությունների պահանջները սահմանելիս, հիմք են ընդունված միջնակարգ դպրոցի կրթական չափորոշչային պահանջները: Սակայն, ավագ դպրոցի հոսքերում սովորող աշակերտները հնարավորություն ունեն ուսումնասիրելու որոշ առարկաներ ավելի խորությամբ և շատ ժամաքանակով:
- գ. ՀՀ օրենսդրությամբ միջնակարգ դպրոցին թույլատրված է իրականացնել հոսքային կրթություն: Սակայն, միջնակարգ դպրոցի բյուջեն հնարավորություն չի տալիս նման կրթություն լիարժեք իրականացնելու համար: Այս խնդիրը հատկապես սրվել է վերջին 5 տարիներին, երբ գյուղաբնակ աշակերտների թիվը 2014-15 ուստարում՝ 2009-10 ուստարվա համեմատ, նվազել է շուրջ 20000-ով, ինչը նշանակում է, որ շատ միջնակարգ դպրոցների ֆինանսական վիճակը վերջին 5 տարում զգալիորեն վատացել է:

Տարբերություններից են՝

- ա. Ավագ և միջնակարգ դպրոցների աշակերտների կրթության միջև առկա է շատ էական խտրականություն: Թեև օրենսդրորեն արգելված չէ, բայց գործնականում միջնակարգ դպրոցի աշակերտները զրկված են հոսքային և ենթահոսքային կրթության հնարավորությունից, ինչը ազդում է ինչպես նրանց ընթացիկ առաջադիմության, այնպես էլ քննական արդյունքների վրա:
 - բ. Ավագ և միջնակարգ դպրոցների շրջանավարտների միասնական քննական արդյունքների տարբերությունները շատ առարկաների դեպքում էական են:
 - գ. Ավագ և միջնակարգ դպրոցների միջև էական տարբերություններ կան նաև 9-րդ դասարանի ավարտական քննությունների ցուցանիշներում:
 - դ. Դպրոցից հետո ուսումը բուռն կամ ՄՄՈՒՀ-ում շարունակելու տեսանկյունից, էական անհամաչափություններ կան Երևանի և ՀՀ մարզերի (բացառությամբ, թերևս, Սյունիքի մարզի) միջև:
 - ե. Քաղաքների դպրոցների շրջանավարտների ցուցանիշներն էապես ավելի բարձր են, քան գյուղերի դպրոցների շրջանավարտների ցուցանիշները:
2. Հոսքային ուսուցումը պարտադիր է ավագ դպրոցների համար: Օրենսդրորեն միջնակարգ դպրոցներում ևս կարող է իրականացվել հոսքային ուսուցում: Սակայն, քանի որ միջնակարգ դպրոցները գերազանցապես գյուղերում են, դրանց սովորողների նվազ թիվը և ըստ այդ թվի ֆինանսավորումը բավարար չեն այնտեղ հոսքային կրթություն իրականացնելու համար:
 3. Թեև ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը նախատեսում էր դպրոցների ընտրության հարցում հաշվի առնել աշխարհագրական դիրքը, շենքային պայմանները, դպրոցի հեղինակությունը, ուսուցիչների մասնագիտական կարողությունները, սակայն գործնականում այդ պահանջները չեն կատարվել:
 4. Ավագ դպրոցների ստեղծումը չի կարող նպաստել մասնավոր պարապմունքների նվազմանը, քանի որ աշակերտների՝ կրկնուսույցի մոտ հաճախելու հիմնական պատճառներից մեկը նրանց կողմից միջին դպրոցի ծրագրի թերյուրացումն է:
 5. Ավագ դպրոցի կայացման գլխավոր պայմաններից մեկը հիմնական դպրոցի կայացումն է: Ավագ դպրոցի համար շատ դժվար է լուրջ արդյունքների հասնել, եթե հիմնական դպրոցում չեն դրվել հիմքերը: Ճիշտ չէ այն քաղաքականությունը, որ ավագ դպրոցների զարգացման համար անհրաժեշտ է միայն դրանց վրա ներդրում կատարել:

6. Որքան էլ ավագ դպրոցների աշակերտներն առավելություն ունենան միջնակարգ դպրոցի աշակերտների նկատմամբ, միևնույնն է, պարզապես հոսքեր ներդնելով և առարկաների խորացված ուսուցում իրականացնելով՝ հարցը չի լուծվում:
7. Հանրակրթական դպրոցների՝ ըստ սովորողների թվի ֆինանսավորման մեխանիզմն արդյունավետ գործում է միայն շահառուների մեծ թվաքանակի առկայության դեպքում:
8. Ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևը բովանդակային առումով չի բխում հանրակրթության նպատակներից և ակնկալվող որակական արդյունքից, որը հանգեցնում է պետական բյուջետային միջոցների ծախսման զգալի անարդյունավետության:
9. Որևէ իրավական ակտով հաստատված չէ հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի **Սգ** և **Պգ** փոփոխական գործակիցների հաշվարկման մեթոդաբանությունը:
10. Հանրակրթական դպրոցի ֆինանսավորման բանաձևում միջնակարգ դպրոցի համար հաշվարկված՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը» մոտ 18%-ով փոքր է ավագ դպրոցի համար հաշվարկված նույն ցուցանիշից:
11. Հանրակրթական դպրոցների պետական ֆինանսավորումը հիմնականում բավարարում է դպրոցների հիմնական «պարտադիր ծախսերի» կատարմանը՝ քիչ տեղ թողնելով դրանց զարգացման հնարավորություններին:
12. Հանրակրթության ոլորտում ծրագրային բյուջետավորման ձևաչափն ամբողջությամբ ներդրված չէ դպրոցներում, ինչի պատճառով հնարավոր չէ արդյունավետորեն պլանավորել և իրականացնել դպրոցների ծախսային քաղաքականությունը, կազմակերպել կրթական ծրագրերի իրականացման արդյունավետ մոնիթորինգ և գնահատում:
13. Հանրապետության մասշտաբով տվյալների անհասանելիության պատճառով, հնարավոր չէ արժեքավոր վերլուծություններ կատարել ՀՀ բոլոր միջնակարգ և ավագ դպրոցների պետական ֆինանսավորման և այդ ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ:
14. Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցները հիմնականում զգալիորեն թերբեռնված են (նախագծային հզորության համապատասխանաբար միջինը մոտ 60% և 76% -ով):
15. Մոդելային 5 ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների միջին խտությունը մոտ 1.21 անգամ բարձր է, քան մոդելային 5 միջնակարգ դպրոցների նույն ցուցանիշը:
16. Փաստացի սովորողներով բարձր և միջին ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով և ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցները հիմնականում գտնվում են համեմատաբար խոշոր քաղաքային համայնքներում, իսկ ցածր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով և ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցները՝ հիմնականում փոքր քաղաքային և գյուղական համայնքներում:
17. Մոդելային 10 դպրոցներից միայն կեսի՝ 5-ի (3 միջնակարգ և 2 ավագ) սովորողների փաստացի թիվը և գնահատված ոչ ֆինանսական ցուցանիշների արժեքները գտնվում են ողջամիտ սահմաններում, իսկ մնացած 5-ի նույն ցուցանիշների արժեքները հիմնականում ողջամիտ սահմաններից բավականին դուրս են:
18. Ե՛վ միջնակարգ, և՛ ավագ դպրոցի 1 սովորողին ընկնող և՛ ընդհանուր եկամուտները, և՛ պետական պատվերից ստացվող եկամուտները հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների փաստացի թվին:

19. Մոդելային միջնակարգ դպրոցների 1 սովորողին ընկնող՝ պետական պատվերից միջին եկամուտները կազմում են դրանց ընդհանուր միջին եկամուտների 99.9%-ը, իսկ դպրոցների այլ միջին եկամուտները՝ ընդամենը 0.1%-ը: Մոդելային ավագ դպրոցների նույն ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 99.0% և 1.0%:
20. Ե՛վ միջնակարգ, և՛ ավագ դպրոցի 1 սովորողին ընկնող և՛ ընթացիկ ընդհանուր ծախսերը, և՛ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների թվին: Ի տարբերություն դրանց, դպրոցի պահպանման ծախսերի դեպքում այդ օրինաչափությունը չի նկատվում:
21. Մոդելային միջնակարգ դպրոցների 1 սովորողին ընկնող՝ ընթացիկ ընդհանուր միջին ծախսերում աշխատողների աշխատավարձի գծով միջին ծախսերը կազմում են 92.5%-ը, իսկ դրանց պահպանման միջին ծախսերը՝ ընդամենը 7.5%-ը: Մոդելային ավագ դպրոցների ծախսային նույն ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 91.6% և 8.4%:
22. Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ դպրոցի պահպանման ծախսերի գծով ավագ դպրոցների միջին արժեքը մոտ 1.29 անգամ մեծ է միջնակարգ դպրոցների միջին արժեքից (դրանց մոտավորապես հավասար փաստացի սովորողների թվերի պարագայում):
23. Հայաստանում կան բացառիկ հանրակրթական դպրոցներ, որոնք կատարում են կապիտալ ծախսեր:

Հետազոտության հիմնական առաջարկությունները

1. Իրականացնել ավագ և միջնակարգ դպրոցների ավագ դասարաններում կրթության համալիր ուսումնասիրություն՝ բացահայտելու, թե որոնք են խորքային խնդիրները և դրանց արմատները, հիմնովին փոխելով դպրոցի շենքի միջավայրը, ձևավորումը, կահավորումը, ուսուցիչների համար կազմակերպելով թիրախավորված և կարիքների վրա հիմնվող նպատակային մասնագիտական զարգացման դասընթացներ և այլն:
2. Ավագ դպրոցներում իրականացվող կրթական բարփոխումներին զուգահեռ նաև իրականացնել հիմնական դպրոցների զարգացման առանձին ծրագրեր:
3. Մշակել 21-րդ դարին հարիր ավագ դպրոցի սովորողների կրթության ծրագիր՝ հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիական զարգացումները, աշակերտների նախասիրությունները, և մշակելով և ներդնելով ուսուցման բոլորովին նոր համակարգ:
4. Վերանայել ավագ դպրոցների ուսուցիչների աշխատանքի ընդունման, վերապատրաստման և ատեստավորման համակարգերը: Ավագ դպրոցների ուսուցիչները պետք է ունենան ակադեմիական տարբեր մակարդակ ունեցող պատանիների հետ աշխատելու հմտություններ, պետք է կիրառեն ուսուցման հետաքրքիր, գրավիչ և մասնակցային մեթոդներ:
5. Նվազեցնել ավագ դպրոցների ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ դրա փոխարեն ներմուծելով ուսուցչական թիմերում աշխատելու ժամաքանակ:
6. Առաջնահերթ խնդիր դիտարկել ավագ դպրոցի ուսուցիչների՝ ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելու հմտությունների զարգացումը, ինչը հնարավորություն կընձեռնի նրանց առավել արդյունավետ աշխատելու ժամանակակից սովորողների հետ:

7. Ավագ դպրոցներին տալ ուսումնական ծրագրեր և պլաններ կազմելու առավել մեծ ճկունություն, որը հնարավորություն կտա արձագանքելու սովորողների բազմազան կարիքներին և սովորողներին նախագծելու սեփական կրթական ուղին:
8. Գյուղերում և փոքր քաղաքներում գործող միջնակարգ դպրոցներին հատկացնել լրացուցիչ ֆինանսավորում՝ ունենալու արտադասարանական խմբակներ միասնական քննական մի քանի առարկաների գծով, ինչը հնարավորություն կտա մասամբ չեզոքացնել միջնակարգ և ավագ դպրոցների միջև ներկայումս առկա կրթության բովանդակային տարբերությունները:
9. Մշակել, ընդունել և կիրառել հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի **Սգ** և **Պգ** գործակիցների հաշվարկման հստակ մեթոդաբանություն:
10. Հանրակրթական դպրոցների պետական ֆինանսավորման համակարգում, բացի դպրոցների հիմնական «պարտադիր ծախսերից» (աշխատավարձից և պահպանման ծախսերից), նախատեսել նաև դրանց զարգացման գծով ծախսեր:
11. Հանրակրթական դպրոցներում ամբողջովին ներդնել ծրագրային բյուջետավորման ձևաչափը (մասնավորապես, կրթական ծառայությունների մատուցման արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների համակարգը), որի շնորհիվ հնարավոր կլինի արդյունավետորեն պլանավորել և իրականացնել դպրոցների ծախսային քաղաքականությունը, կազմակերպել կրթական ծրագրերի իրականացման մոնիթորինգ և գնահատում:
12. Հիմք ընդունելով ՀՀ միջնակարգ և ավագ դպրոցների մեծամասնության ներկայիս զգալի թերբեռնվածությունը՝ մշակել, քննարկել և ընդունել այդ դպրոցների համակարգի տեղաբաշխման և հետագա զարգացման նոր ռազմավարություն:
13. Միջնակարգ և ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների հոսքերի/ենթահոսքերի խտությունը սահմանել 12-16 սովորող՝ ներկայումս գործող 20-25-ի փոխարեն, վերանայելով դրանց ձևավորման ընթացակարգերը, ուսումնական պլանները, դպրոցների հաստիքային և ուսուցիչների տարիֆիկացիոն ցուցակները:
14. Ուսումնասիրել և գնահատել դպրոցում որոշ առարկաների գծով ֆակուլտատիվ պարապմունքների, արտադասարանական խմբակների կազմակերպման մասնագիտական և ֆինանսական հնարավորությունները:
15. Առաջարկել միջնակարգ և ավագ դպրոցներին՝ ընդլայնելու նրանց կողմից իրականացվող կրթական ծրագրերի շրջանակները (պետական լրացուցիչ ծրագրեր, ձեռնարկատիրական գործունեություն և այլն) և ձևավորելու բյուջետային և արտաբյուջետային լրացուցիչ միջոցներ:
16. Առաջարկել միջնակարգ ու ավագ դպրոցներին՝ ստեղծելու և աստիճանաբար զարգացնելու դպրոցների պաշտոնական համացանցային կայքերը՝ բարձրացնելով դպրոցների ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկության, հրապարակայնության, արդյունավետության և հաշվետվողականության մակարդակները:
17. Հիմք ընդունելով համայնքների խոշորացման գծով Հայաստանում իրականացվող բարեփոխումները՝ ուսումնասիրել և քննարկել ներկայիս մեծ և բազմաբնակավայր համայնքներում տեղաբաշխված միջնակարգ դպրոցների կառավարման ապակենտրոնացման հարցը՝ պետության կողմից համայնքներին պատվիրակելու միջոցով:

Ներածություն

ՀՀ-ում կրթությունը հռչակված է ռազմավարական ոլորտներից մեկը: Կրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը հանրակրթության ոլորտում պետական քաղաքականության մաս են կազմում¹: Այս քաղաքականության շրջանակներում կրթության ոլորտում անընդհատ փոփոխություններ են կատարվում, որոնք, սակայն, միշտ չէ, որ հասարակությունն ընկալում է որպես բարեփոխումներ:

2006-2012թթ. ընթացքում ՀՀ-ում իրականացվեցին 12-ամյա հանրակրթական համակարգին անցման և եռամյա կրթակարգով առանձին գործող ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրերը, որոնց իրականացման արդյունքում ՀՀ հանրակրթական միջնակարգ դպրոցների մի մասը վերակազմակերպվեց ավագ դպրոցների:

Առանձին ավագ դպրոցների հիմնադրումը, որն ի սկզբանե նախատեսում էր ապահովել կրթական ծրագրերի ու հոսքերի բազմազանություն, կրթական հնարավորությունների ընդլայնված շրջանակ սովորողների համար, պետք է էապես նպաստեր ավագ դպրոցներում կրթության որակի բարելավմանը²: Սակայն, վերջին շրջանում իրականացված հետազոտությունները վկայում են, որ գործող ավագ դպրոցների մեծամասնությունն ունի սահմանափակ թվով հոսքեր և հիմնականում չունի մասնագիտական ենթահոսքեր: Զուգահեռաբար, ՀՀ համայնքների մեծամասնությունում գործում են 12-ամյա միջնակարգ դպրոցները, որոնք ևս իրականացնում են ավագ մակարդակի կրթական ծրագրեր: Դրանց բովանդակությունը և որակը, ըստ էության, պետք է նկատելիորեն տարբերվեն առանձին ավագ դպրոցների կողմից իրականացվող կրթական ծրագրերի բովանդակությունից և որակից: Հարց է ծագում՝ արդյո՞ք այդպես է:

Ծրագրի սույն բաղադրիչի շրջանակներում հետազոտվել, ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ միջնակարգ և ավագ դպրոցներում առկա բազմապիսի խնդիրները՝ կրթական ծրագրերի բովանդակության, ֆինանսավորման և իրականացման բնագավառում:

Հետազոտության նպատակները և խնդիրները

Սույն հետազոտության նպատակն է՝ իրականացնել միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարանների և առանձնացված ավագ դպրոցի կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ հաշվի առնելով կրթության նպատակադրումը, բովանդակությունը, ֆինանսավորումը և ստացված արդյունքները, պարզել առկա խնդիրները և նախանշել դրանց լուծման ուղիները:

Սույն հետազոտության խնդիրները դիտարկվել են երկու հիմնական ուղղություններով՝

- Ա) Վերլուծել կրթական ծրագրերի իրականացման բովանդակային նմանությունները և տարբերությունները միջնակարգ և ավագ դպրոցներում՝ անդրադառնալով, մասնավորապես, հետևյալ հարցերին՝

¹ <Հանրակրթության մասին> ՀՀ օրենք, հոդված 5

² <http://www.cfep.am/en/supporting-implementation-of-high-school-reform>

- 1) որո՞նք են միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարանների և ավագ դպրոցի կրթական ծրագրերի (ներառյալ կրթակարգի, հանրակրթական և առարկայական չափորոշիչների, այլ կրթական և մեթոդաբանական նյութերի) նմանությունները և տարբերությունները,
- 2) որքանո՞վ է երկու տիպի դպրոցների կրթական գործընթացի կազմակերպումը համարժեք կրթական չափորոշիչներով սահմանված ելքային արդյունքներին հասնելու համար,
- 3) ինչպիսի՞ պարտադիր պայմաններ կան միջնակարգ և ավագ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթության կազմակերպման համար,
- 4) որո՞նք են միջնակարգ դպրոցների պոտենցիալ հնարավորությունները և հիմնական սահմանափակումները կրթությունը հոսքերում կազմակերպելու համար,
- 5) որքանո՞վ է ավագ դպրոցներում կազմակերպվող հոսքային կրթությունը համապատասխանում ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրով ամրագրված պահանջներին,
- 6) որքանո՞վ է հոսքային կրթություն կազմակերպելու պահանջն ամրապնդվում երկու տիպի դպրոցներում համապատասխան հնարավորությունների ապահովմամբ (ներառյալ տեխնիկական, ակադեմիական և այլ ռեսուրսների),
- 7) որքանո՞վ է ապահովվում փոքր և միջին մեծության դպրոցներում կրթության իրավունքի հավասար իրացումը:

Բ) Գնահատել ֆինանսական միջոցների հատկացման մեխանիզմները միջնակարգ և ավագ դպրոցների միջև, վերլուծել բաշխման և ֆինանսական արդյունավետությունը՝ անդրադառնալով, մասնավորապես, հետևյալ հարցերին՝

- 1) արդյո՞ք ավագ և միջնակարգ դպրոցներին ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցները բավարար են այդ դպրոցներում որակյալ հոսքային և ենթահոսքային կրթություն կազմակերպելու և իրականացնելու համար,
- 2) որքանո՞վ են միջնակարգ և ավագ դպրոցների կրթական ծրագրերի տարբերությունները պայմանավորված դրանց ֆինանսավորման տարբերություններով,
- 3) արդյո՞ք դպրոցների ֆինանսավորման տարբերությունները խնդիրներ չեն առաջացնում գյուղական համայնքների դպրոցներում, որտեղ հիմնականում գործում են փոքրաթիվ սովորողներով դասարաններ,
- 4) ի՞նչ տարբերություններ կան փոքր, միջին և մեծ (ավագ և միջնակարգ) դպրոցների ֆինանսական (եկամտային, ծախսային) ցուցանիշների միջև:

Հետազոտության մեթոդաբանությունը

Վերոնշյալ խնդիրների լուծման համար կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը՝

- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ օրենսդրությունը, պետական հանրակրթական ռազմավարությունները և ծրագրերը՝ դպրոցների կողմից կրթական ծրագրերի իրականացման և ֆինանսավորման բնագավառում,

- ուսումնասիրել հանրակրթության բնագավառում հասանելի վիճակագրական տեղեկատվությունը, նախկինում կատարված նմանատիպ հետազոտություններն ու վերլուծությունները և դրանցից ստացված արդյունքները³,
- ՀՀ մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցներում իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն, հանրակրթության բնագավառի հայտնի մասնագետների ու փորձագետների հետ անցկացնել որակական հարցազրույցներ,
- մոդելային դպրոցներից ձեռքբերել տեղեկատվություն դրանց համակարգային և ֆինանսական գործունեության վերաբերյալ, որի օգտագործմամբ՝ սահմանել և գնահատել դպրոցների գործունեության համակարգային և ֆինանսական ցուցանիշներ,
- կրթության բովանդակային, ֆինանսավորման և ծախսման ուղղություններով վերլուծությունների արդյունքները համեմատել և համադրել սոցիոլոգիական հետազոտության արդյունքների հետ,
- մշակել եզրակացություններ՝ միջնակարգ և ավագ դպրոցների կողմից կրթական ծրագրերի իրականացման և ֆինանսավորման տարբերությունների վերաբերյալ,
- մշակել առաջարկություններ՝ միջնակարգ և ավագ դպրոցների կողմից կրթական ծրագրերի իրականացման և ֆինանսավորման տարբերությունները նվազեցնելու, կրթական ծառայությունների որակը և ֆինանսական արդյունավետությունը բարձրացնելու համար:

Բաժին 1. Միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարանների և ավագ դպրոցների կրթական ծրագրերի նմանությունները և տարբերությունները

Ընդհանուր տեղեկատվություն

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանում միջնակարգ ընդհանուր կրթությունն իրականացվում է հանրակրթական եռաստիճան համակարգում՝

- տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ),
- միջին դպրոց (5-9-րդ դասարաններ),
- ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):

Միջնակարգ հանրակրթական համակարգի առաջին երկու աստիճանները միասին կազմում են հիմնական դպրոցը (1-9-րդ դասարաններ), իսկ երրորդ աստիճանը՝ միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարանները կամ առանձին գործող ավագ դպրոցը:

Ներկայումս Հայաստանում գործում են 847 միջնակարգ դպրոցներ (1-12-րդ դասարաններ), որոնցից 816-ը պետական են, 31-ը՝ ոչ պետական (հավելված 1):

³ Մասնավորապես՝ ԲՀԻ-Հ-ի աջակցությամբ <Համայնքների ֆինանսիստների միավորում> ՀԿ կողմից 2014թ. իրականացված <Ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետություն մոնիթորինգ> ծրագրի զեկույցում տեղ գտած վերլուծության արդյունքները:

12-ամյա հանրակրթական համակարգի առանցքային ուղղություններից մեկը եռամյա ավագ դպրոցի ներդրումը և կայացումն է: Այդ նպատակով 2008-ին ընդունվեց <Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը>⁴, ըստ որի 2009-2012թթ. ՀՀ միջնակարգ դպրոցների մի մասը վերակազմավորվեց ավագ դպրոցների և անցավ ՀՀ ԿԳՆ ենթակայության⁵:

Ներկայումս Հայաստանում գործում են 109 ավագ դպրոցներ, որոնցից 100-ը պետական են, 9-ը՝ ոչ պետական (հավելված 1): Ավագ դպրոցների սովորողների ընդհանուր թիվը կազմում է 37503 մարդ կամ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների 10.4%-ը: Երևանում են գտնվում ավագ դպրոցների 45.0%-ը, որտեղ սովորում են ավագ դպրոցների սովորողների 49.9%-ը:

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի⁶, ՀՀ պետական հանրակրթական (այդ թվում՝ միջնակարգ և ավագ) դպրոցները հիմնադրվում են ՀՀ կառավարության որոշմամբ, հիմնականում ՊՈԱԿ-ի կազմակերպչի ավակների ձևով: Հանրակրթական դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով, որի օրինակելի ձևը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցների կառավարման միակ տարբերությունը, ըստ էության, կայանում է նրանում, թե դրանք պետական կառավարման ո՞ր մարմնի ենթակայության տակ են գտնվում: Եթե ՀՀ միջնակարգ դպրոցները հիմնականում գործում են մարզպետների կամ Երևանի քաղաքապետի ենթակայությամբ, ապա ՀՀ բոլոր ավագ դպրոցները գտնվում են ՀՀ ԿԳՆ-ան ենթակայության տակ⁷: Մնացած բոլոր առումներով, միջնակարգ և ավագ դպրոցների կառավարման համակարգերի միջև էական տարբերություններ չկան և այդ դպրոցները գործում են հանրակրթության բնագավառում ՀՀ միասնական օրենսդրության շրջանակներում:

Հարցադրում 1. Որո՞նք են միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարանների և առանձին ավագ դպրոցների կրթական ծրագրերի (ներառյալ կրթակարգ, հանրակրթական և առարկայական չափորոշիչներ, այլ կրթական և մեթոդաբանական կյուրթեր) նմանությունները և տարբերությունները:

Չափորոշիչների, դասագրքերի, ուսումնական պլանի հետ կապված խնդիրներ

2004թ.-ին Հանրակրթության պետական կրթակարգի ընդունումից հետո Հայաստանն անցավ չափորոշիչների վրա հիմնվող կրթության: 2011թ.-ին ընդունված Հանրակրթության պետական չափորոշիչի հիման վրա վերանայվեցին ավագ դպրոցի առարկայական չափորոշիչները:

⁴ ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի թիվ 12 արձանագրային որոշում, <http://www.edu.am/index.php?id=1465&topMenu=-1&menu1=9&menu2=129&arch=0>

⁵ Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 14-ի «ՀՀ ԿԳՆ-ն ավագ դպրոցների լիազոր մարմին ճանաչելու և նրան լիազորություններ վերապահելու մասին» N 19-Ն որոշման:

⁶ <Հանրակրթության մասին> ՀՀ օրենք, հոդված 9, կետ 3

⁷ <Հանրակրթության մասին> ՀՀ օրենք, հոդված 9, կետ 4

Չափորոշչային կրթության անցման խնդիրներից մեկն այն է, որ այդ համակարգը դեռևս լիարժեք չի գործում: Առկա են մի շարք խնդիրներ: Նախ, ավագ դպրոցի առարկայական չափորոշիչները միասնական ձևաչափով և մոտեցումով շարադրված չեն: Աշխարհում առավել տարածված է այն մոտեցումը, որ չափորոշչային պահանջները պետք է լինեն պարզ, կոնկրետ, կիրառական, որպեսզի ուսուցիչների համար այն դառնա ամենօրյա գործիք: Մինչդեռ, ավագ դպրոցի առարկայական չափորոշիչները ծավալուն փաստաթղթեր են, որոնցում կան բավական շատ տեսական դրույթներ, երբեմն պահանջներն այնքան են մանրամասնված, որ մեկ դասի ընթացքում դրանց կատարումը հնարավոր չէ: Այս ամենի արդյունքում, առարկայական չափորոշիչներն ավելի քան 100 էջանոց փաստաթղթեր են դառնում և օգտագործման տեսանկյունից՝ ոչ կիրառական:

Չափորոշիչներում կան պահանջներ, որոնք չափելի չեն: Օրինակ՝ շատ առարկաների չափորոշիչներում առկա են այսպիսի ձևակերպումներ՝ սովորողը պետք է գաղափար ունենա, պատկերացում ունենա, ծանոթ լինի և այլն: Նման ձևակերպումները չափելի չեն դարձնում պահանջը: Պարզ չէ, գաղափար ունենալը նշանակում է սահմանել, թե՞ նկարագրել, թե՞ բացատրել:

Չափորոշիչները շարադրված են տարբեր մոտեցումներով: Առանձին առարկաների չափորոշիչները սահմանված են Բլումի աստիճանակարգմանը համաձայն, մյուսների դեպքում՝ օրինաչափություն չկա: Մի մասում սովորողին ներկայացվող պահանջները շարադրված են եռամակարդակ, մյուսները երկմակարդակ: Մի դեպքում առաջին մակարդակում պարզ պահանջներ են, երրորդում՝ բարդ: Մյուս դեպքում՝ առաջին մակարդակում պարտադիր պահանջներ են, երրորդում՝ լրացուցիչ:

Ըստ փորձագիտական կարծիքի, Հայաստանում որոշ առարկաների դասագրքերի և չափորոշիչների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կան գիտելիքներ և հմտություններ, որոնք չափորոշիչներով չեն պահանջվում, սակայն ներառված են դասագրքերում և ուսուցիչներն էլ մատուցում են դասագրքային այդ նյութը:

Լրջագույն խնդիր է նաև այն, որ չափորոշչով հաճախ սահմանվում են մտածողության զարգացմանը նպաստող պահանջներ, բայց քննությունների ժամանակ ստուգվում է փաստական գիտելիքը: Նման մոտեցումը ուսուցման գործընթացից դուրս է մղում բազմաթիվ կարևոր գիտելիքներ և հմտություններ, որոնք ենթակա չեն ստուգման:

Սույն ծրագրի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտության (տե՛ս հավելված 4) ընթացքում իրարամերժ տեսակետներ են արտահայտվել դասագրքերի վերաբերյալ: Փորձագետների մի մասը, ֆոկլուս-խմբային քննարկման մասնակիցները համարում են, որ դասագրքերը շատ խրթին ու մասնագիտացված լեզվով են գրված: Մյուսների կարծիքով, վերջին տարիներին դրական տեղաշարժեր են արձանագրվել՝ դասագրքերն էապես բեռնաթափվել են և ավելի մատչելի են դարձել: Վերջին տեսակետի կողմնակիցների **հիմնական փաստարկներից մեկն այն է**, որ նկատելիորեն նվազել է ուսուցիչների մասնագիտական մակարդակը, ինչի պատճառով դասագրքի նյութը պատշաճ ձևով չի մատուցվում աշակերտներին: Ի դեպ, այս տեսակետի օգտին կան նաև միջազգային հետազոտական տվյալներ, որոնց համաձայն, բարձրորակ ուսուցիչն ի վիճակի է հաղթահարելու դասագրքերի վատ որակը՝ իր մասնագիտական կարողություններով: Սակայն խնդիրն այն է, թե արդյո՞ք մեր ուսուցիչները բավարար չափով մոտիվացված ու պատրաստ են այդ դերը ստանձնելու:

Մյուս փաստարկն այն է, որ դպրոցում հայոց լեզվի ուսուցումը միայն ուղղված է Հայ գրականություն սովորեցնելուն և չի նպաստում սովորողի ընդհանուր բառապաշարի հարստացմանը: Իսկ աղքատիկ բառապաշարը սովորողին հնարավորություն չի տալիս հասկանալ այլ առարկաների դասագրքերի լեզուն:

Խնդիրներից մեկն էլ այն է, որ գիտելիքների ստուգման թեստային եղանակը հանգեցնում է ընթերցանության նվազման և բառապաշարի աղքատության:

Ավագ դպրոցի առանձնահատկություններից մեկն այն է, որ աշակերտները կարող են ընտրել հոսքեր և իրենց նախընտրած առարկաներն ուսումնասիրել շատ ժամաքանակով և խորացված ծրագրով: Ավագ դպրոցի ընդհանուր հոսքի և միջնակարգ դպրոցի աշակերտները սովորում են նույն ծրագրով:

Մասնագիտական հոսքերում կան առարկաներ, որոնց հատկացվում է պատկառելի ժամաքանակ՝ շաբաթական 8 դասաժամ: Սակայն, սա արդյունավետ է միայն այն աշակերտների համար, ովքեր հիմնական դպրոցում գիտելիքների լավ պաշար են կուտակել և ցանկանում են շարունակել իրենց կրթությունը հենց այդ առարկայի գծով: Այսինքն՝ եթե միջին դպրոցում աշակերտը ձեռք չի բերել բավարար չափով հիմնարար գիտելիքներ, ապա ավագ դպրոցում խորացված ուսուցումը չի կարող նպաստակալին և օգտակար լինել: Այս իմաստով կարևոր է, որ ավագ դպրոցն ունենա ֆինանսական լրացուցիչ հնարավորություններ՝ ձևով ծրագրեր կազմելու համար, որոնք գերծ կլինեն պարզապես շատ նյութ փոխանցելու մոտեցումից, փոխարենը շեշտը դնելով նյութի հետաքրքրականության ու բազմազանության վրա՝ ծառայելով տարբեր ակադեմիական մակարդակ ունեցող աշակերտների:

Հանրակրթության տևողությունը երկու տարով երկարեցնելը չպետք է դիտարկվի պարզապես միջազգային չափանիշներին համապատասխանելու կամ ավելի շատ սովորեցնելու համատեքստում: Շատ կարևոր է ստեղծել այնպիսի միջավայր, որում աշակերտները հնարավորություն ունենան իրենց ուսումնական հետազիծն ունենալ: Առանց ձկունության ապահովման, կրթության տևողության երկարացումը կարող է բերել ձանձրոյթի համաճարակի:

Խնդիրներ կան նաև ուսումնական պլանի ձկունության հետ: Ակնհայտ է, որ ավագ դպրոցների գործունեության հիմնական առավելություններից մեկը պետք է լինի ուսումնական պլանի ձկունությունը և առավելագույն ինքնուրույնությունը: Սակայն, այս առումով կան խնդիրներ: Ուսումնական պլանը, ըստ <Հանրակրթության մասին> ՀՀ օրենքի, սահմանում է, որ պարտադիր առարկաները, որոնք պետք է ուսուցանվեն՝ անկախ դպրոցի ընտրությունից, պետք է ունենան ուսումնական պլանի առնվազն 30%-ը: Առնվազն 30%-ը կարող է նշանակել մինչև 100%: Ներկայումս ավագ դպրոցի 10-րդ դասարանում ուսումնական պլանի շաբաթական 34 ժամից 21 ժամը պարտադիր ժամաքանակի մեջ է մտնում, այսինքն՝ դա ոչ թե 30%-ն է, այլ 70%-ից ավելին: Սա նշանակում է, որ դպրոցը գործնական ձկունություն չունի: Այս խնդիրը շատ կարևոր է, քանի որ ՏՀԿ երկրների կրթական համակարգերի հետազոտությունները վկայում են, որ դպրոցների ինքնուրույնությունը և ձկունությունը զարգացման կարևորագույն նախապայմաններ են: Այստեղ մենք ունենք արատավոր մի բան: Մի կողմից, ավագ դպրոցները չեն կարող զարգանալ առանց ինքնուրույնության, մյուս կողմից, կա մտահոգություն, որ ինքնուրույնություն տալը կարող է բերել կամայականության: Այստեղ խնդրի լուծման տարբերակներից մեկն այն է, որ ավագ դպրոցների տնօրեններ ընտրվեն այն մասնագետները, ովքեր ինքնուրույնությունը կարող են օգտագործել զարգացման նպատակով:

Էական տարբերություններ կան միջնակարգ դպրոցների ավագ դասարանների և առանձնացված ավագ դպրոցների ծրագրերի միջև: Թեև օրենսդրորեն արգելված չէ միջնակարգ դպրոցներում հոսքային կրթության իրականացումը, այդուհանդերձ, ֆինանսական տեսանկյունից դա հնարավոր չէ: Առանձնացված ավագ դպրոցներում հնարավորություն կա նախընտրած առարկաները շաբաթական 8 ժամ ուսումնասիրելու, մինչդեռ միջնակարգ դպրոցում առավելագույնը աշակերտը կարող է շաբաթական 2-3 ժամ ուսումնասիրել: Հիմնական քննական առարկաների մասով տարբեր են նաև դասագրքերը: Ավագ դպրոցների աշակերտները հնարավորություն ունեն առարկաներն ուսումնասիրել խորացված ծրագրերով և դասագրքերով, իսկ միջնակարգ դպրոցների աշակերտներն այդ հնարավորությունից զրկված են:

Հարցադրում 2. Որքանով է երկու տիպի դպրոցների կրթական գործընթացի կազմակերպումը համարժեք կրթական չափորոշիչներով սահմանված էլքային արդյունքներին հասնելու համար:

Միջնակարգ և ավագ դպրոցների ուսումնական արդյունքների համեմատական վերլուծությունը

Վերոնշյալ տարբերությունները ներդրումների առումով, ազդում են նաև աշակերտների ցուցաբերած առաջադիմության վրա: Մասնավորապես, ավագ և միջնակարգ դպրոցների համեմատության կարևոր ցուցանիշներ են պետական ավարտական և միասնական քննությունների արդյունքները: Ըստ ԿՏԱԿ-ի տվյալների, 2013-14 ուստարում 12-րդ դասարանն ավարտածների ցուցանիշներում էական տարբերություններ կան Երևանի և մարզերի միջև: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարզերի դպրոցների շրջանավարտների ճնշող մեծամասնությունը միջնակարգ դպրոցների շրջանավարտներ են, ի հակադրություն Երևանի, մարզերի և Երևանի միջև տարբերությունը նշանակում է նաև միջնակարգ դպրոցների և Երևանի դպրոցների (և՛ միջնակարգ, և՛ ավագ) միջև տարբերություն: Այսպես, Երևանի դպրոցներն ավարտած 5853 աշակերտներից 4334-ն ուսումը շարունակել են բուհում կամ ՄՄՈՒՀ-ում: Մինչդեռ մարզերի դեպքում, այս ցուցանիշները նկատելիորեն ցածր են (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Դպրոցից հետո ուսումը շարունակողների թիվն՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի

Մարզը / Երևան համայնքը	Ավարտական վկայականներ ստացածներ	Ուսումը շարունակել են բուհում կամ ՄՄՈՒՀ-ում
Երևան	5853	4334
Արագածոտն	1420	594
Արարատ	2146	860
Արմավիր	2304	1165
Գեղարքունիք	2525	933
Լոռի	2034	1025
Կոտայք	2094	956
Շիրակ	2307	1115
Սյունիք	1194	802
Վայոց Ձոր	562	257
Տավուշ	1252	732
Ընդամենը	23691	12773

Աղյուսակ 1-ից պարզ է դառնում, որ միայն Սյունիքի մարզի ցուցանիշներն են մոտ Երևանի ցուցանիշներին: Որոշ չափով բարվոք են նաև Տավուշի մարզի արդյունքները: Իսկ մնացած մարզերում դպրոցն ավարտողների մեծամասնությունը չի շարունակում իր ուսումը: Արագածոտնի մարզի պարագայում ուսումը շարունակողների թիվը հասնում է շուրջ 70 %-ի:

Հետաքրքիր են նաև ԳԹԿ-ի տվյալները ընդունելության քննությունների վերաբերյալ⁸: 2014թ. ընդունելության միասնական քննությունների արդյունքները վկայում են, որ թեև միջինում Երևանի դպրոցների շրջանավարտների ցուցանիշները բարձր են մարզերի նույն ցուցանիշներից, բայց, առանձին առարկաների տվյալներով, կան մարզեր, որոնց շրջանավարտների քննական գնահատականները հավասար են կամ ավելի բարձր են Երևանի դպրոցների շրջանավարտների նույն ցուցանիշներից:

Այդուհանդերձ, էական տարբերություններ կան դիմորդների ցուցանիշների միջև՝ ըստ դպրոցի տեսակների: Վատագույն ցուցանիշն ունեն միջնակարգ դպրոցների շրջանավարտ-դիմորդները: Բացի Աշխարհագրությունից, մնացած առարկաների մասով միջնակարգ դպրոցների շրջանավարտ-դիմորդները էապես զիջում են ավագ դպրոցների շրջանավարտ-դիմորդներին: 20 բալանոց գնահատման համակարգում այդ տարբերությունն առանձին առարկաների գծով (Հայոց պատմություն, Կենսաբանություն, Ֆրանսերեն) մոտենում է մինչև 3 միավորի: Ի դեպ, 2013թ. համեմատ, 2014թ. ավագ դպրոցների և միջնակարգ դպրոցների շրջանավարտ-դիմորդների ցուցանիշների տարբերությունը մեծացել է՝ ի վնաս միջնակարգ դպրոցների: Իրենց հերթին, ավագ դպրոցների ցուցանիշները նկատելիորեն զիջում են հենակետային վարժարանների և կրթահամալիրների ցուցանիշներին:

Էական տարբերություններ են արձանագրված նաև պետական ավարտական քննությունների ցուցանիշներում⁹: Մասնավորապես, ըստ ԳԹԿ-ի կողմից ներկայացված տվյալների, Հայոց լեզու և գրականություն, Մաթեմատիկա, Հայոց պատմություն առարկաների քննությունների արդյունքներով, քաղաքներում գտնվող դպրոցների (այսինքն՝ մեծամասամբ ավագ դպրոցների) շրջանավարտները շատ ավելի բարձր արդյունքներ են ցուցաբերել, քան գյուղերի դպրոցների շրջանավարտները: Օրինակ, Մաթեմատիկա առարկայի դեպքում խոշոր քաղաքների դպրոցների շրջանավարտների միջին ցուցանիշը 2 միավորով բարձր է գյուղական դպրոցների շրջանավարտների միջին ցուցանիշից:

Ավարտական քննությունների ցուցանիշներով ավագ դպրոցների շրջանավարտները էապես գերազանցում են միջնակարգ դպրոցների շրջանավարտների ցուցանիշներին: Միակ բացառությունը Գերմաներեն առարկան է: Ընդ որում, Երևանի ցուցանիշները բոլոր առարկաների գծով էապես գերազանցում են մարզերի նույն ցուցանիշներին:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ, դպրոցից հետո ուսումը բուռնում կամ ՄՄՈՒՀ-ում շարունակելու տեսանկյունից, էական անհամաչափություններ կան Երևանի և մարզերի (բացառությամբ, թերևս, Սյունիքի մարզի) միջև: Էական են նաև միասնական և ավարտական քննությունների ցուցանիշների տարբերությունները ավագ և միջնակարգ դպրոցների միջև: Քաղաքների, ավագ դպրոցների շրջանավարտների ցուցանիշներն էապես ավելի բարձր են, քան գյուղերի, միջնակարգ դպրոցների շրջանավարտների ցուցանիշները:

⁸ http://www.atc.am/files/verlucutyunner/2014_Miasnakan_gnnutyunner.pdf, էջ 18, 21

⁹ <http://www.atc.am/files/verlucutyunner/avartakan-2014-12-rd.pdf>

Ավագ և միջնակարգ դպրոցների միջև էական տարբերություններ կան նաև 9-րդ դասարանի ավարտական քննությունների ցուցանիշներում: Ըստ ԳԹԿ-ի տվյալների¹⁰, բոլոր առարկաների գծով ավագ դպրոցների աշակերտներն ավելի բարձր ցուցանիշներ ունեն, քան միջնակարգ դպրոցների աշակերտները: Հետաքրքիր է, որ ավագ դպրոցների աշակերտներին էլ բոլոր առարկաների գծով (բացի ֆրանսերենից) գերազանցում են հիմնական դպրոցների աշակերտները: Հիմնական դպրոցի աշակերտների նման բացարձակ առավելությունն ավագ և միջնակարգ դպրոցների նկատմամբ կարելի է բացատրել այն ենթադրությամբ, որ հիմնական դպրոցը <ջանում է> իր շրջանավարտներին ավելի բարձր միավորներով ճանապարհել՝ ցույց տալու, որ ունի բարձր առաջադիմությամբ շրջանավարտներ: ԿՊՏ-ի ընթացիկ ուսումնասիրությունները բազմիցս ցույց են տվել, որ դպրոցների գնահատականները արհեստականորեն բարձրացված են¹¹:

Այսպիսով, դպրոցների միջին և ավագ դասարանների քննական արդյունքների և ուսուցումը դպրոցից հետո շարունակելու ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ավագ դպրոցների շրջանավարտներն ունեն ակնհայտ առավելություն միջնակարգ դպրոցների շրջանավարտների նկատմամբ:

Բաժին 2. Միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարաններում և ավագ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթության կազմակերպման պայմանները և հնարավորությունները

Հարցադրում 3. Ինչպիսի՞ պարտադիր պայմաններ կան միջնակարգ և ավագ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթության կազմակերպման համար:

Հարցադրում 4. Որո՞նք են միջնակարգ դպրոցների պոստենցիալ հնարավորությունները և հիմնական սահմանափակումները կրթությունը հոսքերում կազմակերպելու համար:

Հարցադրում 5. Որքանո՞վ է ավագ դպրոցներում կազմակերպվող հոսքային կրթությունը համապատասխանում ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրով ամրագրված պահանջներին:

Հոսքային ուսուցումը պարտադիր է ավագ դպրոցների համար: Միջնակարգ դպրոցներում նույնպես կարող է իրականացվել հոսքային ուսուցում: Սակայն, քանի որ միջնակարգ դպրոցները գերազանցապես գյուղերում են, դրանց սովորողների նվազ թիվը և ըստ այդ թվի ֆինանսավորումը բավարար չեն այնտեղ հոսքային կրթություն իրականացնելու համար:

Ավագ դպրոցում մասնագիտական առարկաների դասերին ուսուցման արդյունավետ կազմակերպման համար սովորողների թիվը պետք է չգերազանցի 15-ը: Սակայն դպրոցների մեծամասնությունում ենթահոսքեր ձևավորված չեն կամ ձևական բնույթ են կրում՝ պայմանավորված ֆինանսավորման սղությամբ: Փոքր դպրոցներում այն պայմանավորված է

¹⁰ <http://www.atc.am/files/verlucutyunner/avartakan-2014-9-rd.pdf> էջ 16-19

¹¹ www.kpt.am

նաև սովորողների ոչ բավարար քանակությամբ՝ ձևավորելու մասնագիտական ենթահոսքեր: Միջնակարգ դպրոցներում մասնագիտական առարկաների դասերին սովորողների թիվը կարող է գերազանցել 15-ը, ինչն անհավասարություն է ստեղծում երկու դպրոցների միջև:

Ներկայումս ավագ դպրոցներում սովորողների խտությունը դասարանում (նաև մասնագիտական առարկաների պարագայում) հիմնականում տատանվում է 20-25 սովորող միջակայքում: Սրանով հաճախ չի ապահովվում «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրով» նախատեսված այն կետը, ըստ որի՝ մասնագիտական առարկաների դասերը կազմակերպվում են 12-15 սովորողների խմբով: Հարկ է նշել, որ ավագ դպրոցների ստեղծման սկզբնական շրջանում մի շարք դպրոցներ կազմակերպել են ենթահոսքերով ուսուցում, սակայն դրանք ծախսատար էին և հետագայում վերացվեցին կամ խտացվեցին՝ խնայելու ուսուցիչների աշխատավարձային ֆոնդի ծախսերը:

Մասնագիտական առարկաների պարագայում նույն դասարանում տարբեր ունակություններով, առաջադիմությամբ և մոտիվացիայով սովորողների խիստ բնեռացվածությունը կրկնուսուցմանը նպաստող հիմնական գործոններից է (դասարաններում սովորողների մեծ թվի հետևանքներից է ուսուցիչների կողմից սովորողներին ցուցաբերած անհատական մոտեցման պակասը): Մեծաթիվ սովորողներով դասարանները համարում են կրկնուսուցմանը նպաստող երկու հիմնական գործոններից մեկը, իսկ մյուսը ավագ դպրոցների առարկայական ծրագրերի անհամապատասխանությունն է բուհ ընդունվելու պահանջներին:

Հարցադրում 6. Որքանով է հոսքային կրթություն կազմակերպելու պահանջն ամրապնդվում երկու տիպի դպրոցներում համապատասխան հնարավորությունների ապահովմամբ (ներառյալ տեխնիկական, ակադեմիական և այլ ռեսուրսների):

Դեռևս չիրականացված է մնում ավագ դպրոցների ռազմավարական ծրագրով նախատեսված ավագ դպրոցների ուսուցիչների պատրաստման մագիստրոսական ծրագրի ստեղծումը: Սա կարևոր է, քանի որ պարզապես հոսքային ուսուցման միջոցով որոշ առարկաների դասավանդման ժամերն ավելացնելը դեռևս բավարար չէ ավագ դպրոցում հաջողության հասնելու համար: Խնդիրն այն է, որ խորացված դասընթացներն արդյունավետ դասավանդելու համար անհրաժեշտ են բարձրակարգ մասնագետներ: Հաճախ կարևոր չէ, թե ինչքան ժամանակ է հատկացվում այս կամ այն առարկայի ուսուցմանը: Կարևոր է, թե ինչպես է անցնում այդ ժամանակը: Եթե առարկայի ուսուցումը հետաքրքիր և զարգացնող չէ, ապա որքան շատ լինի դրա ժամաքանակը, այնքան ավելի ձանձրալի կլինի ժամանակը:

Շաբաթական 8 դասաժամ որևէ առարկա նույն դասարանում հետաքրքիր և արդյունավետ դասավանդելու համար ուսուցիչը պետք է բավական լուրջ նախապատրաստություն անցնի: Բայց մենք չունենք առարկաների խորացված դասավանդման մասնագետներ և ամեն ինչ կախված է ուսուցչի ինքնակրթության մշակույթից և պրոֆեսիոնալիզմից: Հայաստանի ավագ դպրոցի ուսուցիչները նախկին միջնակարգ դպրոցների ուսուցիչներն են: Նրանք ավագ դպրոցում են աշխատում ոչ թե այն պատճառով, որ ավելի լավ մասնագետներ են, այլ որովհետև կառավարության որոշմամբ նրանց դպրոցն ընդգրկվել է ավագ դպրոցների ցանկում: Ի դեպ, ավագ դպրոցներում բարձրակարգ ուսուցիչներ ունենալն առանձնակի կարևորվում է ՏՀԶԿ կողմից:

Առարկայական խորը գիտելիքներից զատ, կարևոր են նաև 15-18 տարեկան աշակերտների մեծ խմբերի հետ աշխատելու հմտությունները: Ընդ որում, այդ աշակերտները եկել են տարբեր դպրոցներից և ունեն բևեռացված ակադեմիական մակարդակ: Ավագ դպրոցի հիմնական խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների զգալի մասը ետ է մնացել միջին դպրոցի ծրագիրը յուրացնելու հարցում, իսկ մեր ուսուցիչների մեծ մասին չեն ուսուցանում, թե ինչպես աշխատել բևեռացված առաջադիմությամբ սովորողներով համալրված դասարաններում:

Հայաստանում չկա նաև վատ աշխատանքի համար ուսուցիչներին պատժելու կամ աշխատանքից ազատելու քաղաքականություն, ինչը հավանաբար պայմանավորված է ուսուցիչների ցածր աշխատավարձով: Օրինակ՝ ըստ ԿՏԱԿ-ի տվյալների, 2014-15 ուստարում Հայաստանի դպրոցներից դուրս եկած ուսուցիչներից միայն 9-ն են հեռացվել ցածր որակավորման համար: Ստենֆորդի և Վիրջինիայի համալսարանների մասնագետների հետազոտությունը վկայում է, որ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ոչ միայն լավագույն մասնագետներին բերել ոլորտ, այլև զուգահեռաբար ազատվել վատ աշխատողներից: Նման քաղաքականության երկարատև բացակայությունը կարող է հանգեցնել նրան, որ դպրոցներում լավ և վատ ուսուցիչների միջև սահմանագիծն աստիճանաբար կվերանա, ինչի արդյունքում կնվազի լավագույն ուսուցիչների մոտիվացիան¹²:

Հայաստանում իրականացվող վերապատրաստման նույն դասընթացներն արդյունավետ չեն: Ավագ դպրոցի մասնագիտական հոսքում շաբաթական 8 դասաժամ Ֆիզիկա դասավանդող ուսուցչի, միջնակարգ դպրոցում նույն առարկան շաբաթական 3 դասաժամ և հիմնական դպրոցում շաբաթական 2 դասաժամ դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը և կարիքները արմատապես տարբեր են: Ավելին, վերապատրաստման ժամանակ հաշվի չեն առնվում նաև ուսուցիչների անհատական պատրաստվածության մակարդակը: Անկախ ուսուցչի անհատական պատրաստվածության մակարդակից, նա անցնում է նույն դասընթացը: Արդյունքում, ուսուցիչների մի մասի համար վերապատրաստման ծրագրերը բարդ են, մյուսների համար՝ պարզունակ և անօգտակար:

Վերապատրաստող կազմակերպության և դպրոցների միջև հետադարձ կապը թույլ է: Մասնավորապես, փորձագետներից մեկն այսպիսի հետաքրքիր օրինակ է բերում միջազգային փորձից: Վերապատրաստող կազմակերպությունը դասընթացից հետո զեկույց է հղում դպրոցի տնօրենին՝ ներկայացնելով ուսուցանած թեմաները, տվյալ ուսուցիչ ուժեղ և թույլ կողմերը: Այնուհետև, վերապատրաստող կազմակերպությունը դասալսումների միջոցով փորձում է պարզել, թե ինչպես է կիրառում ուսուցիչն իր սովորածը, որից հետո նոր զեկույց է ներկայացվում դպրոցի տնօրենին: Իհարկե, Հայաստանում հնարավոր չէ համընդհանուր կիրառել այս մոտեցումը՝ հաշվի առնելով ֆինանսական խնդիրները: Բայց կարելի է սկզբում փորձարկել մի քանի դպրոցներում և տեսնել արդյունքները: Ըստ փորձագետներից մեկի դիտարկման, ԿԱԻ-ն դպրոցներում արդեն իրականացնում է դասերի դիտարկումներ:

Մանկավարժական կրթության և ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում չի կարևորվում ուսուցչի՝ որպես առաջնորդի դերը, ինչը շատ կարևոր է ժամանակակից աշխարհում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորելու պատասխանատվությունը աշակերտին է, ակնհայտ է, որ միայն առաջնորդ ուսուցիչը կարող է երեխային ոգևորել և մղել սովորելու: Այս տեսակետը շատ կարևոր է, քանի որ հատկապես ավագ դպրոցական տարիքի

¹² <http://www.nber.org/papers/w21922>

աշակերտների շրջանում հաջողության հասնելու համար առաջնորդական հատկանիշները պարտադիր են:

Կարևոր բացթողումներից մեկն այն է, որ Հայաստանում մանկավարժական աշխատանքը գերազանցապես դիտվում է որպես անհատական աշխատանք: Թիմային աշխատանքի նվազմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ շատ ավագ դպրոցներում մեթոդական միավորումների նախագահները այլևս չեն վճարվում կամ ավելի ցածր են վճարվում, քան նախկինում: Մինչդեռ մանկավարժական աշխատանքը թիմային աշխատանք է: Ֆինլանդիայի դպրոցական կրթության գլխավոր հաջողություններից մեկը, ըստ փորձագետ Պասի Մալբերգի, ոչ թե այն է, որ Ֆինլանդիայի դպրոցներում աշխատում են շատ խելացի ուսուցիչներ, այլ այն, որ ուսուցիչներն՝ իրար հետ համագործակցելով, կարողանում են իրենց առավելագույնս դրսևորել¹³:

Ուսուցիչների վերապատրաստման հարցերով զբաղվող մասնագետների համար խորհելու և ծրագրային փոփոխություններ կատարելու հարցում հետաքրքիր բացահայտումներ կան ԳԹԿ-ի կողմից անցկացված ուսումնասիրության մեջ: Մասնավորապես, ավագ դպրոցների հայոց լեզվի ուսուցիչներին ուղղված՝ «Ի՞նչն է խանգարում Ձեզ առարկայի դասավանդման ավելի մեծ արդյունավետության հասնելու» հարցին ուսուցիչների 49%-ը պատասխանել է «աշակերտների անտարբերությունը», 38%-ը՝ «առարկայական ծրագրի բեռնվածությունը», 19%-ը՝ «դասագրքերի բովանդակությունը», 4%-ը՝ «դասավանդման մեթոդների նվազ արդյունավետությունը»: Իսկ Մաթեմատիկայի ուսուցիչները նույն հարցին պատասխանել են հետևյալ համամասնությամբ. 54%-ը նշել է՝ «աշակերտների անտարբերությունը», 40%-ը՝ «առարկայական ծրագրի բեռնվածությունը», 26%-ը՝ «ուսումնանյութական ռեսուրսների պակասը», 19%-ը՝ «աշակերտների անկարողությունը»:

Այս տվյալները վկայում են, որ հիմնական խնդիրը, որին բախվում են ուսուցիչները՝ աշակերտների անտարբերությունն է: Իսկ աշակերտների անտարբերությունը հաղթահարելու հարցում ուսուցիչներին մասնագիտական աջակցություն չի ցուցաբերվում:

Աշակերտների անտարբերության պատճառներից մեկն այն է, որ մենք երկու տարով երկարացրել ենք դպրոցական կրթության տևողությունը, աշակերտներն ունեն տեխնոլոգիաների միջոցով տեղեկություններ ստանալու հնարավորություններ, սակայն ավագ դպրոցում շարունակում ենք որպես ուսուցման գերիշխող մոտեցում դիտարկել դասը: Նախագծային ուսուցման տարածումը, աշակերտներին ուսուցման բազմազան եղանակներ առաջարկելը, ինքնուրույն աշխատանքի հմտություններ ձևավորելը կարող են նպաստել անտարբերության նվազմանը: Կարևոր է նաև տեխնոլոգիաների բազմաանպատակ օգտագործումը: Պարզապես սլայդներ ցույց տալը բավարար չէ: Այս առումով կարևոր է, որ ԿՏԱԿ-ի կողմից ստեղծվել է «Հեռավար ուսուցում» համակարգը (<http://learning.armedu.am/>), որում ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպվել են 10-րդ դասարանի խորացված հոսքի ութ ուսումնական առարկաների (Հայոց լեզու, Ռուսաց լեզու, Օտար լեզու (Անգլերեն), Հանրահաշիվ, Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն, Հայոց պատմություն) հեռավար դասընթացներ՝ ուսուցիչների և աշակերտների խմբերի համար:

Առաջին հայացքից ավագ դպրոցների ստեղծումը էապես չի խորացնում անհամաչափությունները կրթության ոլորտում: Մասնավորապես, ըստ փորձագիտական

¹³ Sahlberg, Pasi. Finnish Lessons 2.0: What Can the World Learn from Educational Change in Finland?, Second Edition (Series on School Reform) (Kindle Locations 2736-2737). Teachers College Press. Kindle Edition.

կարծիքի, գյուղ-քաղաք հավասարությունն այսօր առկա է այն առումով, որ միջնակարգ դպրոցի աշակերտը հնարավորություն ունի օգտվելու նույն կրթական ծրագրից, ինչ ավագ դպրոցի ընդհանուր հոսքի աշակերտը: Բացի այդ, ավագ դպրոցների հանդեպ շատ հաճախ տարվում է նույն քաղաքականությունը, ինչ միջնակարգ դպրոցների հանդեպ: Օրինակ՝ դրանց ուսուցչական կազմն էապես չի տարբերվում, տնօրենների ընտրության ընթացակարգը նույնն է, ավագ դպրոցների ֆինանսական վիճակն առանձնապես ավելի լավ չէ, քան միջնակարգ դպրոցներինը և այլն:

Ի վերջո, չկան հիմնավոր տվյալներ, որ ավագ դպրոցում նախընտրած առարկաները հոսքերում շատ ավելի մեծ ժամաքանակով սովորելու արդյունքում քաղաքաբնակ աշակերտներն ավելի քիչ են օգտվում կրկնուսույցների ծառայություններից, քան գյուղաբնակ աշակերտները: Ավարտական, միասնական քննությունների պահանջները նույնն են և դրանք ավելին չեն, քան միջնակարգ դպրոցի կրթական չափորոշչով պահանջվող նյութը:

Չնայած վերոնշյալ հիմնավորումներին, այդուհանդերձ, ավագ դպրոցների ստեղծումը սահմանափակելով միայն քաղաքային բնակավայրերով՝ Հայաստանն էապես դժվարացնում է համաչափ զարգացած կրթական համակարգ ունենալու հնարավորությունը:

Մասնավորապես, ըստ ՀՀ ԱՎԾ <Աղքատությունը և սոցիալական պատկերը Հայաստանում, 2013թ.> զեկույցի, էական անհամաչափություններ կան հանրակրթական դպրոցների ավագ դասարանների և բարձրագույն կրթության մակարդակների միջև: Ավագ դասարաններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով կազմել է 5376 դրամ, որից դասագրքերի վրա՝ 25%, մասնավոր դասերի վրա՝ 47%, ուսման վարձավճարի վրա՝ 2% և այլ ծախսերի վրա՝ 26%: Ընդ որում, ավագ դասարաններում սովորող երեխա ունեցող տնային տնտեսություններում միջին ամսական ծախսը մեկ աշակերտի հաշվով, ըստ աղքատության մակարդակի կազմել է՝ ոչ աղքատների համար 6294 դրամ, որից դասագրքերի վրա՝ 23%, մասնավոր դասերի վրա՝ 52%, վարձավճարի վրա՝ 2% և այլ ծախսերի վրա՝ 23%, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների) համար համապատասխանաբար՝ 3 889 դրամ, որից դասագրքերի վրա՝ 30%, մասնավոր դասերի վրա՝ 33%, վարձավճարի վրա՝ 4% և այլ ծախսերի վրա՝ 33%, իսկ ծայրահեղ աղքատների համար՝ 1 978 դրամ, որից դասագրքերի վրա՝ 60%, այլ ծախսերի վրա՝ 40%, մասնավոր դասերի և վարձավճարի վրա ծախս չեն ունեցել¹⁴:

Նույն զեկույցի համաձայն, բուհերում սովորողների 80%-ը ոչ աղքատ տնային տնտեսություններից են, 18%-ը՝ աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) տնային տնտեսություններից և մոտ 2%-ը՝ ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններից:

Անհամաչափություններից մեկն էլ այն է, որ Հայաստանի բուհերը ստորագրել են համագործակցության հուշագրեր տարբեր ավագ դպրոցների հետ և պարբերաբար այցելում են դպրոցներ կամ հրավիրում իրենց մոտ աշակերտներին: Այցերի ընթացքում ավագ դպրոցների աշակերտներին ներկայացվում են բուհերի մասնագիտությունները, մասնագիտացումները, ամբիոնները: Իսկ միջնակարգ դպրոցների և բուհերի միջև համակարգված համագործակցություն չկա, որը նշանակում է, որ միջնակարգ դպրոցները ոչ բարենպաստ վիճակում են ավագ դասարանների դպրոցականների համար կարևորագույն մի հարցում՝ մասնագիտական կողմնորոշման:

¹⁴ ՀՀ ԱՎԾ <Աղքատությունը և սոցիալական պատկերը Հայաստանում, 2013թ.>, 2014

Միջնակարգ դպրոցների ավագ դասարանների աշակերտական համակազմը շատ բազմազան է: Քանի որ գյուղերում չկան ՆՄՈՒՀ-ներ և ՄՄՈՒՀ-ներ, իսկ դպրոցներում չկան հոսքեր (հատկապես՝ արհեստագործական), ապա մեկ դասարանում սովորում է բնեռացված աշակերտական համակազմ՝ առաջատար համալսարանի դիմորդից մինչև տարրական գրագիտություն չունեցող աշակերտը: Միջնակարգ դպրոցի նույն ավագ դասարանում սովորում են ֆիզիկամաթեմատիկական հակումներ ունեցող, հումանիտար առարկաներ նախընտրող, չկողմնորոշված, սովորելու ցանկություն ընդհանրապես չունեցող երեխաներ: Ակնհայտ է, որ նման միջավայրում դժվար է պատկերացնել արդյունավետ ուսումնական գործընթաց:

Ավագ և միջնակարգ դպրոցների միջև որոշակի խտրականություն մտցրեց նաև այն, որ ավագ դպրոցները ԿԳՆ ենթակայության տակ են, իսկ միջնակարգ դպրոցները՝ տարածքային կառավարման մարմինների: Միննույն ժամանակ, Համաշխարհային բանկի նոր վարկի մեծ մասն ուղղվելու է ավագ դպրոցների հիմնանորոգմանը և վերազինմանը: Առաջիկա տարիների երկրորդ խոշորագույն ներդրումը Կրթության գերազանցության ազգային ծրագիրն է, որը նույնպես ավագ դպրոցների համար է նախատեսված: Արդյունքում, այս ամենը կարող է նպաստել ավագ և միջնակարգ դպրոցների միջև առկա տարբերությունների էլ ավելի խորացմանը:

Որոշ փորձագետների կարծիքով, ավագ դպրոցում նախընտրած առարկաները ծավալուն ժամաքանակով ուսումնասիրելը ավագ դպրոցների կարևորագույն առավելությունն է: Որքան էլ քննության պահանջները և նյութերը նույնն են, այդուհանդերձ, ակնհայտ է, որ հոսքային կրթության ստանալու հնարավորությունն առավելություն է տալիս ավագ դպրոցների աշակերտներին: Ավելին, ըստ ուսուցիչների, օրինակ, Կենսաբանություն առարկայի պարագայում կան տարբերություններ քննական նյութերի և դպրոցական ծրագրերի միջև: Ի դեպ, հենց Կենսաբանություն առարկայից էին 2014թ.-ին արձանագրվել ամենաշատ անբավարար գնահատականներ միասնական քննությունների ժամանակ:

Այդուհանդերձ, շատ ժամաքանակով առարկաներն ուսումնասիրելու առավելությունները համատարած չեն: Այդ մասին են վկայում 2014թ. աշնանը ԳԹԿ-ի կողմից Հայաստանի 70 դպրոցների (այդ թվում՝ 46 ավագ դպրոց, 17 վարժարան և 7 ոչ պետական դպրոց) 10-րդ դասարանցիների շրջանում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները: Գնահատումն անցկացվել է Հայոց լեզու, Հայ գրականություն, Հանրահաշիվ և Երկրաչափություն առարկաների գծով¹⁵: Գնահատման արդյունքում հետաքրքիր տվյալներ են դուրս բերվել վերոնշյալ առարկաները շատ և քիչ ժամաքանակով ուսումնասիրող աշակերտների ցուցանիշների միջև: Հայոց լեզու և Հանրահաշիվ առարկաների դեպքում, այն աշակերտները, ովքեր ավելի շատ ժամաքանակով են ուսումնասիրում այդ առարկաները, ավելի բարձր արդյունքներ են ցույց տվել, քան ավելի քիչ ժամաքանակով ուսումնասիրողները: Իսկ Հայ գրականություն և Երկրաչափություն առարկաների պարագայում, ավելի շատ ժամաքանակով առարկան ուսումնասիրելը ավելի բարձր միավոր չի ապահովել: Արտաքին այս գնահատման վերլուծականում որպես օրինաչափություն նշվում է այն հանգամանքը, որ միասնական քննություններում Հայոց լեզվին վերաբերող առաջադրանքների քանակը շատ ավելի է, քան Հայ գրականությանը վերաբերողների քանակը: Նույնը Հանրահաշիվի և Երկրաչափության պարագայում է:

¹⁵ http://www.atc.am/files/verlucutyunner/2014/october/2014_hoktember_yntacik_1.pdf

Բաժին 3. Միջնակարգ և ավագ դպրոցների ֆինանսավորման մեխանիզմների, կրթական և ֆինանսական վիճակի համեմատական վերլուծությունը և գնահատումը

Հարցադրում 7. Արդյո՞ք ավագ և միջնակարգ դպրոցներին ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցները բավարար են այդ դպրոցներում որակյալ հոսքային և ենթահոսքային կրթություն կազմակերպելու և իրականացնելու համար:

Հարցադրում 8. Որքանո՞վ են միջնակարգ և ավագ դպրոցների կրթական ծրագրերի տարբերությունները պայմանավորված դրանց ֆինանսավորման տարբերություններով:

Միջնակարգ և ավագ դպրոցների ֆինանսավորման մեխանիզմների համեմատական վերլուծությունը և գնահատումը

ՀՀ հանրակրթական դպրոցներում (այդ թվում՝ միջնակարգ և ավագ դպրոցներում) կրթության ֆինանսավորման հարցը կարգավորվում է «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, ոլորտը կարգավորող այլ օրենքներով, ենթաօրենսդրական և այլ իրավական ակտերով:

ՀՀ պետական հանրակրթական դպրոցների ֆինանսական միջոցները գոյանում են ՀՀ պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից¹⁶ : ՀՀ պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից¹⁷ (տե՛ս հավելված 2):

Միջնակարգ դպրոցի ֆինանսավորման բանաձևի առաջին բաղադրիչի ընդհանուր գումարը ստացվում է դպրոցի երեք մակարդակների (տարրական, միջին, ավագ) համար հաշվարկված նույն բաղադրիչի գումարների հանրագումարից: Իսկ միջնակարգ դպրոցի յուրաքանչյուր մակարդակի առաջին բաղադրիչի գումարը հաշվարկելու համար տվյալ տարվա համար սահմանված «մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը» բազմապատկվում է համապատասխան հիմնական գործակցով՝ կախված նրանից, թե տվյալ սովորողը որ մակարդակի դասարանում է սովորում, և ստացված գումարը բազմապատկվում է հանրակրթական այդ մակարդակում բոլոր սովորողների թվով: Մասնավորապես, միջնակարգ դպրոցի ավագ մակարդակի համար, օրինակ, 2015թ. ֆինանսավորման բանաձևի առաջին բաղադրիչի գումարը հաշվարկվել է՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը»՝ 124,000 դրամը, բազմապատկելով հիմնական 1.1581 գործակցով, այնուհետև ստացված՝ 143,604 դրամ գումարը բազմապատկելով դպրոցի 10-12-րդ դասարանների բոլոր սովորողների թվով:

Քանի որ դպրոցի տարրական և միջին մակարդակների համար սահմանված հիմնական գործակիցներն ավելի փոքր են (օրինակ, 2015թ. համար համապատասխանաբար 0.8042 և 1.1179), քան ավագ մակարդակի համար սահմանված գործակիցը, բնականաբար, ամբողջ միջնակարգ դպրոցի համար հաշվարկված՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան միջին գումարը» ավելի փոքր է

¹⁶ <Հանրակրթության մասին> ՀՀ օրենք, հոդված 35

¹⁷ ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի հ. 1262-Ն որոշում

(մոդելային դպրոցների օրինակով կատարված մոտավոր հաշվարկներով՝ մոտ 1.04 անգամ), քան դպրոցի միայն ավագ մակարդակի համար հաշվարկված նույն ցուցանիշը: Այդպիսով, օրինակ, 2015թ.-ի համար, եթե միջնակարգ դպրոցի միայն ավագ մակարդակի «մեկ սովորողին ընկնող տարեկան միջին գումարը» կազմել է 143,604 դրամ, ապա ամբողջ միջնակարգ դպրոցի «մեկ սովորողին ընկնող տարեկան միջին գումարը» կազմել է մոտ 138,080 դրամ:

Նմանապես, ավագ դպրոցի ֆինանսավորման բանաձևի առաջին բաղադրիչի ընդհանուր գումարը հաշվարկելու համար տվյալ տարվա համար սահմանված «մեկ սովորողին ընկնող տարեկան գումար» բաղադրիչը բազմապատկվում է տվյալ տարվա ավագ մակարդակի համար սահմանված հիմնական գործակցով, այնուհետև ստացված գումարը բազմապատկվում է տվյալ տարվա ավագ դպրոցների համար սահմանված լրացուցիչ գործակցով, և վերջում, ստացված գումարը բազմապատկվում է ավագ դպրոցի բոլոր սովորողների թվով: Մասնավորապես, ավագ դպրոցի, օրինակ, 2015թ. ֆինանսավորման բանաձևի առաջին բաղադրիչի գումարը հաշվարկվել է՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը»՝ 124,000 դրամը, բազմապատկելով հիմնական 1.1581 գործակցով, այնուհետև ստացված՝ 143,604 դրամ գումարը բազմապատկելով լրացուցիչ 1.14 գործակցով, և վերջում, ստացված՝ 163,709 դրամ գումարը բազմապատկելով ավագ դպրոցի բոլոր սովորողների թվով:

Իհարկե, ավագ դպրոցի ֆինանսավորման բանաձևի առաջին բաղադրիչի գումարի հաշվարկը կարելի է կատարել՝ ցուցաբերելով ավելի պարզ մոտեցում, այն է՝ դպրոցի ավագ մակարդակի համար սահմանված հիմնական գործակիցը բազմապատկվում է ավագ դպրոցի համար սահմանված լրացուցիչ գործակցով, և ստացված՝ 1.32 գործակիցը բազմապատկվում է «մեկ սովորողին ընկնող տարեկան գումարով», և վերջում, ստացված գումարը բազմապատկվում է ավագ դպրոցի բոլոր սովորողների թվով: Մասնավորապես, 2015թ. ֆինանսավորման բանաձևի առաջին բաղադրիչի գումարը հաշվարկվել է՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը»՝ 124,000 դրամը, բազմապատկելով 1.32 գործակցով, և ստացված՝ 163,709 դրամ գումարը բազմապատկելով ավագ դպրոցի բոլոր սովորողների թվով:

Վերոնշյալ հաշվարկը հանգեցնում է այն եզրակացության, որ միջնակարգ դպրոցի համար հաշվարկված՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան միջին գումարը», մոտավոր հաշվարկներով, մոտ (163,709 դրամ: 138,080 դրամ) = 1.18 անգամ փոքր է, քան ավագ դպրոցի համար հաշվարկված նույն ցուցանիշը, այլ կերպ ասած՝ մեկ սովորողի համար ավագ դպրոցը ՀՀ պետական բյուջեից մոտ 18%-ով ավելի է ֆինանսավորվում, քան միջնակարգ դպրոցը:

Հանրակրթական դպրոցի ֆինանսավորման բանաձևում «մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի» հետ բազմապատկվող լրացուցիչ մնացած գործակիցների կիրառման առումով, միջնակարգ և ավագ դպրոցները միմյանցից բացարձակապես չեն տարբերվում, քանի որ դրանք կարող են կիրառվել երկու տեսակի դպրոցների էլ նկատմամբ՝ կախված այն բնակավայրի բարձրադիտությունից, որտեղ գտնվում է տվյալ դպրոցը, և այդ դպրոցի՝ տվյալ բնակավայրում միակը լինելու և մինչև 400 սովորող փաստացի ունենալու հանգամանքներից:

Ըստ սովորողների թվի դպրոցների ֆինանսավորման մեխանիզմի ներդրումը նպատակ էր հետապնդում բարձրացնել դպրոցների կողմից կատարվող ծախսերի նպատակայնությունը՝ ապակենտրոնացնելով ծախսային ուղղությունների վերաբերյալ որոշումների կայացումը, խթանել դպրոցների ջանքերը՝ բարելավելու կրթության որակը և արդյունավետությունը: Փորձը ցույց է տալիս, որ դպրոցների ֆինանսավորման այս մեխանիզմը կարող է արդյունավետ գործել

այն դեպքում, երբ առկա է շահառուների մեծ ծավալ, ինչից էլ հետևում է, որ դպրոցը պետք է անընդհատ ջանքեր գործադրի սովորողներ ներգրավելու ուղղությամբ: Սակայն, վիճակագրական տվյալներով, անկախության տարիներին Հայաստանում տարեց-տարի նվազել և դեռ շարունակվում է նվազել սովորողների թիվը: Հանրակրթական դպրոցների, այդ թվում՝ նաև միջնակարգ և ավագ դպրոցների, հնարավորությունները խիստ սահմանափակ են՝ ավելացնելու կամ գոնե պահպանելու իրենց սովորողների թիվը, որի արդյունքում նրանք հաճախ հայտնվում են դժվարին ֆինանսական իրավիճակում: Ինչպես ցույց է տալիս նախկին տարիների փորձը, պետական ֆինանսավորումը հիմնականում բավարարում է դպրոցների «պարտադիր ծախսերի» կատարմանը և քիչ տեղ է թողնում դրանց զարգացման հնարավորություններին:

Հանրակրթության համակարգում առաջընթաց քայլ կարելի է համարել անցումը ծրագրային բյուջետավորման քաղաքականությանը, որը նպաստում է դպրոցի կողմից կատարվող ծախսերի թափանցիկության, նպատակայնության և հասցեականության բարձրացմանը: Սակայն, մինևույն ժամանակ, անհրաժեշտ է արձանագրել, որ հանրակրթության ոլորտում ծրագրային բյուջետավորման գաղափարախոսությունը, մասնավորապես՝ արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների սահմանման և գնահատման համակարգը, ամբողջությամբ ներդրված չէ դպրոցներում, ինչի պատճառով հնարավոր չէ արդյունավետորեն պլանավորել և իրականացնել դպրոցների ծախսային քաղաքականությունը: Արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների համակարգի թերի լինելը նաև թույլ չի տալիս կազմակերպել կրթական ծրագրերի իրականացման արդյունավետ մոնիթորինգ:

Այդպիսով, դպրոցների գործունեության վերահսկման միակ լծակը հանգում է միայն դպրոցների սովորողների թվերի վերահսկմանը, սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, դա էլ առայժմ կատարյալ հիմքերի վրա չի դրված: Դպրոցներում սովորողների հաշվառման վստահելի համակարգի բացակայությունը ծնում է նաև կոռուպցիոն որոշակի ռիսկեր: Այդ կապակցությամբ ՀՀ ԿԳՆ-ում ներկայումս տարվում են որոշակի աշխատանքներ՝ ստեղծելու դպրոցների սովորողների անհատականացված տվյալների ընդհանուր շտեմարան, որը հնարավորություն կտա բացառելու սովորողի միաժամանակյա հաշվառումը տարբեր դպրոցներում, ինչպես նաև կնպաստի կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերմանը:

Հանրապետության մասշտաբով տվյալների անհասանելիության պատճառով, հնարավոր չէ արժեքավոր վերլուծություններ կատարել ՀՀ բոլոր միջնակարգ և ավագ դպրոցների ընդհանուր պետական ֆինանսավորման և այդ ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ: Նման վերլուծություն կատարվել է սույն ծրագրի շրջանակներում մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների համար՝ վերջիններիս կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա:

Մոդելային միջնակարգ և ավագ դպրոցների կրթական և ֆինանսական վիճակի համեմատական վերլուծությունը և գնահատումը

- Հարցադրում 9. Որքանով է ապահովվում փոքր և միջին մեծության դպրոցներում կրթության իրավունքի հավասար իրացումը:**
- Հարցադրում 10. Արդյո՞ք դպրոցների ֆինանսավորման տարբերությունները խնդիրներ չեն առաջացնում գյուղական համայնքների դպրոցներում, որտեղ հիմնականում գործում են փոքրաթիվ սովորողներով դասարաններ:**
- Հարցադրում 11. Ի՞նչ տարբերություններ կան փոքր, միջին և մեծ (ավագ և միջնակարգ)**

դպրոցների ֆինանսական (եկամտային, ծախսային) ցուցանիշների միջև:

Սույն ծրագրի շրջանակներում, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական պետական 816 միջնակարգ դպրոցներից և ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական պետական 100 ավագ դպրոցներից պատահականության սկզբունքով ընտրվել են մոդելային 5-ական դպրոցներ, այդ թվում Երևան քաղաքից՝ 1-ական, ՀՀ Արագածոտնի մարզից՝ 1-ական, ՀՀ Արարատի մարզից՝ 1-ական, ՀՀ Շիրակի մարզից՝ 1-ական և ՀՀ Տավուշի մարզից՝ 1-ական (աղյուսակներ 2, 3):

Աղյուսակ 2. Մոդելային միջնակարգ դպրոցների ցանկը՝ ըստ ՀՀ մարզերի համայնքների և Երևանի վարչական շրջանների

Հ հ	ՀՀ մարզը (Երևան քաղաքը)	Համայնքը (վարչական շրջանը)	Միջնակարգ դպրոցներ	
			Անվանումը	Կազմակերպա-իրավական ձևը
1.	Երևան	Նոր Նորք	ք. Երևանի թիվ 187 մ/դ	ՊՈԱԿ
2.	Արագածոտն	Թաթուլ	գ. Թաթուլի մ/դ	ՊՈԱԿ
3.	Արարատ	Մխչյան	գ. Մխչյանի մ/դ	ՊՈԱԿ
4.	Շիրակ	Գյումրի	ք. Գյումրու թիվ 18 մ/դ	ՊՈԱԿ
5.	Տավուշ	Գետահովիտ	գ. Գետահովիտի մ/դ	ՊՈԱԿ

Աղյուսակ 3. Մոդելային ավագ դպրոցների ցանկը՝ ըստ ՀՀ մարզերի համայնքների և Երևանի վարչական շրջանների

Հ հ	ՀՀ մարզը (Երևան քաղաքը)	Համայնքը (վարչական շրջանը)	Ավագ դպրոցներ	
			Անվանումը	Կազմակերպա-իրավական ձևը
1.	Երևան	Կենտրոն	ք. Երևանի թիվ 114 ա/դ	ՊՈԱԿ
2.	Արագածոտն	Թալին	ք. Թալինի ա/դ	ՊՈԱԿ
3.	Արարատ	Մասիս	ք. Մասիսի թիվ 5 ա/դ	ՊՈԱԿ
4.	Շիրակ	Ախուրյան	գ. Ախուրյանի Ն. Աղբալյանի անվ. ա/դ	ՊՈԱԿ
5.	Տավուշ	Իջևան	ք. Իջևանի թիվ 2 ա/դ	ՊՈԱԿ

Ընտրված մոդելային 10 դպրոցներից ծրագրի կողմից հավաքագրվել է վիճակագրական տեղեկատվություն՝ դրանց վերաբերյալ բացարձակ ցուցանիշների տեսքով (հավելված 3)՝

- **Ընդհանուր ցուցանիշներ.** Դպրոցի նախագծային հզորությունը, փաստացի սովորողների և դասարանների թվերը՝ ըստ 1-4, 5-9, 10, 11, 12-րդ դասարանների, աշխատողների թիվը, այդ թվում՝ մանկավարժների թիվը և ոչ մանկավարժական աշխատողների թիվը (2014թ. սեպտեմբերի դրությամբ):

- **Ֆինանսական ցուցանիշներ.** Դպրոցի 2014թ. ֆինանսական տարվա (հունվար-դեկտեմբեր) ընթացիկ և կապիտալ փաստացի ծախսերը (դպրոցների 2014թ. եկամուտների և ծախսերի փաստացի կատարման տարեկան հաշվետվությունների տվյալների օգտագործմամբ):

Կրթության համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր հիմնախնդիրներից և նախապայմաններից է ցուցանիշների արդյունավետ համակարգի ներդրումը, որը հնարավորություն կտա մշակել փաստերի վրա հիմնված քաղաքականություններ ¹⁸ : Այդ դիտանկյունից մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների կրթական և ֆինանսական փաստացի վիճակը բնութագրելու, վերլուծելու և գնահատելու, ինչպես նաև դրանք իրար հետ համեմատելու համար անհրաժեշտ է, դպրոցների վերաբերյալ տեղեկատվության (բացարձակ ցուցանիշների տեսքով) օգտագործմամբ, սահմանել, հաշվարկել և գնահատել որոշակի հարաբերական ցուցանիշներ: Այդ նպատակով, դիտարկվել, հաշվարկվել և գնահատվել են կրթության համակարգային ոչ ֆինանսական և ֆինանսական մի շարք ցուցանիշներ, որոնց սահմանման և գնահատման մեթոդաբանությունը և դրա կիրառումից ստացված արդյունքներն ամփոփ տեսքով բերված են **հավելված 3-ում**:

Կրթության համակարգային ոչ ֆինանսական ցուցանիշներ

Ցուցանիշ 1 (Ց1). Դպրոցի ծանրաբեռնվածությունը / թերբեռնվածությունը սովորողներով

Մեր փորձագիտական գնահատմամբ, մոդելային 5 միջնակարգ դպրոցներից 3-ն, իրենց նախագծային հզորությամբ, համարվում են մեծ դպրոցներ (նախատեսված սովորողների թիվը գերազանցում է 400-ը), 1-ը՝ միջին դպրոց (նախատեսված սովորողների թիվը գտնվում է 200-400-ի միջակայքում) (Գետահովիտի՝ 320 սովորող) և 1-ը՝ փոքր դպրոց (նախատեսված սովորողների թիվը փոքր է 200-ից) (Թաթուլի՝ 150 սովորող): Սակայն, մոդելային 5 միջնակարգ դպրոցներն էլ հիմնականում զգալիորեն թերբեռնված են (դրանց փաստացի սովորողների թվերը գտնվում են իրենց նախագծային հզորության 53-73%-ի սահմաններում, որոնց միջինը կազմում է մոտ 60%):

Համապատասխանաբար, մոդելային 5 ավագ դպրոցներից 2-ն, իրենց նախագծային հզորությամբ, համարվում են մեծ դպրոցներ, 2-ը՝ միջին դպրոցներ (Իջևանի՝ 400 սովորող, Ախուրյանի՝ 244 սովորող), և 1-ը՝ փոքր դպրոց (Թալինի՝ 180 սովորող): Սակայն, մոդելային 5 ավագ դպրոցները ևս իրականում նկատելիորեն թերբեռնված են (դրանց փաստացի սովորողների թվերը գտնվում են իրենց նախագծային հզորության 50-94%-ի սահմաններում, որոնց միջինը կազմում է մոտ 76%):

Համեմատելով միջնակարգ և ավագ դպրոցների թերբեռնվածության աստիճանները (տոկոսները), կարելի է նկատել, որ միջնակարգ դպրոցներն ակնհայտորեն ավելի թերբեռնված են, քան ավագ դպրոցները (տե՛ս հավելված 3): Այս իրողությունը լուրջ մտահոգության պատճառ պետք է հանդիսանա հանրակրթության բնագավառի պատկան մարմինների համար:

Ցուցանիշ 2 (Ց2). Դպրոցի 10-12-րդ դասարանների միջին խտությունը

Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցներից ոչ մեկի 10-12-րդ դասարանների միջին խտությունը բարձր չէ ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերին շեմից՝ 25 սովորողից: Սակայն,

¹⁸ <Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր> ՀՀ օրենք, հավելված, կետ 54, էջ 23

մողելային 5 միջնակարգ դպրոցներից միայն Թաթուլ գյուղական համայնքի միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարանների միջին խտությունը, 2014թ. սեպտեմբերի դրությամբ, շատ փոքր է ՀՀ օրենսդրությամբ ներքին շեմ սահմանված 20 սովորողից՝ կազմելով ընդամենը 6.0 սովորող¹⁹: Իսկ մողելային 5 ավագ դպրոցներից 2-ի (Թալինի քաղաքային և Ախուրյանի գյուղական համայնքների) 10-12-րդ դասարանների միջին խտությունը, 2014թ. սեպտեմբերի դրությամբ, կազմել է համապատասխանաբար 16.9 սովորող և 19.6 սովորող, որոնք ևս փոքր են (Ախուրյանի դեպքում՝ աննշան) ՀՀ օրենսդրությամբ ներքին շեմ սահմանված 20 սովորողից:

Համեմատելով մողելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների միջին խտության ցուցանիշների արժեքները, պետք է նկատել, որ միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարանների խտություններն, ընդհանուր առմամբ, ավելի ցածր են, քան ավագ դպրոցների նույն ցուցանիշների արժեքները (տե՛ս հավելված 3): Ցուցանիշ 2-ի միջին արժեքները մողելային միջնակարգ և ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների համար կազմել են համապատասխանաբար 17.8 սովորող և 21.6 սովորող, որը նշանակում է, որ, համաձայն ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի, մողելային 5 միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարաններին մոտ 1.21 անգամ ավելի քիչ ֆինանսական միջոցներ են հատկացվել պետական բյուջեից, քան մողելային 5 ավագ դպրոցներին:

Ցուցանիշ 3 (Ց3). Դպրոցի 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը

Մողելային 10 դպրոցներն՝ ըստ 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թվի, դասակարգվել են հետևյալ խմբերի՝

- 1) փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է 14.5 սովորողից²⁰)՝ 1 դպրոց (Երևանի Նոր Նորք վ/շ թ. 187 մ/դ),
- 2) փաստացի սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է կամ հավասար 10 սովորողից և փոքր է կամ հավասար 14.5 սովորողից)՝ 4 դպրոց, այդ թվում՝ 2 միջնակարգ դպրոց և 2 ավագ դպրոց,
- 3) փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ (1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը փոքր է 10 սովորողից)՝ 5 դպրոց, այդ թվում՝ 2 միջնակարգ դպրոց և 3 ավագ դպրոց:

Այս ցուցանիշով ուշագրավ հանգամանք է հանդիսանում այն, որ փաստացի սովորողներով բարձր և միջին ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցները (անկախ այն հանգամանքից, դրանք միջնակարգ, թե ավագ դպրոց են) հիմնականում գտնվում են համեմատաբար խոշոր քաղաքային համայնքներում, իսկ փաստացի սովորողներով ցածր

¹⁹ Թաթուլի միջնակարգ դպրոցի բոլոր դասարանների միջին խտությունը կազմել է ընդամենը 6.9 սովորող, այդ թվում տարրական դպրոցինը՝ 5.5 սովորող, միջին դպրոցինը՝ 8.6 սովորող, և ավագ դպրոցինը՝ 6.0 սովորող:

²⁰ Համաձայն <Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր> ՀՀ օրենքի հավելվածի 51-րդ կետի (էջ 22)՝ <Ոլորտի բարեփոխումների շնորհիվ հանրակրթական դպրոցներում «աշակերտ/ուսուցչական դրույք» և «աշակերտ/ոչ ուսուցչական դրույք» հարաբերակցությունների մակարդակը 2008-2009 թվականներին հասցվել է համապատասխանաբար 14.5-ի և 24.1-ի՝ 2007 թվականի 14.0 և 23.2-ի դիմաց: «Աշակերտ/ուսուցչական դրույք» ցուցանիշը հիմնականում պայմանավորված է դասարանի միջին խտությամբ, քանի որ ուսուցչի ծանրաբեռնվածությունը և դասաժամերի քանակը կայուն ցուցանիշներ են:>

ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցները՝ փոքր քաղաքային և գյուղական համայնքներում (որոշ բացառություններով, տե՛ս հավելված 3):

Ընդհանուր առմամբ, մոդելային 10 դպրոցների համար գնահատված այս ցուցանիշի արժեքների վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի ուղիղ համեմատական կապ (աննշան շեղումներով) դպրոցի փաստացի սովորողների թվի և 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թվի միջև՝ անկախ այն բանից, դպրոցը միջնակարգ է, թե ավագ: Սա նշանակում է, որ, մոտավորապես հավասար փաստացի սովորողների թվերի պարագայում, միջնակարգ և ավագ դպրոցների ֆինանսավորումների տարբերությունը կայանում է միայն ավագ դպրոցների համար Համատեղ հրամանում սահմանված լրացուցիչ գործակցի (1.14) կիրառումը կամ չկիրառումը: Մնացած առումներով երկու տեսակի դպրոցների ֆինանսավորումների միջև այլ տարբերություններ չկան:

Ցուցանիշ 4 (Յ4). Դպրոցի 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը

Մոդելային 10 դպրոցներն՝ ըստ 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թվի, դասակարգվել են հետևյալ խմբերի՝

- 1) փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ (1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է 30 սովորողից)՝ 4 դպրոց, այդ թվում՝ 3 միջնակարգ դպրոց և 1 ավագ դպրոց,
- 2) փաստացի սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ (1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը մեծ է կամ հավասար 20 սովորողից և փոքր է կամ հավասար 30 սովորողից)՝ 2 դպրոց, այդ թվում՝ 1 միջնակարգ դպրոց և 1 ավագ դպրոց,
- 3) փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ (1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը փոքր է 20 սովորողից)՝ 4 դպրոց, այդ թվում՝ 1 միջնակարգ դպրոց և 3 ավագ դպրոց:

Այս ցուցանիշով մոդելային 10 դպրոցները միմյանցից խստորեն տարբերվում են՝ ցուցանիշի արժեքը տատանվում է բավականին լայն միջակայքում՝ 10.5 – 40 սովորող: Փաստացի սովորողներով բարձր և միջին ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցները (անկախ այն հանգամանքից, դրանք միջնակարգ, թե ավագ դպրոց են) կրկին հիմնականում գտնվում են համեմատաբար խոշոր քաղաքային համայնքներում, իսկ փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցները՝ փոքր քաղաքային և գյուղական համայնքներում (որոշ բացառություններով, տե՛ս հավելված 3):

Վերլուծելով և համեմատելով մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների ցուցանիշ 4-ի արժեքները, տեսնում ենք, որ դրանք միմյանցից շատ չեն տարբերվում՝ մոտավորապես հավասար փաստացի սովորողների թվաքանակ ունենալու պարագայում:

Համադրելով մոդելային 10 դպրոցների սովորողների փաստացի թվերը և գնահատված ոչ ֆինանսական ցուցանիշները՝ կարելի է որոշակի եզրակացությունների հանգել մոդելային միջնակարգ և ավագ դպրոցների կրթական համակարգային տարբերությունների հարցում (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների համեմատումը՝ դրանց սովորողների փաստացի թվերի (Յ0) և 31-34-ի արժեքների համադրման միջոցով, ըստ սովորողների փաստացի թվերի նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Դպրոցի սովորողների փաստացի թիվը (Յ0)	Յ1-ի արժեքը, %	Յ2-ի արժեքը, 10-12-րդ դաս. սով. միջ. թիվը	Յ3-ի արժեքը, սով. միջ. թիվը	Յ4-ի արժեքը, սով. միջ. թիվը
1.	Երևանի Կենտրոն վ/շ թ. 114 ա/դ	1010	84.2	22.9	10.5	33.7
2.	Երևանի Նոր Նորք վ/շ թ. 187 մ/դ	588	53.5	21.3	14.7	30.9
3.	Արարատի մարզի Մխչյանի մ/դ	556	55.6	21.3	10.7	39.7
4.	Շիրակի մարզի Գյումրու թ. 18 մ/դ	488	72.8	20.3	11.6	30.5
5.	Տավուշի մարզի Իջևանի թ. 2 ա/դ	376	94.0	23.5	9.2	26.9
6.	Արարատի մարզի Մասիսի թ. 5 ա/դ	250	50.0	25.0	10.0	17.9
7.	Տավուշի մարզի Գետահովիտի մ/դ	231	72.2	20.3	7.7	21.0
8.	Շիրակի մարզի Ախուրյանի ա/դ	137	56.1	19.6	8.1	10.5
9.	Արագածոտնի մարզի Թայինի ա/դ	135	75.0	16.9	4.6	12.3
10.	Արագածոտնի մարզի Թաթուլի մ/դ	83	55.3	6.0	3.6	13.8
	Միջնակարգ 5 դպրոցների 30-34-ի միջին արժեքները	389	60.0	17.8	9.7	27.2
	Ավագ 5 դպրոցների 30-34-ի միջին արժեքները	382	75.6	21.6	8.5	20.3

Մեր փորձագիտական մոտեցմամբ, մոդելային 10 դպրոցներն՝ ըստ սովորողների փաստացի թվի (Յ0) և 31-34-ի արժեքների, ընդհանուր առմամբ, դասակարգվել են երեք հիմնական խմբերում (լուսացույցի երեք գույների օրինակով)՝

- կանաչ գույն** – սովորողների փաստացի թիվը կամ տվյալ ցուցանիշի արժեքը բավարարում է հանրակրթության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին ու նորմատիվներին կամ, մեր փորձագիտական գնահատմամբ, գտնվում է ողջամիտ սահմաններում (այլ կերպ ասած՝ ցուցանիշի արժեքն անհանգստացնող չէ, <ճանապարհը> թույլատրվում է),
- դեղին գույն** - սովորողների փաստացի թիվը կամ տվյալ ցուցանիշի արժեքն ինչ-որ չափով չի բավարարում հանրակրթության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին ու նորմատիվներին կամ, մեր փորձագիտական գնահատմամբ, գտնվում է ողջամիտ սահմաններից ինչ-որ չափով դուրս (այլ կերպ ասած՝ ցուցանիշի արժեքը զգուշացնող է, <ճանապարհը> որոշ ժամանակ անց կամ կթույլատրվի, կամ կարգելվի),
- կարմիր գույն** - սովորողների փաստացի թիվը կամ տվյալ ցուցանիշի արժեքն ընդհանրապես չի բավարարում հանրակրթության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին ու նորմատիվներին կամ, մեր փորձագիտական գնահատմամբ, գտնվում է ողջամիտ սահմաններից ակնհայտորեն դուրս (այլ կերպ ասած՝ ցուցանիշի արժեքը խիստ անհանգստացնող է, <ճանապարհն> արգելվում է):

Այս մոտեցմամբ, մոդելային 10 դպրոցներից 5-ի (3 միջնակարգ և 2 ավագ) սովորողների փաստացի թիվը և 32-34 արժեքները գտնվում են ողջամիտ սահմաններում և նրանց գործունեության հետագա <ճանապարհը> թույլատրելի է: Այդ 5 դպրոցներից միայն 2 ավագ

դպրոցների 31-ի արժեքներն են ողջամիտ սահմաններում, իսկ 3 միջնակարգ դպրոցներից 2-ի (Երևանի Նոր Նորք վ/2 թ. 187 մ/դ և Արարատի մարզի Մխչյանի մ/դ) 31-ի արժեքները խիստ անհանգստացնող են (դրանց թերբեռնվածությունը մոտեցել է 50% սահմանագծին) և 1-ի (Գյումրու թիվ 18 մ/դ) 31-ի արժեքը զգուշացնող է և, այդ միտումը շարունակվելու դեպքում, որոշ ժամանակ անց այն նույնպես կարող է դառնալ խիստ անհանգստացնող:

Սողեւային 10 դպրոցներից մնացած 5-ի (2 միջնակարգ և 3 ավագ) սովորողների փաստացի թիվը և 31-34 արժեքները հիմնականում ողջամիտ սահմաններից ինչ-որ չափով կամ ակնհայտորեն դուրս են և նրանց գործունեության հետագա <ճանապարհը> կամ արդեն արգելման ենթակա է, կամ որոշ ժամանակ անց կարող է դառնալ այդպիսին: Այսպես, Արագածոտնի մարզի Թաթուլի միջնակարգ դպրոցի և՛ սովորողների փաստացի թիվը, և՛ 31-34-ի արժեքները ողջամիտ սահմաններից բավականին դուրս են (բոլորը կարմիր գույնի են), դա խիստ անհանգստացնող է և այդ դպրոցի հետագա գործունեությունը խիստ հարցականի տակ է գնահատվում: Վտանգավոր (զգուշացնող) գոտում են գտնվում նաև Արագածոտնի մարզի Թալինի և Շիրակի մարզի Ախուրյանի ավագ դպրոցները (դրանց սովորողների փաստացի թիվերը և 31-34-ի արժեքները դեղին կամ կարմիր գույնի են), որից դուրս գալու համար այդ դպրոցների տնօրինությունները հիմնականից պետք է լրջորեն զբաղվեն և որոշակի ջանքեր գործադրեն՝ իրենց դպրոցի կրթական համակարգային անբարենպաստ վիճակը շտկելու համար:

Կրթության ֆինանսական ցուցանիշներ

Ցուցանիշ 5. (35) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ ընդհանուր եկամուտները

Ցուցանիշ 6. (36) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ պետական պատվերից եկամուտները

Սողեւային 10 դպրոցների համար գնահատված 35-ի և 36-ի արժեքները, որպես օրինաչափություն, հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի (և՛ միջնակարգ, և՛ ավագ) սովորողների փաստացի թվին, այսինքն ինչքան փոքր է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ են 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես ընդհանուր եկամուտներն (35-ի արժեքը), այնպես էլ պետական պատվերից ստացվող եկամուտները (36-ի արժեքը) և, ընդհակառակը, ինչքան մեծ է դպրոցի սովորողների թիվը, այնքան փոքր են 35-ի և 36-ի արժեքները:

Սողեւային 5 միջնակարգ դպրոցների ֆինանսավորման (եկամտային) ցուցանիշների գնահատման հիմնական արդյունքները հետևյալն են (տե՛ս հավելված 3)՝

- 1 սովորողին ընկնող՝ միջնակարգ դպրոցների ընդհանուր փաստացի եկամուտները և պետական պատվերից փաստացի եկամուտները տատանվում են բավականին մեծ միջակայքերում՝ համապատասխանաբար 152.3 – 418.0 և 150.9 – 418.0 հազ. դրամ,
- 1 սովորողին ընկնող՝ միջնակարգ դպրոցների պետական պատվերից միջին եկամուտները կազմում են այդ դպրոցների ընդհանուր միջին եկամուտների 99.9%-ը, իսկ դրանց այլ միջին եկամուտները՝ ընդամենը 0.1%-ը,
- Գետահովիտի և Թաթուլի միջնակարգ դպրոցներն իրենց բնակավայրերում միակ միջնակարգ դպրոցներն են և փաստացի ունեն 400-ից պակաս սովորողներ, հետևաբար օգտվում են Համատեղ հրամանում սահմանված լրացուցիչ գործակցից՝ 1.2:

Սողեւային 5 ավագ դպրոցների ֆինանսավորման (եկամտային) ցուցանիշների գնահատման հիմնական արդյունքները հետևյալն են (տե՛ս հավելված 3)՝

- 1 սովորողին ընկնող՝ ավագ դպրոցների ընդհանուր փաստացի եկամուտները և պետական պատվերից փաստացի եկամուտները կրկին տատանվում են բավականին մեծ միջակայքերում՝ համապատասխանաբար 206.9 – 335.7 և 195.5 – 335.7 հազ. դրամ,
- 1 սովորողին ընկնող՝ ավագ դպրոցների պետական պատվերից միջին եկամուտները կազմում են այդ դպրոցների ընդհանուր միջին եկամուտների 99.0%-ը, իսկ դրանց այլ միջին եկամուտները՝ ընդամենը 1.0%-ը,
- մոդելային 5 ավագ դպրոցներն էլ օգտվում են Համատեղ հրամանում ավագ դպրոցների համար սահմանված լրացուցիչ գործակցից՝ 1.14,
- Ախուրյանի և Թալինի ավագ դպրոցներն իրենց բնակավայրերում միակ ավագ դպրոցներն են և փաստացի ունեն 400-ից պակաս սովորողներ, հետևաբար օգտվում են Համատեղ հրամանում սահմանված լրացուցիչ գործակցից՝ 1.2:

Համեմատելով մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների եկամտային ցուցանիշների (35-ի և 36-ի) արժեքները, պետք է նկատել դրանց միջև հետևյալ տարբերությունները՝

- 35-ի և 36-ի արժեքների տատանման միջակայքերի ներքին շեմերն ավելի բարձր են ավագ դպրոցների համար, քան միջնակարգ դպրոցների համար (ի հաշիվ Համատեղ հրամանում ավագ դպրոցների համար սահմանված լրացուցիչ գործակցի՝ 1.14 և միջնակարգ դպրոցում տարրական և միջին դասարանների առկայության, որոնց ֆինանսավորման հիմնական գործակիցները փոքր են ավագ դասարանների ֆինանսավորման հիմնական գործակցից),
- մոդելային միջնակարգ և ավագ դպրոցների սովորողների փաստացի միջին թվերը մոտավորապես հավասար են (համապատասխանաբար 389 և 382 սովորող), այդ պարագայում մոդելային 5 ավագ դպրոցների 35-ի միջին արժեքը մոտ 1.17 անգամ մեծ է մոդելային 5 միջնակարգ դպրոցների 35-ի միջին արժեքից, իսկ մոդելային 5 ավագ դպրոցների 36-ի միջին արժեքը մոտ 1.16 անգամ մեծ է մոդելային 5 միջնակարգ դպրոցների 36-ի միջին արժեքից (այսինքն՝ մոտ 1.02-1.03 անգամ ավելի շատ, քան սահմանված է Համատեղ հրամանում ավագ դպրոցների համար լրացուցիչ գործակցով՝ 1.14):

Ցուցանիշ 7. (37) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ ընթացիկ ընդհանուր ծախսերը

Ցուցանիշ 8. (38) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը

Ցուցանիշ 9. (39) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ դպրոցի պահպանման ծախսերը

Մոդելային 10 դպրոցների համար գնահատված 37-ի և 38-ի արժեքները ևս, որպես օրինաչափություն, ինչպես 35-ի և 36-ի դեպքում էր, հիմնականում հակադարձ համեմատական են դպրոցի սովորողների փաստացի թվին, այսինքն ինչքան փոքր է դպրոցի սովորողների թիվը, այնքան մեծ են 1 սովորողին ընկնող՝ դպրոցի ինչպես ընթացիկ ընդհանուր ծախսերն, այնպես էլ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը և ընդհակառակը:

Սակայն, ի տարբերություն 37-ի և 38-ի, 39-ի դեպքում վերոնշյալ օրինաչափությունը չի նկատվում, այդ ցուցանիշը խիստ համեմատական կապ չունի դպրոցի սովորողների փաստացի թվի հետ: Այսինքն, տարբեր դպրոցներ տարբեր չափով ծախսեր են կատարում դպրոցի պահպանման գծով՝ կախված դպրոցի ոչ մանկավարժական աշխատողների թվից, տարածքի չափից, տվյալ բնակավայրի բնակլիմայական պայմաններից, տվյալ տարում դպրոցում

կատարվելիք ընթացիկ նորոգման կամ այլ աշխատանքների կատարման անհրաժեշտությունից և նմանատիպ այլ գործոններից:

Մոդելային 5 միջնակարգ դպրոցների ծախսային ցուցանիշների գնահատման հիմնական արդյունքները հետևյալն են (տե՛ս հավելված 3)՝

- 1 սովորողին ընկնող՝ միջնակարգ դպրոցների ընթացիկ ընդհանուր և աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը տատանվում են բավականին մեծ միջակայքերում՝ համապատասխանաբար 142.3 – 419.1 և 124.2 – 393.7 հազ. դրամ,
- 1 սովորողին ընկնող՝ միջնակարգ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերում աշխատողների աշխատավարձի գծով միջին ծախսերը կազմում են 92.5%-ը, իսկ դպրոցների պահպանման միջին ծախսերը՝ ընդամենը 7.5%-ը:

Մոդելային 5 ավագ դպրոցների ծախսային ցուցանիշների գնահատման հիմնական արդյունքները հետևյալն են (տե՛ս հավելված 3)՝

- 1 սովորողին ընկնող՝ ավագ դպրոցների ընթացիկ ընդհանուր և աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը ևս տատանվում են բավականին մեծ միջակայքերում՝ համապատասխանաբար 201.7 – 312.7 և 184.3 – 290.6 հազ. դրամ,
- 1 սովորողին ընկնող՝ ավագ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերում աշխատողների աշխատավարձի գծով միջին ծախսերը կազմում են 91.6%-ը, իսկ դպրոցների պահպանման միջին ծախսերը՝ ընդամենը 8.4%-ը:

Համեմատելով մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների ծախսային ցուցանիշների (87-89-ի) արժեքները, պետք է նկատել դրանց միջև հետևյալ տարբերությունները՝

- 87-ի և 88-ի արժեքների միջիններն ավելի բարձր են ավագ դպրոցների համար (համապատասխանաբար 1.15 և 1.14 անգամ), քան միջնակարգ դպրոցների համար, որը մոտավորապես մոտենում է Համատեղ հրամանում ավագ դպրոցների համար սահմանված լրացուցիչ գործակցին՝ 1.14,
- ավագ դպրոցների 89-ի միջին արժեքը մոտ 1.29 անգամ մեծ է միջնակարգ դպրոցների 89-ի միջին արժեքից (դրանց մոտավորապես հավասար սովորողների փաստացի թվերի պարագայում), այսինքն ավագ դպրոցների մեկ սովորողին ընկնող պահպանման ծախսերը մոտ 29%-ով գերազանցում են միջնակարգ դպրոցների մեկ սովորողին ընկնող պահպանման ծախսերին:

Ընդհանուր առմամբ, մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների ընթացիկ ընդհանուր միջին ծախսերի մոտ 92%-ը կատարվում է միայն մեկ ուղղությամբ՝ աշխատողների աշխատավարձերի վճարման գծով, և միայն մոտ 8%-ը՝ դպրոցի պահպանման ծախսերի գծով:

2014թ. ընթացքում մոդելային 10 դպրոցներից 9-ն ընդհանրապես չեն կատարել կապիտալ ծախսեր, միայն Երևանի Նոր Նորք վ/շ թիվ 187 միջնակարգ դպրոցն է կատարել կապիտալ ծախսեր՝ 745.0 հազ. դրամի չափով, որոնց մասնաբաժինը դպրոցի ընդհանուր ծախսերում կազմել է ընդամենը 0.9%: Սա նշանակում է, որ Հայաստանում կան միայն բացառիկ հանրակրթական դպրոցներ, որոնք գործող ֆինանսավորման պայմաններում ի վիճակի են կատարել կապիտալ ծախսեր՝ դպրոցի զարգացման նպատակով:

Եզրակացություններ

Կատարված վերլուծության հիմնական եզրակացություններն են՝

1. Առանձնացված ավագ և միջնակարգ դպրոցների միջև կան ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Ընդհանրություններից են՝

ա. Միջնակարգ դպրոցի աշակերտները հնարավորություն ունեն սովորել կրթական այն ծրագրով, որով սովորում են ավագ դպրոցի ընդհանուր հոսքի աշակերտները

բ. Դպրոցների ավարտական և միասնական քննությունների պահանջները սահմանելիս, հիմք են ընդունված միջնակարգ դպրոցի կրթական չափորոշչային պահանջները: Այս հարցում կան որոշ վերապահումներ այն առումով, որ ամեն դեպքում ավագ դպրոցի հոսքերում սովորող աշակերտները հնարավորություն ունեն ուսումնասիրելու որոշ առարկաներ ավելի խորությամբ և շատ ժամաքանակով:

գ. ՀՀ օրենսդրությամբ միջնակարգ դպրոցին թույլատրված է իրականացնել հոսքային կրթություն²¹: :

Տարբերություններից են՝

ա. Միջնակարգ դպրոցների ավագ դասարաններում աշակերտների ոչ բավարար քանակի պատճառով, այդ դպրոցների աշակերտները զրկված են հոսքային և ենթահոսքային կրթության իրավունքից:

բ. Ավագ և միջնակարգ դպրոցների շրջանավարտների 9-րդ դասարանի և միասնական քննական արդյունքների տարբերությունները շատ առարկաների դեպքում էական են:

գ. դ. Դպրոցից հետո ուսումը բուհում կամ ՄՄՈՒՀ-ում շարունակող մարզերի ուսանողների թվիը զիջում է Երևանից սովորողների թվին (բացառությամբ, Սյունիքի մարզի) :

ե. Քաղաքների դպրոցների շրջանավարտների ցուցանիշներն էապես ավելի բարձր են, քան գյուղերի դպրոցների շրջանավարտների ցուցանիշները:

3. Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրի այն պահանջը, որ դպրոցների ընտրության հարցում պետք է հաշվի առնել դրանց աշխարհագրական դիրքը, շենքային պայմանները, դպրոցի հեղինակությունը, ուսուցիչների մասնագիտական կարողությունները, գործնականում չեն կատարվել:

4. Ավագ դպրոցների ստեղծումը չի կարող նպաստել մասնավոր պարապմունքների նվազմանը, քանի որ կրկնուսույցի մոտ հաճախելու հիմնական պատճառներից մեկը միջին դպրոցի ծրագրի թերյուրացումն է: Ավագ դպրոցն այս խնդիրը չի կարող լուծել, քանի որ ունի իր կրթական ծրագիրը: Մինչդեռ, կրկնուսույցը կարող է այս խնդիրը լուծել, քանի որ դիմորդի հետ սկսում է պարապել գրոյից:

5. Դպրոցների ավագ դասարաններում կրթության որակի բարձրացման գլխավոր նախապայմաններից մեկը հիմնական դպրոցի կայացումն է: Ավագ դասարանները հանրակրթության առավել նկատելի օղակն են, քանի որ հենց այս աստիճանում են արձանագրվում հանրակրթության վերջնական արդյունքները և բոլոր տեսակի խնդիրների ու բացթողումների պատասխանատվությունը հաճախ վերագրվում է հենց ավագ դասարաններին: Մինչդեռ, օբյեկտիվորեն, ավագ դասարաններ հաճախում են արդեն

²¹ Որպես օրինակ կարելի է բերել Գեղարքունիքի մարզի Ծաղկունքի բաց դպրոցը, որը միջնակարգ դպրոց է և ունի ագրարային հոսքեր: Մակայն, դա հնարավոր է եղել իրականացնել դպրոցի հովանավորների ջանքերով:

ձևավորված, ուսումնական որոշակի հաջողություններ և ձախողումներ արձանագրած աշակերտներ, որոնց ուսումնական կենսագրության մեջ արմատական փոփոխություններ կատարելը շատ դժվար է: Ավագ դասարանների համար շատ դժվար է լուրջ արդյունքների հասնել, եթե հիմնական դպրոցում չեն դրվել որակյալ կրթության հիմքերը: Ճիշտ չէ այն քաղաքականությունը, որ ավագ դասարանների զարգացման համար անհրաժեշտ է միայն դրանց վրա ներդրում կատարել:

6. Հանրակրթական դպրոցների ըստ սովորողների թվի ֆինանսավորման մեխանիզմն արդյունավետ գործում է միայն շահառուների մեծ թվաքանակի առկայության դեպքում: Այս առումով, միջնակարգ դպրոցները կարողանում են համեմատաբար ավելի ճկուն գործել ՀՀ պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցների բաշխման հարցում (շնորհիվ դպրոցի 1-12-րդ դասարաններում սովորողների ընդհանուր մեծ թվի), քան ավագ դպրոցները (դպրոցի 10-12-րդ դասարաններում սովորողների սահմանափակ թվի պատճառով):
7. Ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևը բովանդակային առումով չի բխում հանրակրթության սահմանված նպատակներից՝ կրթական ծառայություններից ակնկալվող որակական արդյունքից, որը հանգեցնում է պետական բյուջետային միջոցների ծախսման զգալի անարդյունավետության:
8. Որևէ իրավական ակտով հաստատված չէ հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի **Սգ** և **Պգ** գործակիցների յուրաքանչյուր տարվա կոնկրետ մեծությունների հաշվարկման մեթոդաբանությունը:
9. Հանրակրթական դպրոցի ֆինանսավորման բանաձևում միջնակարգ դպրոցի համար հաշվարկված՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը», մոտավոր հաշվարկներով, մոտ 18%-ով փոքր է ավագ դպրոցի համար հաշվարկված նույն ցուցանիշից: Ֆինանսավորման բանաձևում այդ բաղադրիչի հաշվարկման համար, բացի ավագ դպրոցի տեսակը հաշվի առնելու հիմնական գործակիցից, մնացած (այդ թվում՝ լրացուցիչ) գործակիցների կիրառման առումով, միջնակարգ և ավագ դպրոցները միմյանցից բացարձակապես չեն տարբերվում:
10. Հանրակրթական դպրոցների պետական ֆինանսավորումը հիմնականում բավարարում է դպրոցների հիմնական «պարտադիր ծախսերի» կատարմանը՝ քիչ տեղ թողնելով դրանց զարգացման հարցերին: Մասնավորապես, դպրոցի ֆինանսավորման բանաձևը չի նախատեսում գումարներ դպրոցի վերազինման, ուսուցիչների նպատակային վերապատրաստման, սովորողների արտադասարանական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման և այլ ուղղություններով:
11. Հանրակրթության ոլորտում ծրագրային բյուջետավորումը (մասնավորապես՝ արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների սահմանման և գնահատման համակարգը) ամբողջությամբ ներդրված չէ դպրոցներում, ինչի պատճառով հնարավոր չէ արդյունավետորեն պլանավորել և իրականացնել դպրոցների ծախսային քաղաքականությունը, կազմակերպել կրթական ծրագրերի և միջոցառումների իրականացման մոնիթորինգ և գնահատում:
12. Հանրապետության մասշտաբով տվյալների անհասանելիության պատճառով, հնարավոր չէ արժեքավոր վերլուծություններ կատարել ՀՀ բոլոր միջնակարգ և ավագ դպրոցների պետական ֆինանսավորման և այդ ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ:
13. Մոդելային 5 միջնակարգ դպրոցներն ավելի թերբեռնված են (դրանց փաստացի սովորողների թվերը գտնվում են իրենց նախագծային հզորության 53-73%-ի սահմաններում, որոնց միջինը

կազմում է մոտ 60%), քան մոդելային 5 ավագ դպրոցները (համապատասխանաբար 50-94%-ի սահմաններում, միջինը՝ մոտ 76%):

14. Մոդելային 5 ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների միջին խտությունը (21.6 սովորող) մոտ 1.21 անգամ բարձր է մոդելային 5 միջնակարգ դպրոցների նույն ցուցանիշից (17.8 սովորող), որը նշանակում է, որ մոդելային 5 միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարաններին մոտ 1.21 անգամ ավելի քիչ ֆինանսական միջոցներ են հատկացվել պետական բյուջեից, քան մոդելային 5 ավագ դպրոցներին:
15. Փաստացի սովորողներով բարձր և միջին ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով և ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցները (անկախ այն հանգամանքից, դրանք միջնակարգ են, թե ավագ) հիմնականում գտնվում են համեմատաբար խոշոր քաղաքային համայնքներում, իսկ փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով և ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցները՝ հիմնականում փոքր քաղաքային և գյուղական համայնքներում:
16. Մոդելային 10 դպրոցները միայն ցից խստորեն տարբերվում են 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների թվով, որը տատանվում է բավականին լայն միջակայքում՝ 10–40 սովորող:
17. Մոդելային 10 դպրոցներից միայն կեսի՝ 5-ի (3 միջնակարգ և 2 ավագ) գնահատված ոչ ֆինանսական ցուցանիշների արժեքները գտնվում են ողջամիտ սահմաններում, մնացած 5-ի (2 միջնակարգ և 3 ավագ) ոչ ֆինանսական ցուցանիշների արժեքները հիմնականում ողջամիտ սահմաններից բավականին դուրս են և, նման միտումը շարունակվելու դեպքում, նրանց հետագա գործունեության հարցը լուրջ քննարկման առարկա է:
18. Մոդելային միջնակարգ դպրոցների 1 սովորողին ընկնող՝ պետական պատվերից միջին եկամուտները կազմում են դրանց ընդհանուր միջին եկամուտների 99.9%-ը, իսկ դպրոցների այլ միջին եկամուտները՝ ընդամենը 0.1%-ը: Մոդելային ավագ դպրոցների նույն ցուցանիշներն աննշան չափով ավելի լավ են և կազմում են համապատասխանաբար 99.0% և 1.0%:
19. Եթե մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների փաստացի սովորողների միջին թվերը մոտավորապես հավասար են (համապատասխանաբար 389 և 382 սովորող), ապա ավագ դպրոցների եկամտային ցուցանիշների միջին արժեքները մոտ 1.16 – 1.17 անգամ մեծ են միջնակարգ դպրոցների եկամտային ցուցանիշների միջին արժեքներից:
20. Տարբեր դպրոցներ (և՛ միջնակարգ, և՛ ավագ) տարբեր չափով ծախսեր են կատարում դպրոցի պահպանման գծով՝ կախված տվյալ դպրոցի ոչ մանկավարժական աշխատողների թվից, զբաղեցրած տարածքի չափից, տվյալ բնակավայրի բնակլիմայական պայմաններից, տվյալ տարում դպրոցում կատարվելիք ընթացիկ նորոգման կամ այլ աշխատանքների կատարման անհրաժեշտությունից և նմանատիպ այլ գործոններից:
21. Մոդելային միջնակարգ դպրոցների 1 սովորողին ընկնող՝ ընթացիկ ընդհանուր միջին ծախսերում աշխատողների աշխատավարձի գծով միջին ծախսերը կազմում են 92.5%-ը, իսկ դրանց պահպանման միջին ծախսերը՝ ընդամենը 7.5%-ը: Մոդելային ավագ դպրոցների ծախսային նույն ցուցանիշները աննշան չափով ավելի լավ են և կազմում են համապատասխանաբար 91.6% և 8.4%:

22. Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ ընթացիկ ընդհանուր ծախսերի և աշխատողների աշխատավարձի գծով ծախսերի միջիններն ավելի բարձր են ավագ դպրոցների համար (համապատասխանաբար 1.15 և 1.14 անգամ), քան միջնակարգ դպրոցների համար, որոնք մոտավորապես մոտ են Համատեղ հրամանում ավագ դպրոցների համար սահմանված լրացուցիչ գործակցին՝ 1.14:
23. Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ դպրոցի պահպանման ծախսերի գծով ավագ դպրոցների միջին արժեքը մոտ 1.29 անգամ մեծ է միջնակարգ դպրոցների միջին արժեքից (դրանց մոտավորապես հավասար փաստացի սովորողների թվերի պարագայում):
24. 2014թ. ընթացքում մոդելային 10 դպրոցներից 9-ն ընդհանրապես չեն կատարել կապիտալ ծախսեր, բացառությամբ Երևանի Նոր Նորք վ/շ թիվ 187 միջնակարգ դպրոցի, որի կապիտալ ծախսերի մասնաբաժինը դպրոցի ընդհանուր ծախսերում կազմել է ընդամենը 0.9%:

Առաջարկություններ

Հիմնվելով կատարված վերլուծության և արված հիմնական եզրակացությունների վրա՝ մեր հիմնական առաջարկություններն են՝

1. Ավագ դպրոցներում իրականացվող կրթական բարփոխումներին զուգահեռ նաև իրականացնել հիմնական դպրոցների զարգացման առանձին ծրագրեր:
2. Մշակել ավագ դպրոցի սովորողների կրթության ծրագիր՝ հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիական զարգացումները, աշակերտների նախասիրությունները, և ղեկավարվելով ոչ թե առկա համակարգի վրա նոր ծավալներ, ժամաքանակներ ավելացնելու մեխանիկական մոտեցումով, այլ մշակելով և ներդնելով ուսուցման բոլորովին նոր համակարգ:
3. Վերանայել դպրոցների ուսուցիչների աշխատանքի ընդունման, վերապատրաստման և ատեստավորման համակարգերը: Ավագ դասարանների ուսուցիչները պետք է ունենան ակադեմիական տարբեր մակարդակ ունեցող պատանիների հետ աշխատելու հմտություններ, պետք է կիրառեն ուսուցման հետաքրքիր, գրավիչ և մասնակցային մեթոդներ:
4. Նվազեցնել ավագ դասարանների ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ դրա փոխարեն ներմուծելով ուսուցչական թիմերում աշխատելու ժամաքանակ (ՏՀԶԿ երկրների օրինակով՝ շաբաթական միջինում 3 դասաժամ):
5. Առաջնահերթ խնդիր դիտարկել ավագ դասարանների ուսուցիչների՝ ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելու հմտությունների զարգացումը, ինչը հնարավորություն կընձեռնի նրանց առավել արդյունավետ աշխատելու ժամանակակից սովորողների հետ:
6. Ավագ դպրոցներին տալ ուսումնական ծրագրեր և պլաններ կազմելու առավել մեծ ճկունություն, որը հնարավորություն կտա արձագանքելու սովորողների բազմազան կարիքներին և սովորողներին նախագծելու սեփական կրթական ուղին:
7. Գյուղերում և փոքր քաղաքներում գործող միջնակարգ դպրոցներին հատկացնել լրացուցիչ ֆինանսավորում՝ պահելու արտադասարանական խմբակներ միասնական քննական մի քանի առարկաների գծով, ինչը հնարավորություն կտա մասամբ չեզոքացնել միջնակարգ և ավագ դպրոցների միջև ներկայումս առկա կրթության բովանդակային տարբերությունները:

8. Մշակել, ընդունել և կիրառել հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի **Սգ** և **Պգ** գործակիցների հաշվարկման հստակ մեթոդաբանություն:
9. Հանրակրթական դպրոցների պետական ֆինանսավորման համակարգում, բացի դպրոցների հիմնական «պարտադիր ծախսերից» (աշխատավարձից և պահպանման ծախսերից), նախատեսել նաև դրանց զարգացման գծով ծախսեր (օրինակ, դպրոցի վերազինման, ուսուցիչների նպատակային վերապատրաստման, սովորողների արտադասարանական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման և այլ ուղղություններով):
10. Հանրակրթական դպրոցներում ամբողջովին ներդնել ծրագրային բյուջետավորման ձևաչափը՝ մասնավորապես, սահմանելով կրթական ծառայությունների մատուցման արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների համակարգը, որի շնորհիվ հնարավոր կլինի արդյունավետորեն պլանավորել և իրականացնել դպրոցների ծախսային քաղաքականությունը:
11. Մշակել և ներդնել կրթական ծրագրերի կառավարման մոնիթորինգի և գնահատման համակարգ, որի շրջանակներում կհստակեցվեն նաև դպրոցներից համապատասխան տվյալների հավաքագրման և օգտագործման մեխանիզմները:
12. Հիմք ընդունելով ՀՀ միջնակարգ և ավագ դպրոցների մեծամասնության ներկայիս զգալի թերբեռնվածությունը՝ մշակել, քննարկել և ընդունել այդ դպրոցների համակարգի տեղաբաշխման և հետագա զարգացման նոր ռազմավարություն:
13. Միջնակարգ և ավագ դպրոցների 10-12-րդ դասարանների հոսքերի/ենթահոսքերի խտությունը սահմանել 12-16 սովորող՝ ներկայումս գործող 20-25-ի փոխարեն, վերանայելով դրանց ձևավորման ընթացակարգերը, ուսումնական պլանները, դպրոցների հաստիքային և ուսուցիչների տարիֆիկացիոն ցուցակները:
14. Ուսումնասիրել և գնահատել միջնակարգ դպրոցներում առանձին առարկաների գծով ֆակուլտատիվ պարապմունքների, արտադասարանական խմբակների կազմակերպման մասնագիտական և ֆինանսական հնարավորությունները:
15. Առաջարկել միջնակարգ և ավագ դպրոցներին՝ ընդլայնելու նրանց կողմից իրականացվող կրթական ծրագրերի շրջանակները (պետական լրացուցիչ ծրագրեր, ձեռնարկատիրական գործունեություն և այլն) և ձևավորելու բյուջետային և արտաբյուջետային լրացուցիչ միջոցներ:
16. Առաջարկել միջնակարգ և ավագ դպրոցներին՝ ստեղծելու և աստիճանաբար զարգացնելու դպրոցների պաշտոնական համացանցային կայքերը՝ բարձրացնելով դպրոցների ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկության, հրապարակայնության, արդյունավետության և հաշվետվողականության մակարդակները:
17. Հիմք ընդունելով համայնքների խոշորացման գծով Հայաստանում իրականացվող բարեփոխումները՝ ուսումնասիրել և հանրային քննարկման առարկա դարձնել ներկայիս մեծ և բազմաբնակավայր համայնքներում տեղաբաշխված միջնակարգ դպրոցների կառավարման ապակենտրոնացման հարցը՝ պետության կողմից համայնքներին պատվիրակելու միջոցով:

Օգտագործված գրականության և տեղեկատվության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով
2. <Կրթության մասին> ՀՀ օրենք, 1999
3. <Հանրակրթության մասին> ՀՀ օրենք, 2009
4. <ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին> ՀՀ օրենք, 2011
5. 2013-2014 ուսումնական տարվա 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն,
<http://www.atc.am/files/verlucutyunner/avartakan-2014-12-rd.pdf>
6. 2013-2014 ուսումնական տարվա 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն,
<http://www.atc.am/files/verlucutyunner/avartakan-2014-9-rd.pdf>
7. 2014թ. միասնական քննությունների վերլուծություն,
http://www.atc.am/files/verlucutyunner/2014/october/2014_hoktember_yntacik_1.pdf
8. Աղքատությունը և սոցիալական պատկերը Հայաստանում 2013, Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2014
9. Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիր, 2008,
<http://edu.am/index.php?id=1465&topMenu=-1&menu1=9&menu2=129&arch=0>
10. Ավագ դպրոցներում կրթության ֆինանսավորման և ֆինանսական արդյունավետության մոնիտորինգ, Համայնքների ֆինանսիստների միավորում, Երևան, 2014
11. <Կրթություն> թերթ, N 25-26, 2015
12. Հանրակրթությունը Հայաստանում, Վիճակագրական տեղեկագիր, <http://stat.armedu.am/>
13. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2011,
https://www.egov.am/u_files/file/decrees/kar/2011/07/11_1088.pdf
14. ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N878-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ,
<http://www.gov.am/files/meetings/2009/2389.pdf>
15. ՀՀ սոցիալական վիճակը 2014թ., Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2015,
http://armstat.am/file/article/soc_14_3-4.pdf
16. Ս.Խաչատրյան, Ս.Պետրոսյան, Գ.Թերզյան, Ոսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, Երևան, 2013
17. <Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվականների բարեփոխումների ծրագիրը հաստատելու մասին>, ՀՀ կառավարության որոշում, 2012
18. «Բոլոնյան կրթական համակարգի դրական ու բացական կողմերը ուսանողի հայացքով», 2015 Tert.am, <http://www.tert.am/am/news/2015/05/18/student-conference/1678644>
19. Գաբրիելյան Ս., «Բոլոնիայի գործընթաց. Ուսանողակենտրոն համակարգ», Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, 2013, <http://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Mkhitar-paper.pdf>
20. «Հանրակրթության կազմակերպման հիմնահարցեր», Նորավանք հիմնադրամ,
http://www.noravank.am/upload/pdf/28_am.pdf
21. Education at a Glance 2014, OECD, 2014
22. Health Behaviour in School-aged Children (HBSC) Study, WHO, 2010
23. PISA 2012 Results: Excellence Through Equity, Volum 2, OECD Publishing, 2013
24. Gandara Patricia, 2006, Expanding Opportunity in Higher Education: Leveraging Promise, State University of New York

Հավելված 1. Վիճակագրական տեղեկատվություն ՀՀ միջնակարգ և ավագ դպրոցների տեղաբաշխվածության վերաբերյալ

Աղյուսակ 1. ՀՀ միջնակարգ դպրոցների թիվը՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի (2014-2015 ուս.տարի)²²

ՀՀ մարզեր և Երևան քաղաք	Միջնակարգ դպրոցների թիվը		
	պետական	ոչ պետական	Ընդհանուրը
Երևան	17	23	40
Արագածոտն	80	0	80
Արարատ	92	0	92
Արմավիր	90	2	92
Գեղարքունիք	94	0	94
Լոռի	103	1	104
Կոտայք	63	1	64
Շիրակ	120	4	124
Սյունիք	75	0	75
Վայոց ձոր	30	0	30
Տավուշ	52	0	52
Ընդամենը	816	31	847

Աղյուսակ 2. ՀՀ ավագ դպրոցների և դրանցում սովորողների թիվը՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի (2014-2015 ուս.տարի)²³

ՀՀ մարզեր և Երևան քաղաք	Ավագ դպրոցների թիվը		Սովորողների թիվը	
	պետական	ոչ պետական	պետական	ոչ պետական
Երևան	40	9	18142	561
Արագածոտն	3	0	925	0
Արարատ	4	0	1047	0
Արմավիր	6	0	2096	0
Գեղարքունիք	6	0	1859	0
Լոռի	8	0	2639	0
Կոտայք	11	0	4407	0
Շիրակ	11	0	2339	0
Սյունիք	4	0	1558	0
Վայոց ձոր	3	0	812	0
Տավուշ	4	0	1118	0
Ընդամենը	100	9	36942	561

²² <http://www.edu.am/index.php?numbRefArticle=1&menu1=9&menu2=129&topMenu=-1&arch=0>

²³ <http://stat.amedu.am/?section=content&id=24&year=2014>

Հավելված 2. Հանրակրթական դպրոցների պետական ֆինանսավորման վերլուծությունը

Համաձայն պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ըստ սովորողների թվի ֆինանսավորման սկզբունքի, դպրոցին հատկացվող պետական բյուջետային միջոցները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$Ըգ = Մթ \times Սգ + Պգ,$$

որտեղ՝

Ըգ-ն մեկ տարվա համար դպրոցին հատկացվող ընդամենը գումարն է,

Մթ-ն դպրոցի սովորողների թիվն է,

Սգ-ն մեկ սովորողին ընկնող տարեկան գումարն է,

Պգ-ն դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարն է:

Որպես դպրոցի սովորողների թիվ (**Մթ**), ընդունվում է սովորողների միջին տարեկան թվաքանակը, որը ենթակա է ճշտման տվյալ ուսումնական տարվա սկզբին՝ հաշվի առնելով դպրոցի դասարանների փաստացի կոմպլեկտավորումը:

Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի Սգ և Պգ գումարների կոնկրետ մեծությունները յուրաքանչյուր տարի հաստատվում են ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ հրամանով, սակայն որևէ փաստաթղթով ներկայացված չէ դրանց հաշվարկման մեթոդաբանությունը: Յուրաքանչյուր տարի դրանք հաշվարկվում են ՀՀ ՖՆ-ան կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեում հանրակրթության բնագավառի համար նախատեսված ընդհանուր գումարի չափը, դպրոցների սովորողների թվի միջին հանրապետական ցուցանիշները և օրենսդրությամբ նախատեսված ծախսային նորմատիվները: Աղյուսակ 1-ում բերված են այդ գումարների հաստատված չափերը վերջին 6 տարիների ընթացքում:

Աղյուսակ 1. Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի Սգ և Պգ գումարների 2010-2015թթ. մեծությունները²⁴

Գումարի անվանումը	2010	2011	2012	2013	2014	2015
Դպրոցի 1 սովորողին ընկնող տարեկան գումարը (Սգ), ՀՀ դրամ	105,775	105,775	106,290	111,235	121,097	124,000
Դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարը (Պգ), ՀՀ հազ. դրամ	15,860.0	16,708.0	16,708.0	16,876.0	հաշվարկելի	հաշվարկելի

Հանրակրթական դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարի (Պգ-ի) հաշվարկման կարգը որոշակի փոփոխությունների ենթարկվեց 2014 թվականին²⁵, համաձայն որի դպրոցները դասակարգվեցին ըստ երեք խմբերի՝ «մինչև 100», «101-300», «301 և ավելի» սովորող ունեցող հանրակրթական դպրոցների, և սահմանվեցին յուրաքանչյուր խմբի դպրոցների ոչ ուսուցչական (վարչական, ուսումնաօժանդակ) աշխատակազմի տիպային հաստիքները և դրանց նվազագույն քանակները (աղյուսակ 2): Միաժամանակ, դպրոցի՝ ըստ սովորողների թվի

²⁴ Աղյուսակում բերված գումարների 2010-2015թթ. մեծությունները հաստատվել են ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների տվյալ տարվա Համատեղ հրամանով:

²⁵ ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 16-ի հ. 16-Ն որոշում,

ՀՀ ֆինանսների նախարարի 20 հունվարի 2014թ. թիվ 51-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 20 հունվարի 2014թ. թիվ 35-Ն համատեղ հրաման

Ֆինանսավորման բանաձևի «մեկ սովորողին ընկնող տարեկան գումար» (Սգ) փոփոխական բաղադրիչի հաշվարկից հանվեց դպրոցի ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի ֆոնդը, քանի որ դա ուղղակիորեն կապված չէ դպրոցի սովորողների թվի հետ:

Պգ-ի հաշվարկման վերոնշյալ կարգը պաշտպանվեց նաև 2015 թվականի համատեղ հրամանում²⁶: Եվ այսպես, 2014-15 թվականներին՝

- «մինչև 100» սովորող ունեցող հանրակրթական դպրոցների համար դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարը կազմել է 2014թ.՝ 16876.0 հազ. դրամ, 2015թ.՝ 19000.0 հազ. դրամ (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը),
- «101-300» և «301 և ավելի» սովորող ունեցող հանրակրթական դպրոցների համար դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է երկու մասից՝ դպրոցի պահպանման ծախսերից՝ 2014թ.-ի համար՝ 3239.1 հազ. դրամ, 2015թ.-ի համար՝ 3481.5 հազ. դրամ, և, սովորողների թվաքանակից ելնելով, ըստ դպրոցների հաշվարկված ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից:

Աղյուսակ 2. 2014թ. հանրակրթական դպրոցների դասակարգումն ըստ սովորողների թվի և ոչ ուսուցչական աշխատակազմի նվազագույն հաստիքների թվաքանակը²⁷

Մինչև 100 սովորող ունեցող դպրոցներ	101-300 սովորող ունեցող դպրոցներ	301 և ավելի սովորող ունեցող դպրոցներ
Տնօրեն, 1 հաստիք	Տնօրեն, 1 հաստիք	Տնօրեն, 1 հաստիք
	Տնօրենի տեղակալ, 1 հաստիք	Տնօրենի տեղակալ, 2 հաստիք
Պահակ/դռնապան, 4 հաստիք	Պահակ/դռնապան, 4 հաստիք	Պահակ/դռնապան, 4 հաստիք
Հավաքարար, 2 հաստիք	Հավաքարար, 2 հաստիք	Հավաքարար, 3 հաստիք
Օպերատոր, 0.5 հաստիք	Օպերատոր, 0.5 հաստիք	Օպերատոր, 1.5 հաստիք
Հաշվապահ, 0.5 հաստիք	Հաշվապահ, 1 հաստիք	Հաշվապահ, 1 հաստիք
Գրադարանավար, 0.5 հաստիք	Գրադարանավար, 1 հաստիք	Գրադարանավար, 1 հաստիք
Լաբորանտ, 0.5 հաստիք	Լաբորանտ, 1.5 հաստիք	Լաբորանտ, 2 հաստիք
Ընդամենը՝ 9 հաստիք, որից 1-ը՝ վարչական, 8-ը՝ ուսումնասովորողական	Ընդամենը՝ 12 հաստիք, որից 2-ը՝ վարչական, 10-ը՝ ուսումնասովորողական	Ընդամենը՝ 15.5 հաստիք, որից 3-ը՝ վարչական, 12.5-ը՝ ուսումնասովորողական

Նշված փոփոխությունով ակնկալվում էր դպրոցների՝ ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևում որոշակի չափով համապատասխանություն մտցնել նաև բանաձևի երկրորդ բաղադրիչի՝ դպրոցի պահպանման ծախսերի նվազագույն գումարի մեծության և դպրոցում առկա սովորողների թվի միջև: Սակայն, կատարված փոփոխությունների արդյունքում 2014թ. սկսած հանրակրթական դպրոցների ֆինանսավորման համար սահմանվեց այնպիսի բանաձև, համաձայն որի, նախորդ տարիների համեմատ, «մեկ սովորողին ընկնող տարեկան գումար» փոփոխական բաղադրիչը և վերջինիս նկատմամբ կիրառվող գործակիցներն աճեցին,

²⁶ ՀՀ ֆինանսների նախարարի 10 դեկտեմբերի 2014թ. թիվ 881-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 17 դեկտեմբերի 2014թ. թիվ 1167-Ն համատեղ հրաման
²⁷ ՀՀ ֆինանսների նախարարի 20 հունվարի 2014թ. թիվ 51-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 20 հունվարի 2014թ. թիվ 35-Ն համատեղ հրաման, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. դեկտեմբերի 9-ի N1366 – Ա/Ք հրաման:

իսկ «հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումար» նախկինում հաստատուն բաղադրիչը՝

ա. նվազեց կամ մնաց անփոփոխ՝ առանց այն էլ ֆինանսապես խոցելի, մինչև 300 սովորող ունեցող դպրոցների համար,

բ. զգալիորեն աճեց՝ ֆինանսապես կայուն, 301 և ավելի սովորող ունեցող դպրոցների համար:

Սգ-ի՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան գումար» փոփոխական բաղադրիչի հաշվարկը յուրաքանչյուր տարի կատարելիս՝ կիրառվում են հիմնական և լրացուցիչ գործակիցներ՝ հաշվի առնելով հանրակրթական եռաստիճան համակարգում տվյալ դպրոցում առկա կրթական աստիճանները: Այդ գործակիցների արժեքները 2014-2015 թթ. համար բերված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Հանրակրթական դպրոցի ֆինանսավորման բանաձևում Սգ-ի՝ «մեկ սովորողին ընկնող տարեկան գումար» բաղադրիչի հետ բազմապատկվող գործակիցների արժեքները 2014-2015թթ. համար²⁸

Հ/հ	Գործակիցի անվանումը	Գործակիցի արժեքը	
		2014թ.	2015թ.
	Հիմնական գործակիցներ		
1.	Դպրոցի տարրական մակարդակի համար	0.80161	0.8042
2.	Դպրոցի միջին մակարդակի համար	1.11424	1.1179
3.	Դպրոցի ավագ մակարդակի համար	1.15432	1.1581
	Լրացուցիչ գործակիցներ		
1.	Բարձրլեռնային բնակավայրերի դպրոցների համար	1.13	1.13
2.	Լեռնային բնակավայրերի դպրոցների համար	1.05	1.04
3.	Միննույն բնակավայրում միակ, մինչև 400 սովորող ունեցող դպրոցների համար	1.2	1.2
4.	Ավագ դպրոցների համար	1.14	1.14

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ, համաձայն ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 16-ի N16-Ն որոշման, նախատեսվել է դրույթ, համաձայն որի ՀՀ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո մեկ ամսվա ընթացքում պետական հանրակրթական դպրոցի ծախսերում կարելի է կատարել վերաբաշխումներ, այսինքն հնարավորություն է տրվում այսպես ասած «հարուստ դպրոցի» համար ֆինանսավորման բանաձևով հաշվարկված ընդհանուր գումարի չափը նվազեցնել և նույն չափով ավելացնել «աղքատ դպրոցի» համար նույն բանաձևով հաշվարկված ընդհանուր գումարին: Սակայն, նշված դրույթը կիրառելի չէ հետևյալ պատճառներով.

- դա պարզապես հակասում է դպրոցի՝ ըստ սովորողների թվի ֆինանսավորման տրամաբանությանը, այսինքն կարելի էր միանգամից բոլոր դպրոցների ֆինանսավորումը կատարել նրանց իրական ծախսերին համապատասխան՝ առանց հաշվի առնելու դպրոցի սովորողների թիվը,
- դա հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված «միավորի արժեք» հասկացությանը, քանի որ դրանով փաստացի հնարավորություն է ստեղծվում՝ ծախսելու տարբեր չափի գումարներ նույն ծավալի և որակի կրթական ծառայություններ մատուցելու համար,

²⁸ Համաձայն ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների 2014-15թթ. Համատեղ հրամանների

- դպրոցի տարեկան ֆինանսավորման չափը հստակեցվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին (սեպտեմբերին)՝ դասարանների փաստացի կոմպլեկտավորման հիման վրա, և ճշտվում է դպրոցի տարեկան ընդհանուր ծախսերի նախահաշիվը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ֆինանսական տարվա սկզբին (հունվարին) հնարավոր չէ հստակ կանխատեսումներ անել տարեվերջին դպրոցում առաջացող ֆինանսական ճեղքվածքների (պակասուրդի) և ավելցուկների (հավելուրդի) չափերի մասին:

Հավելված 3. Մոդելային 10 դպրոցների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը՝ բացարձակ ցուցանիշների տեսքով

Հհ	Բացարձակ ցուցանիշի անվանումը	Երևան	Արագածոտն	Արարատ	Շիրակ	Տավուշ	Երևան	Արագածոտն	Արարատ	Շիրակ	Տավուշ
		Նոր Նորքի թ. 187 մ/դ	Թաթուլի մ/դ	Մխչյանի մ/դ	Գյումրու թ. 18 մ/դ	Գետահովիտի մ/դ	Կենտրոնի թ. 114 ա/դ	Թալինի ա/դ	Մասիսի թ. 5 ա/դ	Ախուրյանի ա/դ	Իջևանի թ. 2 ա/դ
I.	Ընդհանուր ցուցանիշներ										
1.	Դպրոցի նախագծային հզորությունը, սովորողների թիվը	1100	150	1000	670	320	1200	180	500	244	400
2.	Դպրոցի սովորողների փաստացի թիվը, 2014թ. սեպտեմբերի դրությամբ, այդ թվում՝	588	83	556	488	231	1010	135	250	137	376
	- տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ)	256	22	201	173	67	-	-	-	-	-
	- միջին դպրոց (5-9-րդ դասարաններ)	204	43	227	193	83	299	-	-	-	-
	- 10-րդ դասարաններ	45	7	42	33	28	135	30	78	41	113
	- 11-րդ դասարաններ	41	7	33	47	33	277	53	75	54	133
	- 12-րդ դասարաններ	42	4	53	42	20	299	52	97	42	130
3.	Դպրոցի դասարանների ընդհանուր փաստացի թիվը, 2014թ. սեպտեմբերի դրությամբ, այդ թվում՝	24	12	23	22	13	43	8	10	7	16
	- տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ)	9	4	8	7	4	-	-	-	-	-
	- միջին դպրոց (5-9-րդ դասարաններ)	9	5	9	9	5	12	-	-	-	-
	- 10-րդ դասարաններ	2	1	2	2	1	7	2	3	2	4
	- 11-րդ դասարաններ	2	1	2	2	2	11	3	3	3	6
	- 12-րդ դասարաններ	2	1	2	2	1	13	3	4	2	6
4.	Դպրոցի աշխատողների ընդհանուր փաստացի թիվը, 2014թ. սեպտեմբերի դրությամբ, այդ թվում՝	59	29	66	58	41	126	40	39	30	55
	- մանկավարժական անձնակազմ	40	23	52	42	30	96	29	25	17	41
	- ոչ մանկավարժական անձնակազմ	19	6	14	16	11	30	11	14	13	14
II.	Ֆինանսական ցուցանիշներ /հազ. դրամ/										
1.	Դրամական միջոցների մնացորդը 2014թ. տարեկգրին	5075.2	131.6	4757.6	0.0	52.2	4789.0	862.4	310.4	0.0	0.0
2.	Դպրոցի 2014թ. ընդամենը եկամուտները, ճշտված նախահաշիվ / փաստացի կատարված, այդ թվում՝	89560.1 / 89578.1	34690.3 / 34690.3	87493.7 / 87493.7	77355.5 / 77355.5	53897.6 / 53940.6	208983.6 / 208952.3	45313.2 / 45313.2	60089.7 / 60089.7	40490.2 / 40490.2	86988.6 / 86988.6

	Պետական պատվերից	88716.9 / 88716.9	34690.3 / 34690.3	87475.7 / 87475.7	77355.5 / 77355.5	53897.6 / 53897.6	197454.3 / 197454.3	45313.2 / 45313.2	59904.7 / 59904.7	40490.2 / 40490.2	86988.6 / 86988.6
	Ներառական կրթության եկամուտներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	9937.6 / 9937.6	0.0	0.0	0.0	0.0
	Պետական դրամաշնորհներից	58.2 / 58.2	0.0	0.0	0.0	0.0	376.0 / 376.0	0.0	185.0 / 185.0	0.0	0.0
	Ակտիվների վերաբերվող շնորհներից	745.0 / 745.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Նվիրաբերություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Այլ մուտքեր	40.0 / 58.0	0.0	18.0 / 18.0	0.0	0.0 / 43.0	1215.7 / 1184.4	0.0	0.0	0.0	0.0
3.	Դպրոցի 2014թ. ընդամենը ծախսերը, ճշտված նախահաշիվ / փաստացի կատարված, այդ թվում՝	89560.1 / 84410.2	34821.9 / 34782.7	87438.8 / 87438.8	77355.5 / 76739.2	53949.8 / 52399.5	203803.2 / 203684.7	46175.6 / 42219.4	58987.1 / 58987.1	40490.2 / 40490.2	86988.6 / 83756.8
3.1	Դպրոցի 2014թ. ընդամենը ընթացիկ ծախսերը, ճշտված նախահաշիվ / փաստացի կատարված, այդ թվում՝	88815.1 / 83665.2	34821.9 / 34782.7	87438.8 / 87438.8	77355.5 / 76739.2	53949.8 / 52399.5	203803.2 / 203684.7	46175.6 / 42219.4	58987.1 / 58987.1	40490.2 / 40490.2	86988.6 / 83756.8
	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	73654.7 / 73008.6	32696.8 / 32679.2	77090.2 / 77090.2	72830.0 / 72830.0	50748.4 / 49559.6	186264.6 / 186147.0	39439.6 / 39233.8	55093.7 / 55093.7	36135.0 / 36135.0	79700.0 / 76468.2
	Դպրոցի պահպանման ծախսեր	15160.4 / 10656.6	2125.1 / 2103.5	10348.6 / 10348.6	4525.5 / 3909.2	3201.4 / 2839.9	17538.6 / 17537.7	6736.0 / 2985.6	3893.4 / 3893.4	4355.2 / 4355.2	7288.6 / 7288.6
3.2	Դպրոցի 2014թ. ընդամենը կապիտալ ծախսերը, ճշտված նախահաշիվ / փաստացի կատարված	745.0 / 745.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.	Հավելուրդ (պակասուրդ)	5167.9	-92.4	54.9	621.2	1541.1	5267.6	3093.8	1102.6	0.0	3231.8
5.	Դրամական միջոցների մնացորդը 2014թ. տարեվերջին	10243.1	39.2	4812.5	621.2	1593.3	10056.6	3956.2	1413.0	0.0	3231.8

Հավելված 4. Կրթության համակարգային ոչ ֆինանսական ցուցանիշների սահմանումը և գնահատումը

Ցուցանիշ 1 (Ց1). Դպրոցի ծանրաբեռնվածությունը / թերբեռնվածությունը սովորողներով
Բանաձև՝ (սովորողների փաստացի թիվ / սովորողների նախագծային թիվ) x 100%, (աղյուսակ 1)

Աղյուսակ 1. Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների վարկանիշային դասակարգումն՝ ըստ սովորողներով ծանրաբեռնվածության / թերբեռնվածության, նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Դպրոցի սովորողների նախագծային թիվը,	Դպրոցի սովորողների փաստացի թիվը,	Ց1-ի արժեքը, %
Միջնակարգ դպրոցներ				
1.	Շիրակի մարզի Գյումրու թ. 18 մ/դ	670	488	72.8
2.	Տավուշի մարզի Գետահովիտի մ/դ	320	231	72.2
3.	Արարատի մարզի Մխչյանի մ/դ	1000	556	55.6
4.	Արագածոտնի մարզի Թաթուլի մ/դ	150	83	55.3
5.	Երևանի Նոր Նորք վ/շ թ. 187 մ/դ	1100	588	53.5
	Միջնակարգ 5 դպրոցների Ց1-ի միջին արժեքը	648	389	60.0
Ավագ դպրոցներ				
1.	Տավուշի մարզի Իջևանի թ. 2 ա/դ	400	376	94.0
2.	Երևանի Կենտրոն վ/շ թ. 114 ա/դ	1200	1010	84.2
3.	Արագածոտնի մարզի Թալինի ա/դ	180	135	75.0
4.	Շիրակի մարզի Ախուրյանի ա/դ	244	137	56.1
5.	Արարատի մարզի Մասիսի թ. 5 ա/դ	500	250	50.0
	Ավագ 5 դպրոցների Ց1-ի միջին արժեքը	505	382	75.6

Ցուցանիշ 2 (Ց2). Դպրոցի 1 դասարանի սովորողների միջին թիվը (դասարանների միջին խտությունը)
Բանաձև՝ սովորողների թիվ / դասարանների թիվ), (աղյուսակ 2)

Աղյուսակ 2. Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների վարկանիշային դասակարգումն՝ ըստ 1 դասարանի սովորողների միջին թվի (դասարանների միջին խտության), 10-12-րդ դասարանների արժեքների նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Ց2-ի արժեքը, 1-4 դաս.	Ց2-ի արժեքը, 5-9 դաս.	Ց2-ի արժեքը, 10-12 դաս.
Միջնակարգ դպրոցներ				
1.	Երևանի Նոր Նորք վ/շ թ. 187 մ/դ	28.4	22.7	21.3
2.	Արարատի մարզի Մխչյանի մ/դ	25.1	25.2	21.3
3.	Շիրակի մարզի Գյումրու թ. 18 մ/դ	24.7	21.4	20.3
4.	Տավուշի մարզի Գետահովիտի մ/դ	16.8	16.6	20.3
5.	Արագածոտնի մարզի Թաթուլի մ/դ	5.5	8.6	6.0
	Միջնակարգ 5 դպրոցների Ց2-ի միջին արժեքը	20.1	18.9	17.8
Ավագ դպրոցներ				
1.	Արարատի մարզի Մասիսի թ. 5 ա/դ	-	-	25.0
2.	Տավուշի մարզի Իջևանի թ. 2 ա/դ	-	-	23.5
3.	Երևանի Կենտրոն վ/շ թ. 114 ա/դ	-	24.9	22.9
4.	Շիրակի մարզի Ախուրյանի ա/դ	-	-	19.6
5.	Արագածոտնի մարզի Թալինի ա/դ	-	-	16.9

Ավագ 5 դպրոցների 82-ի միջին արժեքը	-	24.9	21.6
------------------------------------	---	------	------

Ցուցանիշ 3 (83). Դպրոցի 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը

Բանաձև՝ սովորողների թիվ / մանկավարժների թիվ, (աղյուսակ 3)

Ցուցանիշ 4 (84). Դպրոցի 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը

Բանաձև՝ սովորողների թիվ / ոչ մանկավարժական աշխատողների թիվ, (աղյուսակ 4)

Աղյուսակ 3. Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների վարկանիշային դասակարգումն՝ ըստ 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թվի, նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	83-ի արժեքը	84-ի արժեքը
I.	Փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ	83 > 14.5	
1.	Երևանի Նոր Նորք վ/շ թ. 187 մ/դ	14.7	30.9
II.	Փաստացի սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ	10 <= 83 <= 14.5	
2.	Շիրակի մարզի Գյումրու թ. 18 մ/դ	11.6	30.5
3.	Արարատի մարզի Մխչյանի մ/դ	10.7	39.7
4.	Երևանի Կենտրոն վ/շ թ. 114 ա/դ	10.5	33.7
5.	Արարատի մարզի Մասիսի թ. 5 ա/դ	10.0	17.9
III.	Փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ մանկավարժներով դպրոցներ	83 < 10	
6.	Տավուշի մարզի Իջևանի թ. 2 ա/դ	9.2	26.9
7.	Շիրակի մարզի Ախուրյանի ա/դ	8.1	10.5
8.	Տավուշի մարզի Գետահովիտի մ/դ	7.7	21.0
9.	Արագածոտնի մարզի Թալինի ա/դ	4.6	12.3
10.	Արագածոտնի մարզի Թաթուլի մ/դ	3.6	13.8

Աղյուսակ 4. Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների վարկանիշային դասակարգումն՝ ըստ 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թվի, նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	83-ի արժեքը	84-ի արժեքը
I.	Փաստացի սովորողներով բարձր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ		84 > 30
1.	Արարատի մարզի Մխչյանի մ/դ	10.7	39.7
2.	Երևանի Կենտրոն վ/շ թ. 114 ա/դ	10.5	33.7
3.	Երևանի Նոր Նորք վ/շ թ. 187 մ/դ	14.7	30.9
4.	Շիրակի մարզի Գյումրու թ. 18 մ/դ	11.6	30.5
II.	Փաստացի սովորողներով միջին ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ		20 <= 84 <= 30
5.	Տավուշի մարզի Իջևանի թ. 2 ա/դ	9.2	26.9
6.	Տավուշի մարզի Գետահովիտի մ/դ	7.7	21.0
III.	Փաստացի սովորողներով ցածր ծանրաբեռնվածությամբ ոչ մանկավարժական աշխատողներով դպրոցներ		84 < 20
7.	Արարատի մարզի Մասիսի թ. 5 ա/դ	10.0	17.9
8.	Արագածոտնի մարզի Թաթուլի մ/դ	3.6	13.8
9.	Արագածոտնի մարզի Թալինի ա/դ	4.6	12.3
10.	Շիրակի մարզի Ախուրյանի ա/դ	8.1	10.5

Հավելված 5. Կրթության ֆինանսական ցուցանիշների սահմանումը և գնահատումը

Ցուցանիշ 5. (85) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ ընդհանուր եկամուտները

Բանաձև՝ դպրոցի փաստացի ընդհանուր եկամուտներ / դպրոցի սովորողների թիվ, (աղյուսակ 5)

Ցուցանիշ 6. (86) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ պետական պատվերից եկամուտները

Բանաձև՝ դպրոցի փաստացի պետական պատվերից եկամուտներ / դպրոցի սովորողների թիվ, (աղյուսակ 5)

Աղյուսակ 5. Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների վարկանիշային դասակարգումն՝ ըստ դրանց 1 սովորողին ընկնող՝ ընդհանուր և պետական պատվերից փաստացի եկամուտների, հազ. դրամ, սովորողների փաստացի թվի նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Դպրոցի սովոր. փաստացի թիվը, 2014թ. սեպտ. դր.	85-ի արժեքը, հազ. դրամ	86-ի արժեքը, հազ. դրամ
Միջնակարգ դպրոցներ				
1.	Երևանի Նոր Նորք վ/շ թ. 187 մ/դ	588	152.3	150.9
2.	Արարատի մարզի Մխչյանի մ/դ	556	157.4	157.3
3.	Շիրակի մարզի Գյումրու թ. 18 մ/դ	488	158.5	158.5
4.	Տավուշի մարզի Գետահովիտի մ/դ	231	233.5	233.3
5.	Արագածոտնի մարզի Թաթուլի մ/դ	83	418.0	418.0
	Միջնակարգ 5 դպրոցների 85-ի և 86-ի միջին արժեքները	389	223.9	223.6
Ավագ դպրոցներ				
1.	Երևանի Կենտրոն վ/շ թ. 114 ա/դ	1010	206.9	195.5
2.	Տավուշի մարզի Իջևանի թ. 2 ա/դ	376	231.4	231.4
3.	Արարատի մարզի Մասիսի թ. 5 ա/դ	250	240.4	239.6
4.	Շիրակի մարզի Ախուրյանի ա/դ	137	295.5	295.5
5.	Արագածոտնի մարզի Թալինի ա/դ	135	335.7	335.7
	Ավագ 5 դպրոցների 85-ի և 86-ի միջին արժեքները	382	262.0	259.5

Ցուցանիշ 7. (87) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ ընթացիկ ընդհանուր ծախսերը

Բանաձև՝ դպրոցի փաստացի ընթացիկ ընդհանուր ծախսեր / դպրոցի սովորողների թիվ, (աղյուսակ 6)

Ցուցանիշ 8. (88) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը

Բանաձև՝ դպրոցի փաստացի աշխատավարձի գծով ծախսեր / դպրոցի սովորողների թիվ, (աղյուսակ 6)

Ցուցանիշ 9. (89) Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ դպրոցի պահպանման ծախսերը

Բանաձև՝ դպրոցի փաստացի պահպանման ծախսեր / դպրոցի սովորողների թիվ, (աղյուսակ 6)

Աղյուսակ 6. Մոդելային 5 միջնակարգ և 5 ավագ դպրոցների վարկանիշային դասակարգումն՝ ըստ դրանց 1 սովորողին ընկնող ընթացիկ ընդհանուր ծախսերի, հազ. դրամ, սովորողների փաստացի թվի նվազման կարգով

ՀՀ	Դպրոցի անվանումը	Դպրոցի սովոր. փաստացի թիվը, 2014թ. սեպտ. դր.	87-ի արժեքը, հազ. դրամ	88-ի արժեքը, հազ. դրամ	89-ի արժեքը, հազ. դրամ
Միջնակարգ դպրոցներ					

1.	Երևանի Նոր Նորք վ/շ թ. 187 մ/դ	588	142.3	124.2	18.1
2.	Արարատի մարզի Մխչյանի մ/դ	556	157.3	138.7	18.6
3.	Շիրակի մարզի Գյումրու թ. 18 մ/դ	488	157.3	149.2	8.1
4.	Տավուշի մարզի Գետահովիտի մ/դ	231	226.8	214.5	12.3
5.	Արագածոտնի մարզի Թաթուլի մ/դ	83	419.1	393.7	25.3
	Միջնակարգ 5 դպրոցների 87-89-ի միջին արժեքները	389	220.6	204.1	16.5
	Ավագ դպրոցներ				
1.	Երևանի Կենտրոն վ/շ թ. 114 ա/դ	1010	201.7	184.3	17.4
2.	Տավուշի մարզի Իջևանի թ. 2 ա/դ	376	222.8	203.4	19.4
3.	Արարատի մարզի Մասիսի թ. 5 ա/դ	250	235.9	220.4	15.6
4.	Շիրակի մարզի Ախուրյանի ա/դ	137	295.5	263.8	31.8
5.	Արագածոտնի մարզի Թալինի ա/դ	135	312.7	290.6	22.1
	Ավագ 5 դպրոցների 87-89-ի միջին արժեքները	382	253.7	232.5	21.3

Հավելված 6. Մոդելային 10 դպրոցների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝ հարաբերական ցուցանիշների տեսքով

Հh	Բացարձակ ցուցանիշի անվանումը	Երևան	Արագածոտն	Արարատ	Շիրակ	Տավուշ	Երևան	Արագածոտն	Արարատ	Շիրակ	Տավուշ
		Նոր Նորքի թ. 187 մ/դ	Թաթուլի մ/դ	Մխչյանի մ/դ	Գյումրու թ. 18 մ/դ	Գետահովիտի մ/դ	Կենտրոնի թ. 114 ա/դ	Թալինի ա/դ	Մասիսի թ. 5 ա/դ	Ախուրյանի ա/դ	Իջևանի թ. 2 ա/դ
I.	Ընդհանուր ցուցանիշներ										
1.	Դպրոցի ծանրաբեռնվածությունը / թերբեռնվածությունը սովորողներով (սովորողների փաստացի թիվ / սովորողների նախագծային թիվ) x 100%	53.5	55.3	55.6	72.8	72.2	84.2	75.0	50.0	56.1	94.0
2.	Դպրոցի 1 դասարանի սովորողների միջին թիվը (սովորողների թիվ / դասարանների թիվ), (2014թ. սեպտեմբերի դր.), այդ թվում										
	- տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ)	28.4	5.5	25.1	24.7	16.8	-	-	-	-	-
	- միջին դպրոց (5-9-րդ դասարաններ)	22.7	8.6	25.2	21.4	16.6	24.9	-	-	-	-
	- ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ)	21.3	6.0	21.3	20.3	20.3	22.9	16.9	25.0	19.6	23.5
3.	Դպրոցի 1 մանկավարժին ընկնող սովորողների միջին թիվը (սովորողների թիվ / մանկավարժների թիվ), (2014թ. սեպտեմբերի դրությամբ)	14.7	3.6	10.7	11.6	7.7	10.5	4.6	10.0	8.1	9.2
4.	Դպրոցի 1 ոչ մանկավարժական աշխատողին ընկնող սովորողների միջին թիվը (սովորողների թիվ / ոչ մանկավարժական աշխատողների թիվ) (2014թ. սեպտեմբերի դրությամբ)	30.9	13.8	39.7	30.5	21.0	33.7	12.3	17.9	10.5	26.9
II.	Ֆինանսական ցուցանիշներ /հազ. դրամ/										
5.	Դպրոցի 1 սովորողին ընկնող 2014թ. ընդհանուր եկամուտները (դպրոցի փաստացի (ճշտված) ընդհանուր եկամուտներ / դպրոցի սովորողների թիվ)	152.3	418.0	157.4	158.5	233.5	206.9	335.7	240.4	295.5	231.4
6.	Դպրոցի 1 սովորողին ընկնող 2014թ. պետական պատվերից եկամուտները (դպրոցի փաստացի (ճշտված) պետական պատվերից եկամուտներ / դպրոցի սովորողների թիվ)	150.9	418.0	157.3	158.5	233.3	195.5	335.7	239.6	295.5	231.4
7.	Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2014թ.	142.3	419.1	157.3	157.3	226.8	201.7	312.7	235.9	295.5	222.8

	ընթացիկ ընդհանուր ծախսերը (դպրոցի փաստացի (ճշտված) ընթացիկ ընդհանուր ծախսեր / դպրոցի սովորողների թիվ)										
8.	Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2014թ. դպրոցի աշխատողների աշխատավարձի գծով ծախսերը (դպրոցի փաստացի (ճշտված) աշխատավարձի գծով ծախսեր / դպրոցի սովորողների թիվ)	124.2	393.7	138.7	149.2	214.5	184.3	290.6	220.4	263.8	203.4
9.	Դպրոցի 1 սովորողին ընկնող՝ 2014թ. դպրոցի պահպանման ծախսերը (դպրոցի փաստացի (ճշտված) պահպանման ծախսեր / դպրոցի սովորողների թիվ)	18.1	25.3	18.6	8.1	12.3	17.4	22.1	15.6	31.8	19.4

Հավելված 7. Մոնիթոզիական հետազոտության արդյունքները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության նպատակը և խնդիրները

Տեղեկատվության հավաքման մեթոդները և ընտրանքը

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առանձնացված ավագ դպրոցների ձևավորման նպատակը

Ավագ դպրոցներում կրթության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ նախանշված կրթական չափորոշիչներին

Ավագ և միջնակարգ դպրոցների միջև տարբերությունները

Դեռահասների հետ աշխատանքը ավագ և միջնակարգ դպրոցներում

Ավագ և միջնակարգ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշումը

Ավագ և միջնակարգ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթությունը

Դասագրքերով ապահովվածությունը ավագ և միջնակարգ դպրոցներում

Ավագ և միջնակարգ դպրոցների ուսուցիչների վերապատրաստումները

Կրկնուսույցների մոտ պարապելու հիմնական պատճառներն ու հետևանքները

Ավագ և միջնակարգ դպրոցների ֆինանսական կառավարումը

Ավագ և միջնակարգ դպրոցների լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունները

Ավագ դպրոցում կրեդիտային համակարգի ներդրման հեռանկարները

12-ամյա պարտադիր կրթակարգի ներդրման հեռանկարները

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ավագ և միջնակարգ դպրոցների արդի հիմնախնդիրները

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության նպատակը և խնդիրները

ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների և միջնակարգ դպրոցների 10-12-րդ դասարանների կրթական ծրագրերի համեմատական վերլուծության նպատակով «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպությունը «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան» աջակցությամբ իրականացրել է սոցիոլոգիական հետազոտություն: Հետազոտության նպատակն է իրականացնել միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարանների և առանձին ավագ դպրոցների կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն՝ հաշվի առնելով կրթության նպատակադրումը, բովանդակությունը, արդյունքները, դպրոցների վարչարարությունը և ֆինանսավորումը:

Սոցիոլոգիական հետազոտության հիմնական խնդիրներն են՝

1. Վերլուծել կրթական ծրագրերի իրականացման բովանդակային տարբերությունները միջնակարգ և ավագ դպրոցներում.
 - հանրակրթական և առարկայական չափորոշիչները,
 - կրթական և մեթոդաբանական նյութերը,
 - կրթակարգը:
2. Պարզել՝ որքանով է միջնակարգ և ավագ դպրոցների կրթական գործընթացի կազմակերպումը համարժեք այդ կրթական չափորոշիչներով սահմանված ելքային արդյունքներին հասնելու համար:
3. Պարզել՝ ինչպիսի պարտադիր պայմաններ և խոչընդոտներ կան հոսքային և ենթահոսքային կրթության կազմակերպման համար՝ միջնակարգ և ավագ դպրոցներում:
4. Պարզել՝ որքանով է առանձին ավագ դպրոցներում կազմակերպվող հոսքային կրթությունը համապատասխանում ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրով ամրագրված պահանջներին:
5. Համեմատել ֆինանսական միջոցների բաշխման մեխանիզմները միջնակարգ և ավագ դպրոցների միջև, վերլուծել բաշխման ու ֆինանսական արդյունավետությունը:
6. Պարզել՝ բավարարում է արդյոք ավագ և միջնակարգ դպրոցներին տրամադրվող ֆինանսավորումը որակյալ հոսքային ու ենթահոսքային կրթություն կազմակերպելու և իրականացնելու համար (դասարաններում սովորողների թիվը, որակյալ կադրերի ներգրավումը, կրթական ծրագրերը, դպրոցի պահպանման, վերանորոգման, գույքի ձեռքբերման ծախսերի ապահովումը, և այլն):
7. Պարզել ավագ և միջնակարգ դպրոցներում 12-ամյա պարտադիր կրթակարգի անցման առավելություններն ու ռիսկերը:
8. Պարզել ավագ դպրոցներում կրեդիտային համակարգի ներդրման առավելություններն ու ռիսկերը:

Տեղեկատվության հավաքման մեթոդները և ընտրանքը

Հետազոտության նպատակով և խնդիրներով սահմանված հարցերի շրջանակը ուսումնասիրելու և վերլուծելու նպատակով սոցիոլոգիական հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է ինչպես ավագ ու միջնակարգ դպրոցների տնօրենների և ուսուցիչների, այնպես էլ կրթության ոլորտի փորձագետների (ԿԳՆ, ԿԱԻ, ԿԳՆ ԾԻԳ աշխատակիցների, կրթության առաջադեմ մեթոդներ կիրառող ավագ դպրոցների տնօրենների, փոխտնօրենների) կարծիքը, ինչը հնարավորություն տվեց ստանալ ավագ և միջնակարգ դպրոցների գործունեության վերաբերյալ բազմակողմանի տեղեկություններ, նկարագրել առկա իրավիճակը տարբեր շահագրգիռ կողմերի

տեսանկյունից, դուրս բերել պատճառահետևանքային կապեր և մշակել կառուցողական առաջարկություններ:

Հետազոտության ընթացքում համադրվել են տեղեկատվության ստացման որակական մի շարք մեթոդներ, այդ թվում.

- **Փորձագիտական հարցազրույցներ** կրթության ոլորտի փորձագետների հետ,
- **Խորին հարցազրույցներ** ավագ և միջնակարգ դպրոցների տնօրենների հետ,
- **Ֆոկուս-խմբեր** ավագ և միջնակարգ դպրոցների ուսուցիչների հետ:

Որակական ինֆորմացիայի հազեցման շեմն ապահովելու համար ընտրվել են հանրապետությունում գործող 5 ավագ դպրոցներ և 5 միջնակարգ դպրոցներ, այդ թվում՝ 1-ական ավագ և 1-ական միջնակարգ դպրոցներ Երևանում, Արարատի, Արագածոտնի, Շիրակի և Տավուշի մարզերում (Տե՛ս **Աղյուսակ 1**):

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքում ընդգրկված ՀՀ ավագ և միջնակարգ դպրոցների ցանկը

Փ#	Դպրոցի անվանումը	Մարզը / Երևան քաղաքի վարչական շրջանը
1	Թալինի ավագ դպրոց	Արագածոտն
2	Թաթուլի միջնակարգ դպրոց	Արագածոտն
3	Մասիսի թիվ 5 ավագ դպրոց	Արարատ
4	Մխչյանի միջնակարգ դպրոց	Արարատ
5	Ախուրյանի ավագ դպրոց	Շիրակ
6	Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց	Շիրակ
7	Իջևանի թիվ 2 ավագ դպրոց	Տավուշ
8	Գետահովիտի միջնակարգ դպրոց	Տավուշ
9	Երևանի թիվ 187 միջնակարգ դպրոց	Երևան, Նոր Նորք վարչական շրջան
10	Երևանի թիվ 114 ավագ դպրոց	Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ընտրված 10 դպրոցներից յուրաքանչյուրում հարցվել են տնօրենները և իրականացվել է ֆոկուս-խումբ ավագ դասարանների ուսուցիչների հետ՝ տարբեր առարկաներ դասավանդող (հայոց լեզու և գրականություն, պատմություն, հայոց պատմություն, հայ եկեղեցու պատմություն, անգլերեն լեզու, գերմաներեն լեզու, ռուսաց լեզու, հանրահաշիվ և երկրաչափություն, ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա, ինֆորմատիկա, ռազմագիտություն, իրավունք, հայրենագիտություն, հասարակագիտություն, աշխարհագրություն, ֆիզկուլտուրա) և տարբեր մասնագիտական ստաժ ունեցող: Իրականացված 10 ֆոկուս-խմբերում քննարկմանը մասնակցել են 77 ուսուցիչներ, որոնցից միայն 7-ը՝ տղամարդ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առանձնացված ավագ դպրոցների ձևավորման նպատակը

Փորձագիտական հարցման արդյունքների համաձայն, առանձնացված ավագ դպրոցների ստեղծումը երկու հիմնական նպատակ էր հետապնդում՝ 1) ավագ դասարաններում կրթության կազմակերպման տնտեսական արդյունավետության բարձրացում և 2) ավագ դասարաններում կրթության որակի բարելավում հոսքային և ենթահոսքային կրթության կազմակերպման միջոցով: Ավելի մանրամասն այդ նպատակները ներկայացված են ստորև.

- **Ռեսուրսների արդյունավետ օգտագործում:** Առանձնացված ավագ դպրոցների առկայությունը հնարավորություն է տալիս խնայել միջոցները՝ տեխնիկապես ապահովելով համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակներով, լաբորատորիաներով և այլն, ոչ թե հանրապետությունում գործող բոլոր 1437 դպրոցները, այլ դրանց միայն մի մասը՝ 109 ավագ դպրոցը: Ռեսուրսները կենտրոնացվում են մի քանի

դպրոցներում, ինչը ավելի արդյունավետ է դարձնում կրթությունը դպրոցի բարձր դասարաններում:

- **Ավագ դպրոցի և հիմնական դպրոցի ֆինանսավորման կարգի տարբերակում:** Ավագ դպրոցը տնտեսապես ավելի թանկ է, քան հիմնական դպրոցի տարրական և միջին աստիճանի դասարաններում, այդ իսկ պատճառով ավագ դպրոցի ծախսերը պետք է գերազանցեն դպրոցի ցածր դասարանների ծախսերը: Երբ հանրապետության հանրակրթական դպրոցներում գործում էր ֆինանսավորման ընդհանուր համակարգ, դպրոցի ընդհանուր համակարգային ցուցանիշները նվազում էին (օրինակ՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը, դասարանի միջին խտությունը): Այժմ գործում են տարանջատված ֆինանսավորման կարգեր հիմնական և ավագ դպրոցներում, ինչն ավելի արդյունավետ է կրթական ու ֆինանսական առումներով:
- **Աշակերտների կրիտիկական քանակի ապահովում,** ինչը հնարավորություն է տալիս ավելի ձկուն հոսքային ուսուցում կազմակերպել:
- **Ավագ դասարանների սովորողների մասնագիտական կողմնորոշում:** Ավագ դպրոցի առանձնացման առանցքային նպատակը մասնագիտական կողմնորոշում ունեցող սովորողին իր ապագա մասնագիտության բնագավառում ավելի խորը ուսուցումն է: Խոսքը վերաբերում է ոչ միայն բուհում կրթությունը շարունակելուն, այլև արհեստագործական ուսուցմանը, որի կազմակերպման համար ավագ դպրոցներում կարող են արհեստագործական հոսքեր բացվել՝ նման ուղղվածության կրթություն ստանալու ցանկություն ունեցող սովորողների առկայության դեպքում:
- **Կրթական ծրագրերի ձկունության ապահովում:** Ավագ դպրոցում սովորողն ունի ընտրելու հնարավորություն. նա ինքն է ընտրում հոսքը և ունի հոսքը փոխելու հնարավորություն:
- **Ավագ դասարանների սովորողների կրթական կարիքներին բավարարող միջավայրի ստեղծում:**
- **Ավագ դասարաններում կրթության որակի բարելավում:**

Իսկ ուսուցիչների կարծիքով, ավագ դպրոցների ստեղծման նպատակների մեջ մտնում է նաև այն, որ սովորողներն՝ առանց կրկնուսույցի օգնության, կարողանան բուհեր ընդունվել:

Ավագ դպրոցների թվարկված նպատակների իրացման մասին շատ խոսուն արտահայտվեցին ուսուցիչները ֆոկուս-խմբերի ընթացքում. *«Կարծում եմ, որ ավագ դպրոցի նպատակը չի արդարացվում: Մի շարք ավագ դպրոցներ փակեցին, ուսուցիչները և բնակիչները դժգոհ են, երեխաները տրանսպորտով պիտի գնան դասի գան, ոչ մի առավելություն չունի ավագ դպրոցը, իզուր տեղը աշակերտների տեղաշարժ սարքեցին, իսկ գիտելիքի առումով էլ քիչ է տալիս»:* (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

Ավագ դպրոցներում կրթության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կրթական չափորոշիչներին

Հանրակրթության բնագավառում վերջին տարիների բարեփոխումների առանցքն, ըստ էության, այն է, որ հմտությունների, կարողությունների և արժեքների ուսուցանումը պետք է ավելի կարևորվի, քան ակադեմիական գիտելիքները, ինչը պետական հանրակրթական չափորոշիչներով հստակ ամրագրված է: Դպրոցը պատրաստում է քաղաքացի: ՀՀ կառավարությունը հաստատել է միջնակարգ դպրոցի շրջանավարտի բնութագիրը ²⁹ : Յուրաքանչյուր առարկա պարունակում է ոչ միայն գիտելիքի բաղադրիչ, այլև դաստիարակություն: Տարրական դասարաններում ավելի մեծ ուշադրություն է դարձվում դաստիարակությանը: Ավելի բարձր դասարաններում գնալով ավելի է կարևորվում գիտելիքը և ավելի քիչ ժամանակ է տրամադրվում արժեքների յուրացմանը: Դա հետևողական ու բարդ գործընթաց է, և յուրաքանչյուր առարկայի որոշակի մասնաբաժին ուղղված է այս կամ այն

²⁹ Հանրակրթության պետական չափորոշիչ // http://www.ktak.am/e107_files/downloads/Chaporoshich.pdf:

որակների զարգացմանը: Եվ եթե գիտելիքի դասավանդման և ստուգման չափորոշիչները քիչ թե շատ հստակ են, ապա դաստիարակությունը շատ ավելի բարդ է չափել:

Բարեփոխումների գլխավոր նպատակներից էր նաև նվազեցնել հիշողության վրա գիտելիք սերտելու ծավալը և դրա փոխարեն առաջնահերթ լուծել հոգեբանական, արժեքային խնդիրները կրթության բնագավառում: Միայն այս առումով ժամանակակից դպրոցը կարող է մրցել համակարգչային ինքնակրթության հնարավորությունների հետ: Երեխան տանը նստած կարող է համակարգչի միջոցով իրեն անհրաժեշտ տեղեկությունները ստանալ, իսկ արժեքները կենդանի մանկավարժական աշխատանք են պահանջում. *«Դպրոցը միայն այս ձևով կարող է իր գոյությունը արդարացնել: Այլապես ինչո՞ւ պետք է երեխան դպրոց գա, եթե տանը բոլոր տեխնիկական հնարավորություններն ունի: Պետք չէ պարտադրել, երեխան պետք է ինքը ձգտի դպրոց գալ»* (Փորձագիտական կարծիք) Սակայն դա չիրականացավ:

Կարևոր է նշել, որ ուսուցիչներից շատերն արտահայտեցին այն կարծիքը, որ ավագ դպրոցների ստեղծումը բացասաբար անդրադարձավ հանրակրթության համակարգի դաստիարակչական բաղադրիչի և արժեհամակարգի ձևավորման վրա.

«Ավագ դպրոցի առաջացման մեջ առաջինը տուժեց արժեքային համակարգը: Ասում են՝ թող մաթեմատիկական լավ չիմանան, բայց մարդ դուրս գան, արդյունքում ընկնում են քառսի մեջ»: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

«Հիմա երեխայի դաստիարակության հարցը լրիվ խախտվում է, երբ գնում է ավագ դպրոց: Տարբեր միջավայրեր է փոխում, իսկ նա արդեն ձևավորված մարդ է, հետո կարող է ընկնել վատ շրջապատ ու սովորողներն էլ կսկսեն չսովորել»: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

Որպես կանոն, տարրական դասարաններում երեխաները լավ են սովորում, ունեն մեկ դասվար, որն այդ 2 գործառույթները (գիտելիքի փոխանցում և արժեհամակարգի ձևավորում) լավ է կատարում, քանի որ տարրական դպրոցի նպատակը հստակեցված է և ամրագրված է կրթական չափորոշիչներով: Հենց տարրական աստիճանից երեխան տեղափոխվում է միջին աստիճան, սկսվում է խառանշփոթ. մի մասը միանգամից սկսում են վատ սովորել, մյուս մասը՝ թուլանում ինչ-որ առարկաներից: Թեև այս մակարդակում կրթության նպատակը նույնպես ամրագրված է կրթական չափորոշիչներով, բայց գործնականում սովորողի, ուսուցչի և ծնողի համար հստակ չէ, ինչ գործառույթ է կատարում միջին դպրոցը: Այնուհետև ավագ դասարաններում առաջ են գալիս մասնագիտական կողմնորոշման, կրթությունը շարունակելու, բուհ ընդունվելու նպատակները: Տարրական դասարաններում երեխան սովորաբար նորմալ է սովորում, միջին դպրոցում անուշադրության է մատնվում ընտանիքի և կրթական համակարգի կողմից, հետո 9-10-րդ դասարաններում հայտնաբերում է, որ շատ բաներ չգիտի:

«Մի ուսուցիչը հետևողականորեն նպատակին է տանում, իսկ դասարան մտնող տարբեր ուսուցիչները կարող են նպատակից տեղյակ չլինել, կամ իրենց պատկերացումները ունենան: Պետք է թիմ լինի, լավ մանկավարժական թիմ, որոնք նույն նպատակի շուրջ են միավորված»: (Փորձագիտական կարծիք)

Կրթությունը սպիրալաձև գործընթաց է. առարկայախումբը նախ տարրական դասարաններում են սովորում, հետո նույն առարկաներն ավելի խորացված միջին դպրոցում են սովորում, հետո էլ՝ ավագ դպրոցում՝ ավելի բարձր մակարդակով: Դրանք իրար հետ կապված են, բայց տարբեր պահանջներ ունեն: Եվ այդ կապը ապահովվում է չափորոշիչների միջոցով: Առարկայական յուրաքանչյուր չափորոշիչ ամրագրում է պարտադիր նվազագույնը բոլոր սովորողների համար:

Կրթական չափորոշիչները ավագ դպրոցի և միջնակարգ դպրոցի ավագ դասարանների համար նույնն են: Տարբերությունն ղնելը արդարացված չէր լինի՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ավարտական և միասնական քննությունների ժամանակ պահանջները նույնն են բոլորի համար:

Չափորոշիչների տարբերությունը հստակեցված է բոլոր հոսքերի բոլոր առարկաների համար: Բոլոր հոսքերի ծրագրերն ունեն ընդհանրություններ, որոնք պարունակում են տվյալ առարկայի չափորոշչային պարտադիր նվազագույնը: Այնուհետև, առանձնացված են երեք մակարդակներ՝

ընդհանուր, հումանիտար և տվյալ բնագիտական առարկային համապատասխան՝ ֆիզիկա, մաթեմատիկա և այլն: Հումանիտար հոսքի բովանդակությունը ներառված է ընդհանուր հոսքի մեջ, ընդհանուրը ներառված է խորացվածի մեջ: Լրացուցիչ պահանջներ ավելանում են հոսքային առարկաների ծրագրերում՝ ըստ խորության և ծավալների: Սակայն այս հանգամանքը հաշվի չի առնվել ինչպես ավագ դպրոցի ավարտական փուլում, այնպես էլ հիմնական դպրոցի ավարտական փուլում. չափորոշիչը հիմք չի հանդիսանում արդյունքների գնահատման համար:

Կրթական չափորոշիչները նախանշում են, թե որքան գիտելիքներով և կարողություններով պետք է դպրոցն ապահովի սովորողին: Ավագ դպրոցի նպատակն է լիարժեք մարդ դաստիարակելը, ամբողջական կրթություն տալը, կարողանալ երեխայի մեջ բացահայտել այն, ինչին ինքն առավել ունակ է ու փորձել նրան տալ հավասարապես գիտելիքներ և ճիշտ արժեքներ: Օրինակ՝ «Այբ» ավագ դպրոցը փորձում է օգնել սովորողին ստանալ ամբողջական կրթություն գրեթե բոլոր ոլորտներում՝ մինևույն ժամանակ զինելով նրան այնպիսի հատկանիշներով, որ նա կարողանա հետագայում պրպտի, փնտրի, անընդհատ իր վրա աշխատի, շարունակաբար կրթություն ստանա, հասկանալով, թե իրեն ինչ է պետք:

Փորձագետների կարծիքով, ՀՀ հանրակրթության համակարգն այսօր չի համապատասխանում նախանշված չափորոշիչներին, և հաստատված չափորոշիչները լիարժեք չեն կիրառվում հետևյալ պատճառներով.

- չկա գործիք՝ ստուգելու, թե ապահովվե՞լ է արդյոք ուսուցիչը նախանշված չափորոշիչը, թե՞ ոչ,
- չկա մոտեցում և, չափորոշիչը չապահովելու դեպքում, համապատասխան արձագանքման մեխանիզմ. եթե պարզվեց, որ ուսուցիչը չի ապահովել չափորոշիչը, ապա ի՞նչ է պետք անել,
- ուսուցիչների պնդմամբ, չափորոշիչները շատ ավելին են պահանջում, քան հնարավոր է ուսուցանել. աշակերտը այդ ծավալի նյութը չի կարող ընկալել,
- հանրակրթական դպրոցի ուսուցիչները պատշաճ մակարդակով իրազեկված չեն կրթական չափորոշիչների մասին,
- չափորոշիչները չափելի չեն, հստակ չեն ձևակերպված,
- տարբեր առարկաների չափորոշիչները գրված են տարբեր ոճերով,
- չափորոշիչները փոխհամաձայնեցված չեն և գերազանցում են դասաժամաքանակի և սովորողի կողմից դրանք յուրացնելու հնարավորությունները:

Քննարկելով կրթական չափորոշիչների խնդիրը՝ փորձագետներն ու ուսուցիչներն առանձին անդրադարձան մայրենի լեզվի ուսուցմանը: Հիմնական մոտեցումն այն է, որ մայրենին պետք է ուսուցանել ոչ միայն մայրենի գրականությունն ընթերցելու համար, այլ մյուս առարկաներն ուսումնասիրելու համար. *«Իսկ այսօր տարրական դպրոցում սովորեցրած մայրենի լեզուն երեխան չի կարողանում օգտագործել հինգերորդ դասարանում՝ աշխարհագրություն սովորելիս: Ես ֆիզիկայի ուսուցիչ եմ, երեխան գալիս է խնդիրը լուծելու, կարդում է խնդիրը ու աչքերը մեծացրած նայում է երեսիս: Բայց, երբ ես խնդիրը բացատրում եմ, նա առանց դժվարանալու լուծում է: Երեխան չգիտի կարդալ ու հասկանալ այլ առարկաներ, այլ գիտություններ մայրենի լեզվով: Սա հենց սկզբունքորեն առարկայական ծրագրի խնդիր է: Ինչքան մենք այդ հարցերը բարձրացնում ենք, մինևույն է, լեզվի մեր հոշակավոր մասնագետները ցանկանում են, որ բոլորը մայրենի լեզուն իմանան բանասերների նման: Սակայն, դրա հետևանքով ոչ մեկն էլ մայրենի լեզուն չգիտի»:* (Փորձագիտական կարծիք)

«Երեխան կարդում է և դու նրա համար պետք է հայերենից հայերեն թարգմանես, որ նա հասկանա: Դասագիրքը պետք է լինի մատչելի գրված»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Երևան)

«Հայոց լեզվի ուսուցչի առջև դրված է խնդիր՝ մտքերը ազատ շարադրելու վերաբերյալ: Սակայն, ընդունելության քննությունների ժամանակ տրվում են թեսթային առաջադրանքներ: Այսինքն՝ շարադրությունը, փոխադրությունը, թելադրությունը հետին պլան են անցնում»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Երևան)

Ավագ և միջնակարգ դպրոցների միջև տարբերությունները

Էական տարբերություն է առկա ավագ և միջնակարգ դպրոցների ֆինանսավորման առումով. ավագ դպրոցներում գործակիցը ավելի բարձր է, քան միջնակարգում: Սակայն, ԿԳՆ ֆինանսիստների դիտարկմամբ, վերջնարդյունքում միջնակարգ դպրոցներն ավելի արդյունավետ են կարողանում բաշխել ըստ աշակերտների թվի տրամադրված ֆինանսական միջոցները (շնորհիվ ամբողջ դպրոցում՝ 1-12 դասարաններում աշակերտների մեծ թվի), քան ավագ դպրոցները:

Բացի այդ, ԿԳՆ-ը հանրապետությունում գործող բոլոր ավագ դպրոցներին հերթականությամբ տրամադրում է գույք, տեխնիկա, լաբորատոր սարքավորումներ, վիրտուալ լաբորատորիաներ, շարժական համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակներ և այլն: Միջնակարգ դպրոցների ավագ դասարաններին ԿԳՆ նման օժանդակություն չի ցուցաբերում, քանի որ դրանք մարզպետարանների իրավասության ներքո են:

Միջնակարգ դպրոցները ստեղծվեցին, որպեսզի յուրաքանչյուր գյուղում լինի դպրոց, որտեղ գյուղի երեխաները 1-12-րդ դասարաններում կսովորեն: ԿԳՆ փորձագետների կարծիքով, դժվար կլինեք կազմակերպել երեխաների ամենօրյա տեղափոխությունը մի համայնքից մեկ այլ համայնքի ավագ դպրոց մի շարք պատճառներով՝ ֆինանսական, տրանսպորտային, ճանապարհային, կլիմայական, ժողովրդագրական, սահմանամերձ գյուղերի դատարկման և միջհամայնքային հարաբերությունների առումով: Հնարավոր է, որ հետագայում իրար հետ հեշտ հաղորդակցվող գյուղերում նման բարեփոխումներ արվեն: Սակայն, դա հնարավոր չի լինի այն մարզերում, որտեղ միջհամայնքային ճանապարհները բարվոք վիճակում չեն, չկա կանոնակարգված տրանսպորտային հաղորդակցում համայնքների միջև, ձմռան ամիսներին՝ եղանակային պայմաններից ելնելով, փակվում են միջհամայնքային ճանապարհները կամ համայնքները պարզապես իրարից մեծ հեռավորության վրա են գտնվում: Փորձագետների կարծիքով, նման համայնքները հատկապես շատ են Սյունիքի, Տավուշի և Շիրակի մարզերում: Մահմանամերձ գյուղերում միջնակարգ դպրոցների պահպանման խնդիրը նաև ռազմավարական նշանակություն ունի, որպեսզի գյուղերը չդատարկվեն. *«Մահմանամերձ գյուղերում եթե դպրոցը փակես, գյուղը կփակվի: Դա արդեն ոչ թե սոցիալական խնդիր է, այլ ազգային անվտանգության խնդիր է»:* (Փորձագիտական կարծիք)

Բացի այդ, միջնակարգ դպրոցների ստեղծումը հնարավորություն տվեց, որպեսզի բոլորն իրենց կրթության իրավունքն իրացնելու հնարավորություն ունենան:

Մինևույն ժամանակ, կա կարծիք, որ միջնակարգ դպրոցների պահպանումը խեղաթուրեց ավագ դպրոցների ստեղծման գաղափարը, ինչը բացասաբար անդրադարձավ կրթության որակի վրա: Գյուղական համայնքներում միջնակարգ դպրոցների առկայությունը ակամայից պարտադրեց, որ գյուղաբնակ սովորողները հաճախեն միջնակարգ դպրոցներ՝ փաստացի զրկվելով այլընտրանքից՝ ավագ դպրոցում սովորելու և հետևաբար մասնագիտական կողմնորոշմանը համապատասխանող հոսքային կրթություն ստանալու հնարավորությունից: Բացի այդ, միջնակարգ դպրոցներում ավագ դասարանների պահպանումը պետության համար լրացուցիչ ծախս հանդիսացավ, այլապես այդ միջոցները, որոշ փորձագետների կարծիքով, հնարավոր կլինեք ուղղել դեպի ավագ դպրոցներ՝ հզորացնելով դրանց հնարավորությունները, ստեղծելով բարենպաստ կրթական միջավայր և բարելավելով ավագ դպրոցում կրթության որակը:

Գյուղի միջնակարգ դպրոցները համալրված չեն բավարար մանկավարժական անձնակազմով. *«Ու ոչինչ, որ իրանք չունեն ֆիզիկայի դասատու, ու ոչինչ, որ իրենց կենսաբանության դասատուն է ֆիզիկա պարապում, ու ոչինչ, որ իր երեխան այնքան ֆիզիկա չի իմանա, որ բուհում դառնա ֆիզիկայի մասնագետ, կարևորը, որ իրենց գյուղում լինի 12-ամյա միջնակարգ դպրոց: Այս կապրիզի համար ստեղծվեցին միջնակարգ դպրոցները, որոնք երեխայի համար կրթության համար բարենպաստ միջավայր ստեղծել չեն կարող: Ստացվում է, որ երեխաները դառնում են միջնակարգ դպրոց ունենալու կապրիզի գերիները: Ամբողջ համակարգը փչանում է դրա*

հետևանքով: Նաև հասարակության մեջ վերաբերմունք է առաջանում, որ ավագ դպրոցները հեշ քան են, ու մի օր փակվելու են»: (Փորձագիտական կարծիք)

Թեև միջնակարգ դպրոցները նույնպես կարող են ձևավորել հոսքային դասարաններ, սակայն միջնակարգ դպրոցներում հիմնականում հոսքեր չեն ձևավորվում և հոսքային կրթություն չի ապահովվում, քանի որ աշակերտների քանակը բավարար չէ հոսքեր ձևավորելու համար: Աշակերտների քանակն այնքան շատ չէ, որ դասարանները վերակազմավորվեն ըստ երեխաների հետաքրքրությունների: Եթե միջնակարգ դպրոցի տասներորդ դասարաններում ընդամենը մինչև քառասուն երեխա է սովորում, հնարավոր չէ ապահովել բոլոր հոսքերը: Դա պահանջում է լրացուցիչ դասաժամեր, իսկ ֆինանսավորումը բավարար չէ:

«Մի քանի տարի առաջ, որ մտել ենք դպրոց աշխատելու, աշակերտներն այնքան շատ էին, որ այս փոքրիկ գյուղը կրկնակի զուգահեռ դասարաններ ուներ, 405 աշակերտ: Այնքան առարկաներ կային, որ կիսվում էին: Հիմա աշակերտները քիչ են, զուգահեռ դասարաններ չկան»: (Ֆոկլոր-խումբ, ավագ դպրոց, գ. Գետահովիտ)

Ավագ դպրոցում հոսքային ուսուցման կազմակերպումը նախատեսված է ուսումնական պլանով: Այս առումով ավագ դպրոցների առավելությունը միանշանակ է: Միջնակարգ դպրոցի ավագ աստիճանի ծրագիրը սահմանափակվում է ընդհանուր հոսքի ծրագրով, իսկ ավագ դպրոցը հնարավորություններ ունի խորացված ուսուցման: *«Այս իմաստով անհավասար պայմաններ են ստեղծվել ավագ և միջնակարգ դպրոցների միջև: Երեխան մեղավոր է, որ ապրում է այս գյուղում, որտեղ չկան առանձին հոսքեր: Եթե լուրջ ունակություններ ունի, նա տուժում է, և ողջ համակարգն է տուժում, և հասարակությունը»:* (Փորձագիտական կարծիք)

Միջնակարգ դպրոցները հիմնականում ՀՀ գյուղական վայրերում են: Մեծ բնակավայրերում ավագ դպրոց ստեղծելու հնարավորություն է եղել: Արդյունքում, միջնակարգ և առանձնացված ավագ դպրոցի միջև տարբերությունը դարձել է քաղաքի և գյուղի միջև տարբերություն: Առանձին գործող ավագ դպրոցները հիմնականում քաղաքային բնակավայրերում են, որտեղ համեմատաբար ավելի բարձր որակավորում ունեցող կադրեր են աշխատում, քան գյուղական բնակավայրերում: Քաղաքային բնակավայրերում ավելի մատչելի են ուսուցման ռեսուրսները:

Ավագ դպրոցների դասարանի խտությունը ըստ սահմանված նորմի ավելի փոքր է, քան միջնակարգում, ինչը բացասաբար է անդրադառնում միջնակարգ դպրոցներում կրթության որակի վրա:

Եվս մեկ տարբերություն պայմանավորված է նրանով, որ ավագ դպրոցի աշակերտներն արդեն կողմնորոշված են, գիտեն՝ ինչ մասնագետ են ուզում դառնալ, իսկ միջնակարգ դպրոցի աշակերտների մեծամասնությունը՝ ոչ:

Մինևույն ժամանակ, փորձագետների դիտարկմամբ, գյուղական բնակավայրերի առավելությունն այն է, որ գյուղաբնակ երեխաներն ավելի սովորող են, քան քաղաքաբնակները: Սա պայմանավորված է, մի կողմից, նրանով, որ գյուղերում պահպանվել է կրթության հանդեպ ավանդական մոտեցումը՝ կրթության արժևորումը, իսկ մյուս կողմից՝ գյուղերում զվարճանքի վայրերը շատ չեն, ինտերնետի հասանելիությունը համեմատաբար ավելի ցածր է, քան քաղաքներում, և երեխաները ավելի շատ ժամանակ են տրամադրում կրթությանը:

Դեռահասների հետ աշխատանքը ավագ և միջնակարգ դպրոցներում

Հանրակրթության համակարգում տեղի ունեցած բարեփոխումները բերեցին մի շարք մարտահրավերների: Մասնավորապես՝ դեռահաս երեխաները փոխում են միջավայրը ավարտելով հիմնական դպրոցը և փոխադրվելով ավագ դպրոց, ինչը ենթադրում է նոր դպրոցին, մանկավարժական կոլեկտիվին և ընկերական միջավայրին հարմարվելու հետ կապված խնդիրներ: Տարբեր հիմնական դպրոցներից եկած երեխաների սոցիալականացման խնդիր կա՝ անցումային փուլ է, դեռահասության տարիք, և կոնֆլիկտներ կարող են լինել յուրաքանչյուր կոլեկտիվում, դպրոցում: Այդ տարիքի երեխաները իրականում շատ լուրջ ինքնուրույն մարդիկ են՝ շատ տեղեկացված, բավականին արագ կողմնորոշվող:

Բացի այդ, ներկայումս 12-րդ դասարանի աշակերտներն այն երեխաներն են, որոնք նախկինում սովորում էին բուհի առաջին կուրսում. *«Իսկ առաջին կուրսեցին կարող էր հազնվել իր կամքով, ծխել կամ չծխել, սափրվել կամ չսափրվել...»*: Մանկավարժները դեռևս պատրաստ չեն հասկանալու, որ արդեն մեծ մարդկանց հետ են աշխատում և առաջնորդվում են խորհրդային ժամանակներից եկած կարծրատիպերով, որ դպրոց հաճախող տղան երկար մազեր չպետք է ունենա, կամ պետք է սափրված լինի և այլն: Այսօր խորհրդային մոտեցումները հաճախ կիրառելի չեն, իսկ նորերը դեռևս չեն ձևավորվել:

Այս առումով ավագ և միջնակարգ դպրոցների միջև տարբերություն կա. *«Ավագ դպրոցում սովորում են տարբեր դպրոցներից եկած, տարբեր բնավորություն ունեցող երեխաներ: Միջնակարգի ճիշտն այն է, որ այդ երեխան մեր ձեռքի տակ է մեծանում, բոլորը ճանաչում են նրա բնավորությունը: Իսկ երբ երեխան գալիս է ավագ դպրոց, մինչև աղապտացվում է, ուսուցիչը հոգեբանորեն դժվարանում է նրան հասկանալ, մինչև հասկանում ես իրար, արդեն ժամանակն անցնում է»*: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

«Շրջապատը փոխելը հաստատ վատ է ազդում մանավանդ տղաների վրա: Սկսում է ամոթ լինել, որ դու տնային ես գրել: Իսկ իրենց հակազդել չի լինում, քանի որ իրենք շատ են չսովորողները, 10-ից 2-ն են գրում-կարդում»: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

Մինևույն ժամանակ, ավագ դպրոցների ուսուցիչների կարծիքով՝ գալով ավագ դպրոց՝ աշակերտը հնարավորություն ունի ազատվել իր բարդություններից, շփվել նոր միջավայրի հետ:

Փորձագետների կարծիքով, ենթադրվում է, որ բոլորը դպրոցում ունեն մանկավարժի որակավորում: Մանկավարժն այն մասնագետն է, որն անցել է բուհում հոգեբանություն առարկան և պետք է ունենա երեխաների հետ աշխատելու գիտելիքներ և հմտություններ, տեղեկացված է տարիքային զարգացման առանձնահատկությունների մասին: Բուհում սովորում են, ստանում են մանկավարժի որակավորում, բայց կայանում են դպրոցում: Այդ առումով ավագ դպրոցը ամենահզոր «մարտադաշտն» է: Այստեղ է ուսուցիչը մանկավարժի վերածվում, երեխաներն ուսուցչին մանկավարժ են դարձնում:

Մինևույն ժամանակ, ավագ դպրոցներում գրեթե չկան մասնագետներ, որոնք դեռահասների հետ դասապրոցեսից դուրս աշխատելու պարտականություններ ունենան՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, սոցիալական մանկավարժներ և այլն: Մի քանի ավագ դպրոցներ ընդգրկել են աշխատակազմում սոցիալական մանկավարժների, ինչը փորձագետները շատ արդյունավետ համարեցին: Անհրաժեշտ է, որ դպրոցում երեխաների հետ աշխատի մասնագետ, որը դասավանդող ուսուցիչ չէ: Դասղեկները, դասավանդող ուսուցիչներն անպայման շեղվում, վերադառնում են դասին, իսկ սոցիալական մանկավարժը զբաղվում է այլ հարցերով՝ երեխաների խնդիրներն է բացահայտում, կարիքներն է գնահատում և փորձում է դրանց լուծում տալ: Շատ արդյունավետ համարեցին հարցվողները նաև «Ուսուցիչն ու դպրոցում» ծրագիրը: Երեխաները կարող են ուսուցիչին ամեն վայրկյան դիմել և տարբեր թեմաներով զրուցել:

Ավագ և միջնակարգ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշումը

Մասնագիտական կողմնորոշումը ավագ դպրոցում ապահովվում է հիմնականում հոսքային ուսուցման միջոցով: Այսինքն՝ եթե երեխան որոշակի նախասիրություններ ունի կրթությունը հետագայում շարունակելու ուղղությամբ, նա ընտրում է այս կամ այն հոսքը: Ավագ դպրոցները հայեցակարգում ներկայացվում են որպես նախամասնագիտական կրթություն տրամադրող օղակ, որը ենթադրում է, որ հիմնական դպրոցից հետո երեխան պետք է բավականին մասնագիտական կողմնորոշում ունենա: Սա բավականին հակասական է. հիմնական դպրոցի մակարդակում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գործընթացներ նախատեսված չեն: Իսկ միջնակարգ դպրոցում մասնագիտական կողմնորոշման գործառույթն ընդհանրապես բացակայում է. այն իրականացնում են աշակերտների ծնողները:

Հանրապետությունում գործում են նաև տարբեր թեքումներով դպրոցներ՝ արվեստի, սպորտի, սակայն ոչ բոլոր մարզերում են դրանք հասանելի: Արդյունքում, ավագ դպրոցում

մասնագիտական կողմնորոշման հնարավորությունները սահմանափակվում են առաջարկվող հոսքերով և որոշ դեպքերում ենթահոսքերով: Գործող ավագ դպրոցների մեծ մասը հիմնականում ունեն 3 հոսքեր:

Ավագ դպրոցը դառնում է միջանկյալ օղակ՝ հիմնական կրթությունից դեպի մասնագիտական կրթություն: Սա ենթադրում է, որ ավագ դպրոցների և բուհերի կապը բավականաչափ սերտ պետք է լինի: Այդ քաղաքականության շրջանակներում մի քանի դպրոցներ ամրացվեցին բուհերին՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին, Հայաստանի ազգային ագրարային համալսարանին և այլն: Բուհերը շահագրգռված են դրանում, քանի որ ուղղակի դիմորդներ են ձեռք բերում և պատրաստ են ներդրում անել այդ գործում, որպեսզի կապեն դպրոցը և դպրոցի շրջանավարտներին բուհի հետ: Սակայն, այս միտումը լայն տարածում չգտավ:

Փորձագետների կարծիքով, վերջին տարիներին մասնագիտական կողմնորոշման գործընթացն ակտիվացել է հատկապես քաղաքային բնակավայրերում, սակայն նախաձեռնողը ոչ թե դպրոցներն են, այլ բուհերը և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնց ներկայացուցիչները գնում են դպրոց, ներկայացնում են իրենց ուսումնական հաստատությունները, գովազդում իրենց ծառայությունները և երեխաներին ուղղորդում:

«Կրթությունը ապրանք է՝ արի ինձ մոտ, ձեռք բեր իմ ծառայությունը...»:

«Այբ» դպրոցը հանրապետությունում եզակիներից է, որն ունի մասնագիտական կողմնորոշման մասնագետ, որը երեխաների հետ զրույցների ընթացքում պարզում է նրանց հակումները, ցանկությունները, կարող է խորհուրդ տալ՝ ինչ առարկաներ ընտրի աշակերտը, որ բուհը, ընդհուպ մինչև նշված բուհի փաստաթղթերի լրացման և կրթաթոշակների որոնման ընթացքում աջակցության տրամադրում: Այս հաստիքը անհրաժեշտ է ավագ դպրոցում, այս մասնագետը բավականին բարդ և բազմագործառույթ աշխատանք է իրականացնում՝ ուղղորդում և կողմնորոշում է սովորողին: *«Հաճախ երեխան չգիտի՝ ինչ է ուզում: Մենք, որ նոր էինք բացվել, ընդունելություն էինք անում, բոլոր երեխաները կամ տնտեսագետ էին ուզում դառնալ, կամ իրավաբան: Հիմա այդ երեխաներից մեկն ուզում է գենային ինժեներիայով զբաղվել, մյուսը՝ նանո-տեխնոլոգիաներով, մյուսը՝ քիմիական մոդելավորմամբ: Պետք է թողնել որ նրանք հասկանան ինչ են ուզում»:* (Փորձագիտական կարծիք)

Մասնագիտական կողմնորոշման ևս մեկ տարբերակ է կիրառվում «Այբ» դպրոցում: Աշակերտներին դասավանդում են մարդիկ, որոնք պրակտիկ մեծ փորձ ունեն ու մեծ հաջողությունների են հասել. *«Մեզ մոտ Ինֆորմատիկան դասավանդում են հանրապետությունում 3 ամենահայտնի IT-մասնագետները»:* (Փորձագիտական կարծիք)

Կան նաև ավելի պարզ տարբերակներ. *«Երբ ինձ մոտ գալիս է մեկը երեխաներից ու ասում է, որ այսինչով է ուզում զբաղվել, ես ասում եմ գտիր այդ մասնագիտության մեջ ամենահաջողակ 5 փայլուն մարդկանց ու գրի նրանց մասին՝ ի՞նչ են արել, ո՞նց են հասել այդ ամենին: Ու, եթե այդքանը անելուց հետո դեռ ուզես դառնալ այդ ոլորտի մասնագետ, ապա առաջ»:* (Փորձագիտական կարծիք)

Շատ փորձագետներ, որպես մասնագիտական կողմնորոշման արդյունավետ մեթոդ, որը լայնորեն կիրառվում էր խորհրդային ժամանակաշրջանում, նշեցին էքսկուրսիաները, երբ միջին և բարձր դասարանների աշակերտներին տանում էին տարբեր գործարաններ: Այդ ընթացքում երեխաները կարող էին տեսնել տարբեր մասնագետների՝ խառատի, բանվորի աշխատանքը և պատկերացում կազմել, թե ինչով է զբաղվելու, եթե այդ մասնագիտությունն ընտրի:

Ուսուցիչների դիտարկմամբ, այսօր երեխաների մասնագիտության ընտրության հարցում ամենակարևոր դերը խաղում են ծնողները:

Ավագ և միջնակարգ դպրոցներում հոսքային և ենթահոսքային կրթությունը

Որպես կանոն, ՀՀ ավագ դպրոցներում կրթությունը կազմակերպվում է հոսքային դասարաններում՝ ընդհանուր, հումանիտար և բնագիտական:

Ենթահոսքերը կազմավորվում են ավելի հազվադեպ: Ենթահոսքերի քիչ լինելու պատճառն առաջին հերթին տնտեսական է, երկրորդ՝ կադրային, և երրորդ՝ ծրագրային: Ենթահոսքի ձևավորման պարագայում ԿԳ նախարարությունն առանձին ենթահոսքերի ծրագրեր և դասագրքեր չի մշակում, այդ գործառույթը մնում է դպրոցի վրա: Եթե դպրոցը կարողանա մշակել ենթահոսքի համար հատուկ ծրագիր, կունենա բավարար թվով երեխաներ, որոնք ցանկանում են այդ ենթահոսքում սովորել, այդ դեպքում ենթահոսքը կկազմավորվի:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, միջնակարգ դպրոցը կարող է ապահովել կամ չապահովել ենթահոսքային կրթություն: Սակայն, միջնակարգ դպրոցները դժվարանում են անգամ հոսքային կրթություն կազմակերպելու գործում՝ ֆինանսական խնդիրների և աշակերտների փոքր թվի պատճառով:

Փորձագետների կարծիքները հոսքային կրթության մասին շատ հակասական են: Հոսքային կրթության վերաբերյալ որոշ փորձագետներ բացասական կարծիք ունեն: *«Չի կարելի երեխային ասել՝ դու հիմա մենակ անգլերեն ու մաթեմատիկա սովորի, մնացածը քեզ պետք չէ: «Այբ»-ում մենք էլ էինք հոսքերով ու ենթահոսքերով սկսել, հետո հանեցինք, հենց 2-րդ տարվանից հանեցինք: Կրթությունը պետք է լինի ամբողջական, դու պարտադիր գիտելիք պետք է ունենաս հավասարաչափ բոլոր ոլորտներից: Հետո, երբ աշակերտը կողմնորոշվում է, ինքը կարող է իր ընտրած մասնագիտության շրջանակներում ավելի խորացնել իր գիտելիքները, բայց ոչ ի հաշիվ այլ առարկաների: Մենք հիմա հոսքեր և ենթահոսքեր չունենք, աշակերտներն ուղղակի ընտրում են իրենց թրեկերը (ուղղությունները)»:* (Փորձագիտական կարծիք)

«Առանձնացված ավագ դպրոցները կարող են ունենալ նաև ընդհանուր հոսքեր, բայց նրանք այդ ընդհանուր հոսքը չեն ստեղծում: Այնինչ, ընդհանուր հոսքը երեխաներին ապահովում է ավելի լայն գիտելիքների շրջանակ և մասնագիտական կողմնորոշման հնարավորություն է տալիս: Մասնագիտական կողմնորոշումը ենթադրում է հնարավորինս շատ բնագավառներից տեղյակ լինել, քանի որ հետագայում կարող է աշխատաշուկան պահանջի, որ շրջանավարտը այլ հարակից մասնագիտությամբ զբաղվի, մասնագիտացումը փոխի, ուրիշ աշխատանք կատարի»: (Փորձագիտական կարծիք)

Այլ փորձագետների կարծիքով, հոսքային և ենթահոսքային կրթության գաղափարը արդյունավետ կիրականացվեր, եթե միջոցները կենտրոնացված լինեին. *«Պատկերացրեք մի դպրոց, որտեղ 2 հոգի ուզում են դառնալ նկարիչ, 3 հոգի ուզում են դառնալ երաժիշտ, 2 հոգի ուզում են դառնալ մարզիկ, 4-ն էլ՝ ծեփագործ բանվոր: Այդպիսի դպրոց պատկերացնու՞մ եք»:* (Փորձագիտական կարծիք)

Իսկ միջնակարգ դպրոցի ուսուցիչների կարծիքով, հոսքային կրթությունը ավագ դպրոցներում արդյունավետ է. *«Հիմա միջնակարգում 12-րդ դասարանում են ընտրում երեխեքը առարկան ու նոր սովորում են: Հիմա նստած է 27 հոգի, անգլերեն չեն սիրում որոշները, չեն սովորում: Ուսուցիչն էլ ուզի չուզի պիտի հարցնի՝ աշակերտ է, նստած է: Մենք էլ հարցնում ենք, ժամանակ ենք կորցնում, իսկ եթե ընտրովի լիներ, այլ կերպ կլիներ: Ավագ դպրոցի լավն այն է, որ պիտի աշակերտն ընտրի իր առարկաները, մի քանի հիմնականից հետո, մենք նրանց վրա ավելի մեծ ուշադրություն կդարձնենք և իրանք դպրոցի գիտելիքով կընդունվեին: Ես աշխատել եմ Ախուրյանի ավագ դպրոցում, անգլերեն եմ դասավանդել, առանց պարապելու 6 հոգի անգլիական (անգլերեն լեզվաբանություն մասնագիտությամբ, խմբ.) ընդունվեցին, որից երկուսը Երևանում»:* (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

«Հիմա ես ունեմ 12-րդ դասարան, բայց ամբողջ դասի ընթացքում ուշադրությունս մենակ այն երեխեքի վրա է, որոնք պիտի մաթեմատիկայով շարունակեն: Մյուսներին չի հետաքրքրում առարկան ու եթե ես այդ ժամանակը տրամադրեմ մյուս երեխեքին, այն սովորողներս ոչինչ չեն հասկանա»: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

«Ցանկացած երեխայի, ով ունի 9-րդ դասարանի ավարտական պետական վկայական, բոլորին՝ մենք պարտավոր ենք ընդունել, անկախ նրանից, ինքը 4 միավորի գիտելիքների տեր երեխա է թե՛

10-ի: Այդ նույն երեխաները նստում են կողք կողքի, ու չգիտես՝ որի հետ ինչպիսի աշխատանք իրականացնես: Շատ բարդ աշխատանք տանես, թույլ երեխայի համար կլինի անհասկանալի, շատ հեշտ աշխատանքն էլ բարձր գիտելիք ունեցողի համար կլինի անհետաքրքիր: Այսինքն՝ ստացվում է շերտավորված աշխատանք կամ միջին մակարդակի աշխատանք, որ հասու լինի բոլորին էլ:» (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Ախուրյան)

Նման խնդիր առաջանում է նաև ավագ դպրոցներում աշակերտների փոքր թվաքանակի պատճառով. «Քանի որ աշակերտների թիվը գնալով քչանում է, դասարանի խտությունը պահելու հարց կա, երբեմն աշակերտները նստում են այնպիսի հոսքերում, որոնք իրենց ընդհանրապես չեն համապատասխանում»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Երևան)

«Իհարկե, սկզբից շատ ավելի ճկուն ուսումնական պլան էր ենթադրվում ավագ դպրոցում, բայց հետագայում... Ունենք այն, ինչ ունենք»: (Փորձագիտական կարծիք)

Եվս մեկ երևույթի մասին խոսեցին ավագ դպրոցների ուսուցիչները՝ բնագիտական հոսքում հայտնվում են ավելի մոտիվացված երեխաներ, որոնք ուզում են սովորել, իսկ հումանիտար հոսքում՝ նրանք, ովքեր պարզապես ուզում են դպրոցն ավարտել:

«Ավագ դպրոցի խնդիրներից մեկն էլ այն է, որ մաթեմատիկա, ֆիզիկա հոսքը ընտրել են այն աշակերտները, որոնք ուզում են սովորել: Հումանիտար գալիս են այն աշակերտները որոնք ուզում են ավարտել: Մաթեմատիկայի ուսուցչին ես միշտ նախանձում եմ, ես էլ եմ ուզում այդ հաճույքը ստանալ»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Բջևան, ք. Երևան)

Կարևոր խնդիր է ոչ հոսքային առարկաների դասավանդման հարցը: Օրինակ՝ հումանիտար հոսքում անցնում են ֆիզիկա մեկ ժամով, քիմիա մեկ ժամով: Մեկ ժամաքանակով ֆիզիկա անցնող աշակերտը ոչինչ չի սովորում:

Դասագրքերով ապահովվածությունը ավագ և միջնակարգ դպրոցներում

Հետազոտության արդյունքների համաձայն, ինչպես ավագ, այնպես էլ միջնակարգ դպրոցները դասագրքերով ապահովված են: Դասագրքերը պատվիրում են դպրոցներն ըստ պահանջի. ինչքան պետք է, այդքան կարող են պատվիրել:

Հոսքային կրթությամբ պայմանավորված՝ դասագրքերի երկու տեսակ կա: Օրինակ՝ հումանիտար և ընդհանուր հոսքում օգտագործվում է ֆիզիկայի մեկ դասագիրք, ֆիզմաթ հոսքում՝ մեկ ուրիշ: Դասագրքերի հետ առկա է որոշակի խառնաշփոթ, որը կապված է հոսքային դասագրքերի բաշխման և հստակ պլանավորման հետ: Սակայն դա դպրոցի խնդիրն է:

Այն փորձագետները, որոնք դեմ են հոսքային կրթությանը, դեմ արտահայտվեցին նաև հոսքային դասագրքերի գաղափարին. «Չի կարող գիրքը մի դեպքում կիսատ գիտելիք պարունակի, մի դեպքում ամբողջական»: (Փորձագիտական կարծիք)

Այլոք՝ ընդհակառակը, առաջարկում էին, որ ոչ թե երկու դասագիրք լինի նույն առարկայից՝ խորացված և ընդհանուր, այլ երեք՝ երեք տարբեր հոսքերի համար հարմարեցված:

Որոշ փորձագետներ կարծում են, որ ժամանակակից տեխնոլոգիաներով և տեղեկատվությամբ հագեցած աշխարհում դասագրքերն այլևս անհրաժեշտություն չեն. «Եկել է ժամանակը, որպեսզի մենք ազատվենք դասագրքի գերությունից, քանի որ հսկայական քանակությամբ դասագիրք կա օն-լայն տարբերակով և թղթի վրա: Եթե ուզում ես մի բան սովորես, ապա՝ ուզում ես գրքից սովորի, ուզում ես դասագրքից, ուզում ես ինտերնետից: Կարևորը, որ դու տեղեկացված լինես»: (Փորձագիտական կարծիք)

Ուսուցիչների կարծիքով, այսօր դասագիրքը չի ծառայում իր նպատակին, քանի որ երեխայի համար մատչելի լեզվով գրված չէ: Այն միայն ձևական դրված է երեխայի սեղանին. եթե երեխան չի գնում դասի, չի լսում ուսուցչին, ապա նա չի կարող տանը այդ դասագրքով սովորել: Շատ անհամապատասխանություններ կան նաև դպրոցական դասագրքերի և բուհի ընդունելության պահանջի միջև:

«Կենսաբանություն առարկայից բուհի ընդունելության ծրագիրը և մեր դասագրքում ներառված ծրագիրը իրար չեն համապատասխանում: Դրա համար աշակերտները գալիս են ավագ դպրոց և 10-11-րդ դասարաններում սովորում են հիմք ունենալու համար, իսկ 12-րդ դասարանում գնում են դասախոսների մոտ պարապելու, որպեսզի կարողանան ընդունվել»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Երևան)

«Մաթեմատիկայից 12-րդ դասարանում մի թեմա ենք անցնում՝ ինտեգրալ, որը ընդհանրապես երեխան ոչ հասկանում է, ոչ էլ: Նրանք ընդունվում են բուհ և առաջին կուրսում անցնում են դա: Ստացվում է, որ անհիմաստ դրա ժամաքանակը պահում ենք, չափորոշիչը պահում ենք: Հետո գալիս են կարևոր թեմաներ, որոնք մենք առաջ անցել ենք ամբողջ 10-րդ դասարանում: Ստացվում է, որ 10-րդ դասարանի երեխային անհրաժեշտ նյութը մենք անցնում ենք 2 ամսում, որովհետև մեկ ամիս անցնում ենք ինտեգրալ, որը իրենց ընդհանրապես պետք չէ»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Երևան)

«Մենք ավագ դպրոցում մաթեմատիկան անցնում ենք Շարիգինի գրքով, ու որպեսզի սրանով նորմալ անցնենք, մենք պետք է ներքևից՝ 7-րդ դասարանից դրանով անցնենք: Սակայն մենք ներքևում անցնում ենք Աթանեսյանի գրքով: Մենք տարիներ շարունակ բողոքեցինք: Նույնիսկ տարի եղավ, որ մենք մատյանում գրանցում էինք այլ բան, դասավանդում այլ բան: Հետո մեզ թույլ տվեցին անցնել Աթանեսյանով, իսկ Աթանեսյանն էլ դուրս է եկել տպագրությունից: Մեր խեղճ երեխաները վերնիսաժից գրքերը առնում են, բերում են, մենք Շարիգինը ստանում ենք, որի համար էլի վճարում ենք, չենք կարող չվճարել»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Երևան)

«Հոսքային դասագրքերը տարբեր են և դրանց բովանդակությունները իրար չեն համապատասխանում: Փաստերը մի դեպքում ուրիշ տարբերվով են նշում, մեկ այլ դեպքում՝ ուրիշ: Այս պոլիգրաֆիկ կազմողները, հանձնաժողովները պետք է նստեն ու խորհրդակցեն իրար հետ: Եթե գրականագետները ընդունում են, որ Նարեկացին ծնվել է 947 թվականին, ապա թող բոլոր դասագրքերում դա լինի այդպես, կամ եթե պատմաբանները ընդունում են 951 թվականը, թող դա լինի»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Երևան)

Ուսուցիչների հետ ֆոկուս-խմբերի ընթացքում պարզվեց նաև, որ ուսուցիչներն ըստ իրենց հայեցողության ընտրում են, որ թեման անցնել, իսկ որը ոչ, ինչը հանձնարարել, իսկ ինչը՝ ոչ. «Օրինակ՝ 5-6 պարագրաֆ, որ պետք է տամ պատմության դասին, ընտրում եմ մի պարագրաֆից մի ենթավերնագիրը, մյուսից՝ մի այլ ենթավերնագիրը»:

Ավագ և միջնակարգ դպրոցների ուսուցիչների վերապատրաստումները

Ինչպես միջնակարգ, այնպես էլ ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստումները կատարվում են 5 տարին մեկ: Վերապատրաստման դասընթացները երեք հիմնական բաղադրիչներից են բաղկացած՝ կրթության օրենսդրություն, S2S կիրառություն, տվյալ առարկայի ուսումնամեթոդական-տեսական մաս: Ծրագրով նախատեսված է 80 ժամ, որից 60 ժամը՝ մասնագիտական է, 8 ժամը՝ օրենսդրությունն է և 12 ժամը՝ S2S: Իսկ 60 ժամը բաժանվում է մեթոդա-մասնագիտական աշխատանքի: Ավագ դպրոցի և միջնակարգ դպրոցի ավագ դասարանների ուսուցիչների վերապատրաստումների միջև տարբերություն չկա: Ստեղծված են հատուկ վերապատրաստման մոդուլներ ավագ դպրոցների տնօրենների համար: Լինում են նաև կարճատև դասընթացներ՝ ըստ անհրաժեշտության, երբ որևէ առարկայի ծրագրային փոփոխություններ են տեղի ունենում կամ գնահատման համակարգի փոփոխություններ: Լինում են նաև այլ դասընթացներ՝ ելնելով դպրոցի կարիքներից, եթե պատվեր է ներկայացվում:

Վերապատրաստումները հիմնականում վերաբերում են ոչ թե դասավանդման մեթոդներին, այլ առարկայի բովանդակությանը: ԿԱԻ փորձագետների պնդմամբ, նրանք վերապատրաստումն իրականացնում են այն մեթոդով, որով ուսուցիչը հետո պետք է աշխատի դասարանում, որպեսզի ուսուցիչները յուրացնեն նաև մեթոդը:

Ավագ և միջնակարգ դպրոցների ուսուցիչների՝ աշխատանքի ընդունելության պահանջները նույնն են: Հարցաշարը տեղադրված է ԿԳՆ կայքում, բոլորին հասանելի է, որպեսզի ապահովվեն

հավասար պայմաններ: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հաղթահարի նվազագույն պահանջը ավագ դպրոցում/դասարաններում դասավանդելու համար: Տարրական դպրոցի ուսուցիչը չի կարող դասավանդել ավագ կամ միջին դպրոցներում: Բացառություն կարող է արվել միայն սահմանամերձ գոտիում՝ կադրային խնդիրներից ելնելով:

Փորձագետների կարծիքով՝ ուսուցիչների աշխատանքի ընդունելության ժամանակ նրանց մասնագիտական որակները չեն ստուգվում, ոչ մի չափանիշ չի կիրառվում, միայն օրենսդրական հարցեր են: Չի կարևորվում, չի ստուգվում, թե ուսուցիչը դասի պլան գիտի կազմել, թե ոչ, գնահատել գիտի, թե ոչ: Փորձագետների դիտարկմամբ, ուսուցիչների մեծ մասը դասի պլանը սխալ է կազմում կամ ընդհանրապես չի գրում, մեծ մասը չի կարող հստակ նկարագրել, թե ինչ է նշանակում դասի ուսումնական նպատակ, զարգացնող նպատակ, դաստիարակչական նպատակ: *«Եվ այդ բոլոր մարդիկ չեն ամաչում դրանից և ոչ մի ջանք չեն կիրառում, որպեսզի գնան մի բան սովորեն ու գան, էդ բացը իրենց մոտ լրացնեն: Հիմա քանի դեռ մենք չենք հասել նրան, որ ուսուցիչը աշխատի և իմանա, որ եթե ինքը չունի համապատասխան գիտելիքներ. որի արդյունքում նա կարող է գրկվել աշխատանքից, ապա այս վիճակը շարունակվելու է»:* (Փորձագիտական կարծիք)

Վերապատրաստումների ժամանակ առանձին հոգեբանություն չի ուսումնասիրվում, որովհետև վերապատրաստման ժամանակ չի ենթադրվում ուսուցիչ պատրաստել, այլ ենթադրվում է ուսուցիչ վերապատրաստել: Վերապատրաստումների ծրագիրը կազմելիս՝ իրականացվել է կարիքների գնահատում, հաշվի է առնվել ուսուցիչների կարծիքը: Փորձագետների պնդմամբ, ուսուցիչներից շատերը նշում են, որ ուզում են իրենց առարկան սովորել: Իսկ ֆոկուս-խմբերի ժամանակ ընդգրկված ուսուցիչները նշեցին, որ կցանկանային վերապատրաստումներ անցնել հոգեբանական թեմաներով, հասունացման տարիքի երեխաների հետ աշխատանքի, միջանձնային փոխհարաբերությունների, կոնֆլիկտների հաղթահարման և կարգավորման վերաբերյալ:

Նախկինում գործող օրենքով, դպրոցը պայմանագիր էր կնքում վերապատրաստող 14 կազմակերպություններից որևէ մեկի հետ: Բայց ՀՀ Վերահսկիչ պալատի և վարչապետի (խոսքը Տ. Մարգարյանի մասին է) վերահսկողության ծառայության ուսումնասիրությունների արդյունքում, համարվեց, որ դա տնտեսապես արդյունավետ չէ և որոշվեց, որ վերապատրաստումներն իրականացնի միայն Կրթության ազգային ինստիտուտը, որովհետև դա ԿԱԻ աշխատանքային պարտականությունների մեջ է մտնում: Թեև փորձագետները համարում են, որ մրցակցության մեջ է որակը, և այդ կազմակերպությունները բավականին հաջող սկսել էին մրցակցել: Նրանց տրամադրվել էր տեխնիկա, մեթոդական գրականություն և շատերն արդեն կողմնորոշվում էին, թե որ կազմակերպությունն է լավ դասվար վերապատրաստում, որը՝ ինֆորմատիկայի ուսուցիչ: Ավագ դպրոցների ուսուցիչներին վերապատրաստել է Կրթության ազգային ինստիտուտը:

Վերապատրաստումների արդյունավետության վերաբերյալ փորձագետներից ոմանք բավականին քննադատական դիրքորոշում ունեն՝ համարելով, որ անգամ շատ բարձր որակի վերապատրաստումները քարացած համակարգում արդյունավետ աշխատելու հնարավորություն չեն տալիս: Եթե ուսումնական պլանը դառնա ավելի լիբերալ, ապա կատարած ծախսն ու չարչարանքը արդյունք կտա:

«Երբ մեր դասատուներն են գնում վերապատրաստման ու գալիս են՝ ասում ենք՝ ո՞նց էր: Ասում են՝ դե հիմար բան էր, մենք ինչ գիտեինք, էդ էին ասում, բան էլ չենք սովորել: Հարց է առաջանում՝ բա էլ տնօրենը ինչո՞ւ է ուղարկում վերապատրաստման, եթե բան չեն սովորելու, կամ ինչի են այդքան գումարներ ծախսվում դրա վրա»: (Փորձագիտական կարծիք)

«Խնդիրն այն է, որ վերապատրաստողները դպրոց չեն մտնում, նրանք ուսուցիչներ չեն, նրանք մանկավարժներ չեն, նրանք պարզապես գրքերով սովորած մարդիկ են՝ սուրճի սեղանի շուրջ»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Իջևան)

«Եթե ԿԱԻ վերապատրաստումները լավը լինեին, 450 մլն-անոց վերապատրաստումը «Այբ»-ը չէր անի, այլ իրենք կանեին»: (Փորձագիտական կարծիք)

Հարցված փորձագետները հաճախ անդրադառնում էին վերապատրաստող մանկավարժների բարձր տարիքային ցենզին, որը բացասաբար է անդրադառնում ինչպես դասավանդման որակի, այնպես էլ վերապատրաստումների արդյունավետության վրա. *«Միայն իրենց տարիքային ցենզը նայեք: Կարծես թե թոշակառուների միություն լինի»:* (Փորձագիտական կարծիք)

Ավագ դպրոցների տնօրենների վերապատրաստման հետ կապված՝ փորձագետներից մեկը բարձրաձայնեց հետևյալ խնդիրը: Ոչ մի դպրոցի տնօրեն չի անցել դասընթաց, որը կտվորեցնի ղեկավարման ու կառավարման տեսություն: Եթե տնօրենը կառավարչական հմտություններ չունի, ապա չի կարող կառավարել դպրոցի նման բարդ կառույցը: Տնօրենը պետք է իմանա կառավարել, որ իր անձնակազմին կառավարի այնպես, որ նրանք իրենց պարտականությունները կատարեն:

Վերապատրաստված ուսուցիչների հետ հետադարձ կապ պահպանելու նպատակով, հոկտեմբերից մինչև մարտ ամիսը ԿԱԻ մասնագետներն ունեն դպրոցներում դասալսումների միջոցով մշտադիտարկում իրականացնելու գրաֆիկ: Մշտադիտարկումը հետևյալ նպատակն է հետապնդում՝ տեսնել ինչպես է տվյալ ուսուցիչը կիրառում դասընթացում ստացած նյութը: Բացի այդ, ուսուցիչներն ունեն վերապատրաստող կազմակերպության բոլոր կոնտակտային տվյալները և, անհրաժեշտության դեպքում, առաջացող հարցերի դեպքում կարող են իրենք դիմել: Հետադարձ կապի ևս մեկ միջոց է վերապատրաստող կազմակերպության հետ պայմանագրի կրկնակի կնքումը կամ կասեցումը:

«Ոչ մի հետադարձ կապ էլ չկա»: (Փորձագիտական կարծիք)

Ի դեպ, «Այբ» կրթական հիմնադրամը ԿԳՆ կողմից ճանաչվել է վերապատրաստող կազմակերպություն և ունի ուսուցիչների վերապատրաստման հնարավորություն և իրավունք: «Այբ» կրթական հիմնադրամը մշակել է Կրթության գերազանցության ազգային ծրագիրը: Այդ ծրագիրը կազմելիս՝ բազմաթիվ ուսումնասիրություններ են արվել, մոդելներ են ուսումնասիրվել: Ծրագիրը ուղարկվել է Քեմբրիջի համալսարան և Լոնդոնի կրթության ինստիտուտ, որտեղ ուսումնասիրվել և լրամշակվել է: Ծրագիրը հաստատվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից և ներկայումս իրականացման փուլում է:

Կրթության գերազանցության ազգային ծրագրով նախատեսվում է ՀՀ դպրոցներում ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան հայալեզու կրթական ծրագիր՝ «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ), և պատրաստել ԱԲ-ի որակավորմամբ ուսուցիչներ: Ուսուցիչների վերապատրաստմամբ զբաղվելու է «Այբ» կրթական հիմնադրամը, իսկ միջազգային գործընկերները մշտադիտարկելու են գործընթացը, նրանք են վերապատրաստումից հետո ուսուցչներին միջազգային որակավորում տալու: Ծրագրի առանձնահատկությունն այն է, որ այս վերապատրաստումների համար կարող են դիմել ինչպես արդեն աշխատող, գործող ուսուցիչները, այնպես էլ նրանք, ովքեր հիմա մագիստրատուրայում են սովորում և ուսուցիչ պետք է դառնան: Հիմնական պահանջը ընդունվելու պահին պետք է լինի մագիստրոսական աստիճանը ու առարկայի խորը իմացությունը: Ծրագրին կարող են դիմել նաև ուսուցիչ երբևէ չաշխատած մարդիկ, բայց որոնք ուզում են իրենց փորձեն դասավանդման ոլորտում: Կարևոր պայմանն այն է, որ յուրաքանչյուր ուսուցիչ, որ ԱԲ որակավորում կստանա, պարտադիր պետք է ևս 10 հոգու վերապատրաստի: Արդյունքում շուրջ 2000 ուսուցիչ կանցնեն այդ վերապատրաստումը:

Վերապատրաստված ուսուցիչներն անընդհատ մշտադիտարկվելու են՝ ի՞նչ են անում, ինչի՞ են հասել: ԱԲ-ի հավաստագիր ունեցողներին խրախուսելու և պարգևատրելու համար, հավաստագրմանը հաջորդող ակադեմիական տարվանից սկսած՝ այդ ուսուցիչների համար աշխատավարձի չափի բարձրացում կլինի (երկու մակարդակով՝ ԱԲ ավագ ուսուցչի և ԱԲ ուսուցչի), բայց այն պայմանով, որ նրանք շարունակեն կատարել հավաստագրի պահանջները՝ ներառյալ մասնագիտական աճի ապահովումը և մենթորության առաջադրանքները:

Այս ծրագրի հետ կապված՝ որոշ փորձագետներ կասկածներ հայտնեցին, որոնք վերաբերում են «Այբ»-ի փորձի ունիվերսալացման հնարավորություններին: Հիմնական փաստարկն այն է, որ պետության կողմից մեկ տարվա մեջ մեկ աշակերտին հատկացվող գումարը էապես ավելի քիչ է

124.000 ՀՀ դրամ, իսկ «Այբ» կրթական հիմնադրամը տասնյակ անգամներ ավելի է ծախսում մեկ երեխայի կրթության վրա:

Փորձագիտական հարցման ընթացքում հարցվողները բազմիցս անդրադարձան ուսուցիչների ցածր վարձատրության և կրթության որակի միջև կապին: Եթե ուսուցիչը կարողանա աշխատավարձով իր նվազագույն կենսական պայմաններն ապահովել, ապա կնվիրվի իր աշխատանքին: Բայց եթե նվազագույնը չի բավարարվում, ապա նա ակամայից իր ողջ ուշքն ու միտքը այլ հոգսերի վրա է դնում:

Ուսուցիչները հնչեցրին նաև իրենց կարգավիճակի հետ կապված խնդիրը, ուսուցչի հանդեպ հարգալից վերաբերմունք չունեն ո՛չ աշակերտները, ո՛չ ծնողական համայնքը, ո՛չ էլ ԿԳՆ-ը: ԿԳՆ նախաձեռնությամբ գործող «Թեժ գծին» կարող է ահազանգել յուրաքանչյուրը, երբ դպրոցում խնդիրներ են առաջանում ուսուցիչների հետ կապված: *«Ղա մեր համար 37 թվի պես մի բան է, քանի որ հենց մի չնչին բան է լինում, ծնողը միանգամից զանգում է թեժ գիծ ու քանի որ դու պոտենցիալ հանցագործ ես, ապա քո հարցը ընդհանրապես չի քննարկվում՝ ով ուզում ես եղի»:* (Փորձագիտական կարծիք)

«Մի աղջիկ աշակերտ ունենք, անընդհատ բացակայում է և դուրս մնալու եզրին է: Երբ հայրը եկավ, ես ասացի՝ կարգն այդպես է, դուրս է մնում երեխան: Հայրը որոշեց բողոքել նախարարություն: Նախարարությունից ինձ ասեցին՝ մեղք չի՞, երեխային 12-րդ դասարանում թողնում ես նույն դասարանում: Ես էլ ասում եմ՝ բայց ձեր կարգով է այդպես պահանջվում, ի՞նչ անեմ, չդնե՞մ բացակայությունը: Նախարարությունը պատասխանում է՝ դիր բացակայությունը, բայց այնպես արա, որ 200 ժամ չլինի»: (Փորձագիտական կարծիք)

«Գիտե՞ք, թե ինչ ճնշումների են դպրոցները ենթարկվում: Սարսափելի է: Ով ասես, ինչ հարցով ասես մեզ է դիմում: Ու շատ դժվար է, շատ»: (Փորձագիտական կարծիք)

Կրկնուսույցների մոտ պարապելու հիմնական պատճառներն ու հետևանքները

Փորձագետների կարծիքով, այն, որ կրկնուսույցների ծառայություններից օգտվողների թիվը չի նվազում, վկայում է, որ ավագ դպրոցն այնքան էլ լավ չի իրականացնում իր գործառնությունները: Եթե կրկնուսույցի մոտ պարապելը տարածված լիներ միայն որոշակի նեղ, բավականաչափ ունևոր խավի մոտ, ապա այլ հարց: Բայց, քանի որ գրեթե բոլոր շրջանավարտները կրկնուսույցների մոտ են պատրաստվում բուհ ընդունվելու համար, ապա դա նշանակում է, որ դպրոցը նրանց չի տալիս այն, ինչ պետք է նպատակին հասնելու համար: Սա նշանակում է, որ ավագ դպրոցը չի լուծում իր առջև դրված խնդիրը:

«Նույնիսկ ամենախեղճ ապրող ընտանիքն էլ գումար կգտնի և երեխային կուղարկի կրկնուսույցի մոտ: Պահանջարկը կա, դասատուն ընենց է դասավանդում, որ կարիքը պարապելու կա: Արդյունքում ուսուցիչը իր 100 000 դրամի փոխարեն կարողանում է 200-300 000 դրամ ամսական ստանալ»: (Փորձագիտական կարծիք)

Այսօր իրավիճակը այնպես է շրջվել, որ շատ ուսուցիչներ կրկնուսույցմամբ են գումար վաստակում: Եվ որպեսզի նրանք կարողանան աշակերտներ ունենալ, հաճախ դասարանում թերի են դասավանդում, որպեսզի աշակերտները լրացուցիչ պարապելու համար դիմեն: Եվ աշակերտները բազմաթիվ կրկնությունների արդյունքում սովորում են՝ ինչ վարժության դեպքում ինչպիսի պատասխաններ պետք է գրեն: Ստեղծվել է պարադոքսալ վիճակ՝ դպրոցները, հատկապես ավագ, ամեն կերպ փորձում են լավ մասնագետներին, լավ կրկնուսույցներին իրենց մոտ բերել, որ աշակերտներ ներգրավեն: Իսկ ուսուցիչներին ձեռնտու է դասավանդել հարուստ թաղամասերի դպրոցներում, որպեսզի շատ աշակերտներ ունենան՝ գումար վաստակեն:

«Երբ ասում են, որ այս դպրոցի շրջանավարտը հանգիստ գնում է իր մասնագիտությամբ քննությունները հանձնում է, ընդունվում է բուհ, այդպիսի բան գոյություն չունի: Այդ դպրոցները համբավ են ձեռք բերել, որպեսզի այնտեղ կրկնուսույցների միջոցով պարապեն և երեխաները հանձնեն քննությունները»: (Փորձագիտական կարծիք)

Կրկնուսույցությունը չի կարելի դիտարկել գուտ որպես չարիք: Այն ունի որոշակի գործառույթներ: Նախ՝ այն լրացնում է հանրակրթության բացերը: Երկրորդը՝ եթե երեխան ուզում է սովորել ավելի շատ բան, քան իրեն տրվում է դպրոցում, դա միայն խրախուսելի է: 9-10-րդ դասարաններում, երբ երեխան հայտնաբերում է, որ շատ բաներ չգիտի, կրկնուսույցումը լրացնելու ամենառացիոնալ ձևն է, ուղղակի ծախսատար է:

Այլ խնդիր է, որ դա խանգարում է հանրակրթությանը. երեխան ամբողջ գիշեր կրկնուսույցի հանձնարարած վարժություններն է լուծել, չի քնել, ուստի ցերեկը չի կարող գալ դպրոց և լիարժեք մասնակցել դասապրոցեին: Մյուս կողմից՝ եթե կրկնուսույցը նույն դպրոցի ուսուցիչն է, նա ունի շահագրգռվածություն այդ հարցում: Այսօր ևս մեկ արատավոր երևույթ է առաջ եկել. շատ դեպքերում երեխան ընդհանուր միտումին ենթարկվելով, ասում է, որ պարապում է, դրա համար էլ դասի չի գալիս, բայց պարզվում է, որ ոչ մի տեղ էլ չի պարապում: Մյուս խնդիրն էլ այն է, որ կրկնուսույցները պարապում են ոչ թե հավելյալ գիտելիք տալու համար, այլ բուհի քննությունները հանձնելու համար, և, արդյունքում, չեն ապահովում հիմնավոր գիտելիք:

Շատ փորձագետներ շտեմարանն անվանեցին կրթության աղետ: Հակասական է, երբ շտեմարանն է ընդունելության քննության հիմքը: Այն անուղղակիորեն արժեզրկում է դասը, դասագիրքը, ստեղծագործական կարողությունները, հաղորդակցական կարողությունները: Երեխան գիտի, որ շտեմարանի նյութը պետք է անգիր անի, վարժվի տեխնիկապես, ունակ լինի թեստերը լրացնել ու կընդունվի: *«Մի ոտքով գազն ենք սեղմում, մյուս ոտքով՝ տորմուզը. մի ոտքով ավագ դպրոց ենք ստեղծել, մյուս ոտքով պայման ենք ստեղծել, որ ավագ դպրոցը չկայանա»:* (Փորձագիտական կարծիք)

«Ավագ դպրոցը ստեղծվեց, որպեսզի աշակերտն էլ չգնա կրկնուսույցի մոտ, սակայն դա չեղավ, չարդարացրեց իրեն»: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

Ավագ և միջնակարգ դպրոցների ֆինանսական կառավարումը

«Չի կարելի ազգիդ մեծ վնաս հասցնել աշակերտների թվով ֆինանսավորմամբ մի քիչ ավել փող ունենալու համար: Դա անբարոյականություն է, որի դեմ պայքարել է պետք»: (Փորձագիտական կարծիք)

ՀՀ-ում դպրոցի բյուջեն ձևավորվում է երկու բաղադրիչներից: Մեկը՝ կախված է աշակերտների թվից, մյուսը՝ կախված չէ: Այդ բաղադրիչներից յուրաքանչյուրն իր նշանակությունն ունի: Այն, որը կախված չէ աշակերտների թվից, համահավասարեցման նպատակ ունի, որպեսզի հավասար պայմաններ ստեղծվեն դպրոցների համար: Երկրորդ բաղադրիչի նպատակն է մրցակցության խթանումը: Կախված աշակերտների թվից՝ որքան բարձրանա գումարը, այնքան դպրոցների միջև մրցակցությունը կխթանվի: Որքան կմեծանա մյուս բաղադրիչը, այնքան մրցակցությունը կնվազի և հավասար պայմաններում կհայտնվեն դպրոցները:

Ավագ մակարդակի դասարանների ֆինանսավորումը ավագ և միջնակարգ դպրոցներում տարբեր են: Կրթության մակարդակների ֆինանսավորման գործակիցները յուրաքանչյուր տարի համատեղ որոշում են ՀՀ ֆինանսների և ԿԳ նախարարները: Ֆինանսավորման գործակիցներով ավագ դպրոցի ֆինանսավորումը ավելացվեց այնքանով, որքանով կրճատվեց հիմնական դպրոցի ֆինանսավորումը: Գործակիցների ձևավորման տրամաբանության հիմքում ընկած է սովորողների թվի և ծախսերի հարաբերակցությունը: Տարրական դպրոցում դասարանների խտությունը ավելի մեծ է, դասաժամերը ավելի քիչ են, ուստի պահանջվող ծախսերը ավելի քիչ են: Բնականաբար, այստեղ մեկ սովորողի ծախսերն ավելի քիչ են: Ավագ դպրոցում ուսուցչի որակավորումը բարձր է, դասարանի կազմը փոքր է: 2015 թվականի ըստ աշակերտների թվի ֆինանսավորման գործակիցների սահմանման մասին համատեղ հրամանի համաձայն, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը կազմում է 124 000 դրամ: Տարրական մակարդակի համար կիրառվող գործակիցն է 0.8042, միջին մակարդակի՝ 1.1179, և ավագ՝ 1.1581, իսկ ավագ դպրոցների համար, բացի սրանից, կիրառվում է նաև լրացուցիչ գործակից՝ 1.14: Արդյունքում

ստացվում է, որ ավագ դպրոցների ֆինանսավորումն ավելի բարձր է, քան միջնակարգ դպրոցինը:

Սակայն, ավագ դպրոցում ծախսերը մեծանում են, քանի որ դասարանի միջին խտությունը ավելի ցածր է՝ 20-25 հոգի, սա բերում է հավելյալ դասարանների, ուսուցիչների, աշխատավարձի ծախսերի: Բացի այդ, էթե հիմնական մեծ դպրոցներն ունեն 1000-ից ավելի աշակերտ, ապա ավագ մեծ դպրոցները՝ մինչև 500: Արդյունքում, չնայած ֆինանսավորման գործակցային առավելությունների, ավագ դպրոցները համեմատաբար ավելի վատ ֆինանսական վիճակում են, քան միջնակարգ դպրոցները, քանի որ ավագ դպրոցի ընդհանուր աշակերտներն ավելի քիչ են, քան միջնակարգ դպրոցի ընդհանուր աշակերտները:

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման էությունն այն է, որ ինչքան շատ աշակերտ ունենա դպրոցը, այնքան շատ ֆինանսավորում կստանա: Եթե դպրոցը շատ ծառայություն է մատուցում շատ երեխաների, ուրեմն պետք է համարժեք ֆինանսավորվի:

Սակայն, այսպիսի մոտեցումը հնարավորություն չի տալիս ֆինանսավորել ըստ տվյալ դպրոցի կարիքների: Ֆինանսավորման ձևավորված համակարգը ելնում է առկա գումարից: Առկա գումարը՝ բաժանելով աշակերտների թվի վրա, ստանում են մեկ աշակերտին հասանելիք գումարը. *«Ուզում եք տեղավորվեք, ուզում եք մի տեղավորվեք»:* (Փորձագիտական կարծիք) Նման մոտեցումը կրթական ծառայությունների որակի բարելավման հնարավորություն չի տալիս: Ֆինանսավորման կարգը համաձայնեցված չէ առկա թանկացումների հետ. դպրոցի ջեռուցումը, էլեկտրականությունը նույնպես թանկանում են: Իրականում, ֆինանսավորման կարգի փոփոխությունը ծառայեց մեկ նպատակի՝ պահպանել հաստատությունները: Այսինքն՝ այդ կրթական հաստատությունը իրականում պահանջարկ չունի, բայց պետությունը գումար է ծախսում այն պահպանելու համար. *«Պետք էր ոչ թե փակվողների վրա ուշադրություն դարձնել, այլ ծնվողների վրա»:* (Փորձագիտական կարծիք)

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորումը ստեղծում է մրցակցություն ավագ և միջնակարգ դպրոցների միջև: Երկուսն էլ շահագրգռված են մեծ թվով աշակերտներ ունենալ: *«Մենք էլ ենք ուզում, որ մեր աշակերտները մնան, չգնան ավագ դպրոց, որովհետև ֆինանսավորման հարց կա: Արդյունքում մենք ապակողմնորոշում ենք և՛ ծնողին, և՛ աշակերտին»:* (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

Սկզբունքորեն, անցնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման քաղաքականությանը՝ պետությունը ծախսման քաղաքականությունը վերապահում է դպրոցին: Դպրոցն է որոշում՝ տրամադրված գումարից ինչքանը ինչի վրա ծախսել: Դպրոցի տնօրինությունը դպրոցական խորհրդի հետ մեկտեղ որոշում են ծախսերի ուղղությունները: Սակայն, բարդությունը ծախսելու այլընտրանքային տարբերակների չլինելու մեջ է: Տրամադրված գումարն այնքան սահմանափակ է, որ մի մասը ծախսվում է կոմունալ վճարների վրա, իսկ մեծ մասը՝ աշխատավարձի վրա: Եթե մնում է մի քիչ գումար, պատճենահանող սարքն են լիցքավորում և այլ մանր ծախսեր անում:

Աշակերտների թվով ֆինանսավորման մեջ ընդգրկված չեն ուսուցիչների վերապատրաստումները, դասագրքերը, շինությունների հիմնավերանորոգումը և այլն: Դպրոցի ֆինանսավորման բանաձևը արտադասարանական աշխատանքների համար գումար ընդհանրապես չի նախատեսում, իսկ արտադասարանականը անհրաժեշտ է նախ՝ դաստիարակության առումով, գիտելիքների խորացման առումով, մասնագիտական կողմնորոշման առումով: Ստացվում է, որ պետությունն ըստ աշակերտների թվի ֆինանսավորման միջոցով դպրոցներին տրամադրում է հիմնականում ուսուցիչների աշխատավարձը:

Ֆինանսավորման տվյալ կարգը փորձագետները սկզբունքորեն ընդունելի են համարում, բայց ճշգրտումներ և էական վերապահումներ պետք է արվեն՝ կախված բնակավայրի առանձնահատկություններից, դպրոցի տեսակից, գտնվելու վայրից:

Ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի ևս մեկ խնդիր պայմանավորված է նրանով, որ աշակերտների թիվը նվազում է: Դա հատկապես կապված է 2015 թվականին հիմնական դպրոցների շրջանավարտների թվի կրճատման հետ: Այս կապակցությամբ ՀՀ

վարչապետը հրահանգել է, որ ԿԳՆ-ը լուծում գտնի, որը դեռևս մշակման փուլում է: Հիմնական առաջարկն այն է, որ 2015-2016 ուս. տարվա համար կավելացվի ավագ դպրոցների գործակիցը, որպեսզի ավագ դպրոցները ֆինանսական ճգնաժամի մեջ չհայտնվեն:

Ավագ և միջնակարգ դպրոցների լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունները

Ե՛վ ավագ, և՛ միջնակարգ դպրոցները հնարավորություն ունեն օգտվելու ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներից, այդ թվում՝ մրցութային հիմունքներով ՀՀ պետական բյուջեից, վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցներից, բարեգործական, նպատակային ներդրումներից, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվություններից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված և դպրոցի կանոնադրությամբ չհակասող գործունեությունից ստացված միջոցներից:

Հարկային առումով դպրոցներն ունեն որոշակի արտոնություն: Ըստ օրենքի, դպրոցները կարող են վճարովի լրացուցիչ ծառայություններ մատուցել: Օրենքով սահմանված է մատուցվող վճարովի ծառայությունների ցանկ, որը դպրոցի համար հարկային պարտավորություններ չի առաջացնում, դրանից ստացված հասույթը մնում է դպրոցին, այն չի համարվում առևտրային գործունեություն: Մակայն, դպրոցներն այդ հնարավորությունից չեն օգտվում, խուսափում են, քանի որ դա կարող է երկակի դիտարկվել: Մրցութային հիմունքներով ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման պահանջները շատ խիստ են և, բոլոր փորձագետների պնդմամբ, տարեցտարի այդ միջոցներին դիմում և շահում է, օրինակ, Մխիթար Մեբաստացի կրթահամալիրը՝ «Բլեյանի դպրոցը»: Մակայն, իրականում այն ոչ թե մրցութային հիմունքներով է պետությունից ֆինանսավորվում, այլ՝ ոչ մրցութային, քանի որ ծրագիր է ներկայացվում, հաստատվում և իրականացվում: Մեկ ուրիշ օրինակ, Ֆիզմաթ դպրոցը ֆինանսավորվում է օլիմպիադաների ծրագիրն իրականացնելու համար:

Քաղաքացիների նվիրատվությունները դպրոցին հաճախ կոռուպցիոն ռիսկեր են առաջացնում: Մի կողմից, կան իսկապես բարեգործական ցանկություններ, իսկ մյուս կողմից՝ եթե բարեգործի երեխան սովորում է դպրոցում, դա դարձյալ կոռուպցիոն ռիսկ է առաջացնում: Խնդիրը նաև միջոցների ծախսման թափանցիկության մեջ է. եթե գումարը փոխանցվում է դպրոցի հաշվին, դա արդեն վերահսկվող գումար է: *«Իրականում այսօր շատ բարեխիղճ տնօրեններ ասում են այս բանը եկեք արեք գնացեք, ոչ փողն են ուզում, ոչ էլ»:* (Փորձագիտական կարծիք)

Ավագ դպրոցում կրեդիտային համակարգի ներդրման հեռանկարները

Ավագ դպրոցում կրեդիտային համակարգի ներդրման նախագիծը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Քննարկվում են ամենատարբեր մոտեցումներն ու գաղափարները: Սույն հաշվետվության մեջ բերված են այն մտահոգությունները, որոնցով կիսվեցին ՀՀ կրթության ոլորտի փորձագետները:

Կրեդիտը արտացոլում է աշակերտի ծանրաբեռնվածությունը, որը նա ստանձնում է և որակյալ արդյունք ստանում: Հանրակրթության ընթացքում ստացած այդ արդյունքով աշակերտը շարունակական կրթության մեջ անցում է կատարում աստիճանից աստիճան, համակարգից համակարգ, հանրակրթությունից դեպի մասնագիտական կրթական ծրագրեր. դա կլինի քոլեջ, բուհ և այլն: Կրեդիտային համակարգը, ցկյանս շարունակական կրթության համատեքստում, ապահովում է աշակերտի շարժունություն և ճկունություն: Կրեդիտային համակարգը հնարավորություն կտա, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ լինի ավելի ճկուն, կարողանա ընտրել շատ առարկաներ անցնել ընդհանուր մակարդակով, թե ավելի քիչ առարկաներ, բայց խորացված, որպեսզի ծրագիրը համապատասխանի երեխայի նախասիրություններին: Կրեդիտային համակարգը պետք է աշխատի ի նպաստ աշակերտի, որն իր կատարած յուրաքանչյուր աշխատանքի համար կգնահատվի: Դա ենթադրում է և՛ ծառատունկին մասնակցությունը, և՛ ռեֆերատ գրելը, և՛ դասին պատասխանելը: Համայնքային, դպրոցական,

հասարակական կյանքին մասնակցությունը պետք է արտացոլվի կրեդիտների միջոցով: Մա վերաբերում է հատկապես գյուղական բնակավայրերի դպրոցներին, որտեղ դպրոցը նաև մշակութային կյանքի կենտրոն է: Կրեդիտները կկարևորեն երեխայի մասնակցությունը համայնքային կյանքին, կխրախուսեն ակտիվությունը, կմոտիվացնեն աշակերտներին, հետագայում կբացեն նրա առջև նաև բուհի դռները:

Կրեդիտային համակարգն ամբողջական կրթության ապահովման հիմքն է: Մի կողմից, աշակերտը բաց չի թողնի և ոչ մի ոլորտ, մյուս կողմից, նա հնարավորություն կունենա ըստ ցանկության խորացնել որևէ ոլորտում իր գիտելիքները: Հիմնական ռիսկն այն է, որ հնարավոր չի լինի պահպանել բավանսը ոլորտների միջև, որպեսզի այդ տարիքի երեխան հավասարաչափ զարգանա բոլոր ոլորտներում, այլ ոչ թե խուսափի որոշ առարկաներից՝ համարելով, որ դա նրան պետք չէ: Պետք է կիրառվի կրեդիտների հավաքման և փոխանցման համակարգը, որպեսզի ստեղծվի մոտիվացվածություն. ուսուցիչը սովորեցնելու նպատակը հստակեցնի, իսկ աշակերտը հասկանա, թե ինչու է սովորում, գնում դասի:

ԿԳՆ-ում կրեդիտային համակարգի ներդրման գործում կարևորում են նաև ծնողական համայնքի աջակցությունը, ինչը ենթադրում է ծնողական համայնքի իրազեկում և հանրային քննարկումներ:

Որպես կրեդիտային համակարգի ներդրման առավելություն, նշվել է այն, որ երեխան հավաքած կրեդիտները դպրոցից կարող է տանել բուհ, ինչը կմոտիվացնի նրան լավ սովորել դպրոցում: Եթե առաջին կուրսի ուսանողին հնարավորություն տրվի բուհում ազատվել այն առարկաների ունկնդրումից և վճարից, որոնցից նա առավելագույն կրեդիտներ ունի, օրինակ՝ պատմություն, մաթեմատիկա, հայոց լեզու, օտար լեզու և այլն, ապա դա կմոտիվացնի աշակերտին: *«Եթե ուսանողը ուզում է տնտեսագետ դառնալ, կտանի համաշխարհային պատմության և տնտեսական աշխարհագրության իր կրեդիտները, և այդ առարկայից կամ այդ թեմայից կազատվի և փողը չի վճարի»:* (Փորձագիտական կարծիք)

Իհարկե, այս համակարգը կպահանջեր կրեդիտների արդարության և արժանահավատության ստուգման համակարգ: Մակայն, այս առաջարկը մերժվեց, քանի որ նման համակարգը կարող էր վտանգել բուհերի հայերենի, մաթեմատիկայի, պատմության և այլ առարկաների դասախոսների ծանրաբեռնվածությունը:

Կրեդիտային համակարգը պահանջում է փոփոխություններ ամբողջ կրթության համակարգում՝ և՛ դպրոցում, և՛ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ ՄՄՈՒՀ), և՛ բուհում: Բուհը պետք է ճանաչի կրեդիտները, ուսանողը պետք է ազատ, ձկուն ուսանողական կյանքի սցենարներ ունենա: Դրանից բացի, կրեդիտային համակարգն ամբողջ աշխարհում գալիս է բուհից, ոչ թե դպրոցից: Դա բուհի պատվերը պետք է լինի:

Կրեդիտային համակարգը, նախ, պետք է սկսի միջին մասնագիտական համակարգում գործել և կարողանա ապահովել միջին մասնագիտական ծրագրից անցումը բարձրագույն կրթությանը: Միջին մասնագիտական համակարգում կրեդիտային համակարգը չներդնելով, այն անիմաստ կլինի դպրոցում: Հնարավոր չէ միայն առանձին վերցրած ավագ դպրոցում ներդնել այն: Մասնավոր դպրոցներում կան համակարգեր, բայց դրանք գործուն կրեդիտային համակարգեր չեն: Օրինակ, կան գնահատման սանդղակներ, որոնք կազմում են եվրոպական կրեդիտի մի մաս, փոքրիկ ֆրագմենտար երևույթներ են: Հայեցակարգային առումով ճշտված չէ՝ ինչ է նշանակում հանրակրթական կրեդիտ և որոնք են հանրակրթության ոլորտում կրեդիտային համակարգի պրոյեկցիաները:

Եվս մեկ մտավախություն կապված է նրա հետ, որ կրեդիտային համակարգը կարող է ուղղակի փոխարինել միասնական քննություններին: Այսինքն՝ կրեդիտային համակարգը ոչ թե գնահատելու է երեխայի աճը, այլ լինելու է անցագիր դեպի բուհ: Իսկ դա նշանակում է, որ նորից ընթացքում երեխան կարող է չսովորել, այլ քննությունից առաջ անգիր անել, գնալ, հանձնել ու ընդունվել, ինչը կվատթաբացնի առկա վիճակը:

Եվս մեկ մտավախություն էլ կապված է նրա հետ, որ մի դպրոցը կարող է ազնվորեն կիրառել կրեդիտային համակարգը, իսկ մյուսը՝ ուղղակի կբաժանի կրեդիտները:

Որոշ փորձագետների կարծիքով, դպրոցում կրեդիտային համակարգին անցնելու կարիքը դեռևս չի հասունացել: Բացի այդ, ՀՀ բուհերում արդեն ներդրված է կրեդիտային համակարգը, բայց դեռևս ձևական բնույթ է կրում. բուհից բուհ կրեդիտների տեղափոխման մեխանիզմը հստակեցված չէ, ուսանողներն այդ համակարգի իմաստը չեն հասկանում: *«Իմ դիրքորոշումը հետևյալն է. առաջին հերթին պետք է հասկանալ, թե ինչի համար է դա պետք դպրոցին կամ աշակերտին: Կրթությունը, ինչպես նաև յուրաքանչյուր համակարգ, պետք է ունենա նպատակ և այդ նպատակը պետք է համահունչ լինի և բխի պետության նպատակներից: Այդ նպատակների համակարգում տեղափոխվում են նաև յուրաքանչյուր քաղաքացու նպատակները: Սակայն, այսօր հստակեցված չեն ՀՀ նպատակները, հետևաբար հստակ չեն նաև կրթության ինստիտուտի նպատակները: Իսկ առանց հստակ նպատակադրման յուրաքանչյուր բարեփոխում վտանգված է»:* (Փորձագիտական կարծիք)

Առանձին խնդիր է առարկա-կրեդիտ հարաբերակցության հաշվարկման հնարավորությունը: Կրեդիտն ունի երկու գործիք՝ քանի ժամով է ուսումնասիրվել առարկան և ինչքան կրեդիտ է ստացել սովորողը դրանից: Այսինքն՝ մեկը կարող է ստանալ 10 կրեդիտ, բայց ուսումնասիրել առարկան 50 ժամով, իսկ մյուսը ստանալ նույն 10 կրեդիտը, բայց 100 ժամով: Սակայն դեռևս ճշգրտված չէ՝ ինչպես է Հայաստանում իրականացվելու կրեդիտների հաշվարկը: Առաջարկվող տարբերակը՝ առարկա/ժամ հաշվարկն է. եթե տվյալ առարկան անցնում են շաբաթական 3 ժամով 1 տարվա ընթացքում, ապա տարվա վերջում ունեն 3 կրեդիտ այդ առարկայից: Առարկաները բաժանվում են 4 բաղադրիչի՝ պարտադիր առարկաներ, սպորտ, արվեստ ու հասարակական աշխատանք: Երեխաները պարտադիր պետք է բոլոր բաղադրիչներով կրեդիտ հավաքեն: Կրեդիտները գնահատականների հետ կապ չունեն: Կրեդիտ երեխան ստանում է, եթե կարողանում է հաղթահարել նվազագույն շեմը: Բայց գնահատականները մեծ դեր ունեն հետագայում բուհ ընտրելու և ընդունվելու ժամանակ: Իսկ արդեն յուրաքանչյուր բուհ պետք է որոշի, ինչ ուսանող է իրեն պետք, ինչպիսի կրեդիտներով: Բուհը կարող է նայել՝ մեկն ունի 160 կրեդիտ՝ 3-5 ավել առարկաներ է ընտրել՝ գնացել, վազվզել, ամբողջ օրը պարապել է, մյուսը՝ 120 անհրաժեշտ կրեդիտն է հավաքել՝ առանց լրացուցիչ ջանքերի ու իր գնահատականները մի քիչ ավելի բարձր են: Բուհը, ուսումնասիրելով կրեդիտները, հասկանում է՝ նա, ով հավաքել է 160 կրեդիտ, ավելի աշխատասեր է, հասցրել է, շատ բաներով է հետաքրքրվել, պրպտող է, ինչպես նաև՝ տվյալ բնագավառում լավ առաջադիմություն ունի: Հիմնվելով այս պատկերի վրա՝ բուհն ընտրում է իր ուսանողին:

Եվս մեկ խնդիր է ավագ դպրոցներում հավելյալ խորհրդատվության կազմակերպումը աշակերտներին կրեդիտային համակարգից օգտվելու հարցում: Բնականաբար, կրեդիտային համակարգը պետք է երեխաներին մատչելի ձևով բացատրվի: Սակայն, ավագ դպրոցներում այսօր նման մասնագետներ չկան:

Ավագ դպրոցների ուսուցիչների կարծիքով, կրեդիտային համակարգը կնպաստի ավագ դպրոցների արժևորմանը և կրկնուսույցների ծառայություններից օգտվողների թվի կրճատմանը. *«Աշակերտը գիտի, որ ինքը դպրոցում սովորում է, որոշակի ժամկետից հետո ինքը ստանում է կրեդիտ, այդ կրեդիտի ստանալու պահը ապահովում է դպրոցը, ուստի կրկնուսույցը մեխանիկորեն մնում է խաղից դուրս: Ինքը իր հավաքած կրեդիտներով կգնա բուհ»:* (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Իջևան)

12-ամյա պարտադիր կրթակարգի ներդրման հեռանկարները

«Տասներկուամյա պարտադիր կրթակարգին անցնելու ԿԳՆ քաղաքականության տրամաբանությունն այն է, որ հասարակությունը ինչքան երկար է սովորում, այնքան՝ լավ»: (Փորձագիտական կարծիք)

Պարտադիր տասներկուամյա կրթության միջոցով հասարակությունն իր քաղաքացու առջև պահանջ է դնում. լիարժեք քաղաքացի ձևավորվում է այսպիսի սոցիալական միջավայրում 12 տարիների ընթացքում: Պետությունը պայման է դնում, որ քաղաքացին անվճար սովորի 12

տարի, դրանից հետո յուրաքանչյուրն ինքնուրույն է որոշում՝ շարունակել կրթությունը, թե՞ ոչ, և՛ ինչպես: Պարտադիր բառը շեշտադրում է պետության պարտավորությունները քաղաքացու առջև, այլ ոչ թե հակառակը:

ՀՀ ԿԳՆ տվյալների համաձայն, տարեկան շուրջ 4500 երեխաներ հիմնական դպրոցն ավարտելուց հետո չեն շարունակում կրթությունը: Իսկ եթե տասներկուամյա կրթությունը պարտադիր լինի, այդ երեխաները կշարունակեն կրթությունը, կսովորեն, կգարգանան: Այս քայլը դարձել է արդիական, քանի որ մեծ թվով երեխաներ դուրս են մնում կրթությունից, իսկ դա բացասաբար է անդրադառնում նրանց հետագա սոցիալական կյանքի վրա, և ի թիվս այլ խնդիրների՝ բարձրանում է անչափահասների կողմից հանցագործությունների կատարման տոկոսը:

Իսկ հասարակական և պետական մակարդակում մարդկային ռեսուրսների խնդիր է առաջանում. *«անգրագետ բանվորն էլ է վատ աշխատում»:* (Փորձագիտական կարծիք) Երբ պարտադիր կրթությունը 9-ամյա է, իսկ դրանից հետո այլևս համակարգը չի խթանում, որպեսզի մարդը որակավորում ձեռք բերի, ապա ձևավորվում է հասարակության որոշակի հատված, որը որակավորում չունեցող աշխատուժ է: Նրանք մեկ-երկու տարի կարող են իրենց հողատարածքում աշխատել, բայց գյուղատնտեսական գործունեությունը զարգացնելու և արդյունք ստանալու համար պետք է գյուղատնտեսական գիտելիքներ ունենան: Տասներկուամյա պարտադիր կրթության նպատակն այն է, որ մարդը մտնի աշխատաշուկա ինչ-որ որակավորում ունենալով:

Բացի այդ, հանրակրթության երրորդ մակարդակում կրթությունը չշարունակող երեխաների թիվը դեռ շատ մեծ չէ, և պետությունն ի վիճակի է այսօր ֆինանսավորել այդ հատվածի կրթությունը պարտադիր տասներկուամյայի շրջանակներում:

Որոշ փորձագետներ դեմ արտահայտվեցին պարտադիր տասներկուամյա կրթությանը՝ համարելով, որ սոցիալական ծանր պայմաններում գտնվող ընտանիքների երեխաները, հատկապես գյուղական համայնքներում, կարող են սկսել աշխատել 14-15-16 տարեկանում և ֆինանսապես աջակցել իրենց ընտանիքներին. *«Ինչի՞ համար այդ պատանին գա, նստի, մի հատ տեղ 11-12-րդ դասարաններում գրադեցնի: Որ 1-2 ուսուցիչ աշխատավարձ ստանա՞ն»:* (Փորձագիտական կարծիք)

Տասներկուամյա պարտադիր կրթության վերաբերյալ օրենքի ընդունումը հասարակության մեջ որոշ թյուրընկալումներ առաջացրեց: Պետք է հստակեցնել, որ ոչ թե 12 տարի դպրոց գնալն է դառնում պարտադիր, այլ կրթության մեջ 12 տարի լինելը: Եվս մեկ թյուրընկալում պարզաբանելու համար հարկ է նշել, որ տասներկուամյա կրթությունը ենթադրում է մասնագիտության ձեռք բերում, բայց չի պարտադրում բուհում կրթությունը շարունակել:

Տվյալ բարեփոխումը ենթադրում է, որ աշակերտը կարող է և՛ կրթության մեջ լինել՝ ստանալ մասնագիտություն, և՛ աշխատել: Այս բարեփոխումը պահանջում է կրթական ծառայությունների բազմազանության ապահովում: Խոսքը, մասնավորապես, արհեստագործական ուսումնարանների և միջին մասնագիտական մակարդակի տարբեր մասնագիտությունների ուսումնասիրության հնարավորությունների ստեղծման մասին է: Մասնավորապես, գյուղական համայնքներում կարևոր է ցույց տալ, որ կարելի է գյուղատնտեսությամբ զբաղվել և լիարժեք կյանքով ապրել, ինչը կպահանջի դպրոցում պտղաբուծության, մեղվաբուծության, հողագործության, ագրոբիզնեսի, էկո-տուրիզմի տարրերի ուսումնասիրություն, քանի որ դա կարևոր հիմնարար գիտելիք է: Նույնը վերաբերում է նաև սպորտին և արվեստին, կիրառական այլ հմտությունների ձեռքբերմանը, օրինակ՝ վարորդական իրավունքին: Դա հնարավոր է անել նաև վաուչերի միջոցով, որը երեխան կտնօրինի ըստ իր հայեցողության՝ կուտակելով այն հմտությունները, որոնք իր համար անհրաժեշտ է համարում: Նման այլընտրանքների և ձևերի պարագայում համակարգը արդյունավետ կգործի: Իհարկե, սա հնարավոր կլինի ապահովել ՄՄՈՒՀ-ների զարգացած ցանցի առկայության դեպքում, իսկ այն բնակավայրերում, որտեղ դրանք չկան, ավագ դպրոցները կարող են կազմավորել արհեստագործական հոսքեր,

որոնք դեռևս այդքան էլ չեն կիրառվում, սակայն գյուղական վայրերում դրանք կարող են զարգանալ:

Համակարգի կայացման համար անհրաժեշտ է նաև բացառել այն երևույթը, որ սովորողը՝ չկատարելով իր առջև դրված կրթական պահանջները, դասարանից դասարան փոխադրվի, որը վատթարացնում է կրթության որակը:

Տասներկուամյա պարտադիր կրթակարգին անցումը նախատեսվում է 2017 թվականից: Լրացուցիչ 4500 երեխաների կրթության գումարը նախատեսված է ՄՄՈՒՀ-ների և դպրոցների բյուջեներում:

Փորձագետների կարծիքով, էական ծախսեր պարտադիր տասներկուամյա կրթությունը այսօրվա դրությամբ չի ենթադրում, քանի որ դպրոցների ֆինանսավորումը հաշվարկվում է ըստ տվյալ տարվա մեջ ծնված երեխաների քանակի:

Միջնակարգ դպրոցների ուսուցիչների մտավախությունները՝ կապված տասներկուամյա պարտադիր կրթության հետ, հետևյալն են՝ *«Հիմա 12-ամյան պարտադիր է դառնալու, բնական է, եթե վատերի կողքը մնացին լավերը, որակը լրիվ տուժում է, արդյունքում կամ գնալու են վարժարան, կամ էլ պարապելու են ընդունվելու համար: 9-ամյան շատ լավ էր»:* (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

«Ուսումը դարձրեցին 12-ամյա, նրանք 18 տարեկան են, մեկը ուզում է ամուսնանալ, մեկը չգիտեմ ինչ, նրանց հետաքրքրությունը բոլորովին այլ է»: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

«Ես դեմ եմ պարտադիրին, քանի որ այդ տարիքում շատերը, հատկապես գյուղերից, ամուսնանում են: Ինչո՞ւ պետք է եզդին ամուսնանա, հայր չամուսնանա, մանավանդ, մեր բնակչության թվաքանակը հաշվի առնելով»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Իջևան)

«Դաս խանգարողները ավելի շատ են լինելու»: (Ֆոկուս-խումբ, ավագ դպրոց, ք. Երևան)

«Մի տարի ավելացրել են, ես չեմ հասկանում այս պետության հաշվարկը ինչու է կայանում: Ասում է համ գումար չունեն, համ էլ անիմաստ մի տարի ավելացրել է»: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

«Տղաները 4 տարի կորցնում են, դպրոցն ավարտում են, բանակ են գնում, հետ են գալիս, և 20 տարեկան տղաները մասնագիտություն չունեն»: (Ֆոկուս-խումբ, միջնակարգ դպրոց, ք. Գյումրի)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավագ և միջնակարգ դպրոցների արդի հիմնախնդիրները

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն տվեց **ավագ և միջնակարգ դպրոցների ավագ դասարանների միջև մի շարք տարբերություններ** արձանագրել: Մասնավորապես՝ էական տարբերություն կա ավագ և միջնակարգ դպրոցների ֆինանսավորման կարգերի միջև. ավագ դպրոցներում գործակիցն ավելի բարձր է, քան միջնակարգ դպրոցներում: Սակայն փորձագետների դիտարկմամբ՝ վերջնարդյունքում միջնակարգ դպրոցներն ավելի արդյունավետ են կարողանում բաշխել ըստ աշակերտների թվի տրամադրված ֆինանսական միջոցները՝ շնորհիվ ամբողջ դպրոցում աշակերտների մեծ թվի: Ավագ դպրոցներում աշակերտների թիվը համեմատաբար ավելի փոքր է: Բացի այդ, ԿԳՆ-ը հանրապետությունում գործող բոլոր ավագ դպրոցներին նպատակային տրամադրում է գույք և տեխնիկա, իսկ միջնակարգ դպրոցների ավագ դասարաններին՝ ոչ:

Միջնակարգ դպրոցների պահպանումը, մի կողմից, հնարավորություն տվեց, որ բոլորն իրացնեն իրենց կրթության իրավունքը: Մյուս կողմից՝ միջնակարգ դպրոցների պահպանումը խեղաթուրեց ավագ դպրոցների ստեղծման գաղափարը: Միջնակարգ դպրոցներում հոսքեր չեն ձևավորվում, քանի որ աշակերտների քանակը մեծամասամբ բավարար չէ հոսքեր ձևավորելու համար:

Միջնակարգ դպրոցները հիմնականում ՀՀ գյուղական վայրերում են: Արդյունքում, միջնակարգ և առանձնացված ավագ դպրոցների տարբերությունը դարձել է քաղաքի և գյուղի տարբերություն: Քաղաքային բնակավայրերում համեմատաբար ավելի բարձր որակավորում ունեցող կադրեր են աշխատում, քան գյուղական բնակավայրերում: Ավագ դպրոցների մեկ դասարանում սովորող աշակերտների միջին քանակն ավելի քիչ է, քան միջնակարգում, ինչը բացասաբար է անդրադառնում միջնակարգ դպրոցներում կրթության որակի վրա: Եվս մեկ տարբերություն պայմանավորված է նրանով, որ ավագ դպրոցի աշակերտներն արդեն մասնագիտական կողմնորոշում ունեն՝ ի տարբերություն միջնակարգ դպրոցների ավագ դասարանների աշակերտների:

Որոշ միջնակարգ դպրոցներ՝ հասկապես գյուղական վայրերում, «սոցիալական հաստատությունների» են վերածվել. կարծես մի խումբ ուսուցիչների աշխատավարձ տալու համար են գործում:

Ավագ դպրոցի աշակերտները փոխում են միջավայրը՝ ավարտելով հիմնական դպրոցը և փոխադրվելով ավագ դպրոց, ինչը ենթադրում է նոր դպրոցին, մանկավարժական կոլեկտիվին և ընկերական միջավայրին հարմարվելու հետ կապված խնդիրներ: Մինևույն ժամանակ, ավագ դպրոցներում գրեթե **չկան մասնագետներ, որոնք դեռահասների հետ դասապրոցեսից դուրս աշխատելու** պարտականություններ ունենան՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, սոցիալական մանկավարժներ և այլն:

Փորձագետները միակարծիք են այն առումով, որ **առանձնացված ավագ դպրոցներ ստեղծելու ծրագիրը այնպես չի ներդրվել, ինչպես նախատեսված էր**, քանի որ միջոցները չեն բավարարել և չեն համապատասխանում նախատեսված հայեցակարգին: Օրինակ՝ գյուղաբնակ երեխաներն իրենց նախընտրած հոսքում սովորելու հնարավորություն չունեն: Ինչպես միջնակարգ, այնպես էլ ավագ դպրոցներում չեն կոմպլեկտավորվում բավական թվով դասարաններ բոլոր հոսքերը կազմակերպելու համար, ինչը պայմանավորված է ժողովրդագրական իրավիճակով բնակչության թվաքանակի տարեցտարի նվազմամբ, արտագաղթով:

Ավագ դպրոցների և ընդհանուր առմամբ հանրակրթության լուրջ խնդիրներից է այն, որ **հասարակության մեջ կրթության ինստիտուտի հանդեպ փոխվել է վերաբերմունքը:** *«Հասարակությունը չի վստահում մեզ: Այնպիսի մթնոլորտ է ստեղծված, որ դպրոցների տնօրենները կաշառակերներ են, դասատուները անգրագետներ են, ավագ դպրոցը այնմախ բան է, ու ո՞վ է լսելու ավագ դպրոցներին»:* (Փորձագիտական կարծիք)

Խնդիր է նաև ծնողական համայնքի վերաբերմունքը կրթությանը: Մի կողմից, ուսուցիչը ցանկանում է արդյունք ցույց տալ, մյուս կողմից՝ երեխաները չեն սովորում, ավելին՝ ծնողն ասում է. մինևույն է, քեզ ֆիզիկա կամ պատմություն պետք չէ, ինչո՞ւ ես քեզ տանջում: Արդյունքում ստեղծվում է **ոչ բարենպաստ հոգեբանական մթնոլորտ դպրոցում:**

Կրթության նպատակը խեղաթյուրվել է. *«մենք չենք հասկանում՝ ինչու ենք սովորում»:* Խնդիրն այն է, որ հասարակությունը չի ներկայացնում կրթության պատվեր՝ գիտելիքի, կարողությունների, հմտությունների: Եթե հասարակությունը ձևավորի պատվերը, ոչ թե համակարգերը համապատասխանեցվեն ինչ-որ ստանդարտներին կամ պաշտոնյաների ցանկություններին, համակարգը կսկսի աշխատել:

«Պատկերացրեք, թե ինչպես են կոլիտոնները ստեղծվել: Այդպես միանգամից կառավարության որոշմամբ ավագ դպրոցները ստեղծվեցին: Եթե շարժումը ներքևից սկսեր՝ դպրոցից հասունանար, ապա շատ ավելի հստակ կլիներ ավագ դպրոցի դերը կրթական համակարգում: Այսօր անհասկանալի է, թե ինչու այս մի դպրոցը ավագ է, իսկ մյուսը՝ հիմնական, չկա օրինաչափություն»: (Փորձագիտական կարծիք)

«Ավագ դպրոցը առանձնացրել են՝ առանց դրա համար նախատեսված ծրագրեր ունենալու: Ծրագիրը այդ ընթացքում իմպրովիզացիա էր: Հնարավոր չէ գնալ նման փոփոխության՝ առանց ամբողջ շղթան փոփոխելու»: (Փորձագիտական կարծիք)

«Եթե ուսուցումն ավելացնում են 1-2 տարով, իսկ բուհերի ընդունելության քննությունների պահանջները չեն փոխում, մարդիկ չեն հասկանում, ինչու հիմա այդ 2 տարի ավելը պետք է ծախսեն յուրացնելու այն, ինչ առաջ 10 տարում էին ստանում»: (Փորձագիտական կարծիք)

«Ծնողներն էլ մտածում են՝ ոնց անեն, որ իրենց երեխաները դպրոց չգնան, փոխարենը շնորհակալ լինեն պետությանը երեխայի անվճար կրթության համար, հակառակը վճարում են, որ երեխան դպրոց չգնա. սա ողբերգություն է, խայտառակություն»: (Փորձագիտական կարծիք)

Առարկայական ծրագրերի հետ կապված խնդիրներ են առաջացել: Խոսքը հիմնականում մատուցվող նյութի ծավալի մասին է: Արդյունքում, դեռ երկու տարի առաջ Կրթության ազգային ինստիտուտը ԿԳ նախարարության կողմից հանձնարարություն է ստացել՝ բեռնաթափելու ծրագրերը: Բացի այդ, ավագ դպրոցում առարկաները շատ են, խնդիր կա ավագ դպրոցում խմբավորելու դրանք: Խնդիրներ կան ինչպես առարկայական ծրագրերի հաջորդական տրամաբանության ապահովման, այնպես էլ փոխհամաձայնեցման հետ կապված:

Հիմնական դպրոցի հիմնախնդիրներ: Ավագ դպրոցը հանդիսանում է հիմնական դպրոցի շարունակությունը: Ավագ դպրոցներում հավաքվում են տարբեր հիմնական դպրոցների երեխաներ, որոնք տարբեր որակի ծառայություններ են ստացել: Հատկապես, երբ խոսքը հոսքային առարկաների մասին է: Ու հիմնական դպրոցի բացերը ավագ դպրոցում չեն լուծվում, այլ աստիճանաբար խորանում են: Ավագ դպրոցն այդ բացերը լրացնելու հնարավորություն չունի:

Մյուս խնդիրը կապված է ուսուցիչների որակավորման հետ: Ավագ դպրոցում ուսուցիչը պետք է լինի ավելի պատրաստված, բայց այսօր այդ օրինաչափությունը չի պահպանվում: Բուհը չի պատրաստում առանձին ավագ դպրոցի ուսուցիչ: Տարբերակելու մեխանիզմը մնում են վերապատրաստումները և տարակարգերի շնորհման գործընթացը: Փորձագետների կարծիքով՝ ուսուցիչների աշխատանքի ընդունելության ժամանակ նրանց մասնագիտական որակները պատշաճ ձևով չեն ստուգվում. օրինակ, չի ստուգվում, թե ուսուցիչը դասի պլան գիտի կազմել, թե ոչ, աշակերտին գնահատել գիտի, թե ոչ: Միևնույն ժամանակ, ոչ մի դպրոցի տնօրեն չի անցել դասընթաց, որը կսովորեցնի ղեկավարման ու կառավարման տեսություն: **Տնօրենը պետք է իմանա կառավարել**, մասնավորապես, դպրոցի անձնակազմին կառավարի այնպես, որ աշխատողներն իրենց պարտականությունները կատարեն պատշաճ մակարդակով:

Ավագ դպրոցների ստեղծումը չկարողացավ մոտիվացնել ուսուցչներին մասնակցելու ավագ դպրոցում աշխատանքի ընդունվելու մրցույթին: Հիմնական դպրոցի ուսուցիչը և ավագ դպրոցի ուսուցիչը ընդունվում են աշխատանքի մրցութային նույն պայմաններով: Ավագ դպրոցի ուսուցիչը ենթադրաբար ավելի բարձր աշխատավարձ պետք է ստանար, ինչը կապահովեր մրցակցություն և ավագ դպրոցում ավելի բարձր որակավորում ունեցող մանկավարժական անձնակազմի ընդգրկում: Մակայն, ֆինանսական պատճառներով դա տեղի չունեցավ: Դա բացասաբար է անդրադառնում ավագ դպրոցի կրթության որակի վրա: Չկան գործուն մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան տարբերակել լավ աշխատող ուսուցչին և սկսնակին՝ օրինակ վարձատրության միջոցով: *«Սկսնակը պետք է դրույքի մեջ ժամ ունենա, որ փորձառուի մոտ գնա դաս լսի: Երեկ ավարտածի համար էլ է մի դրույքը 22 ժամ, 40 տարի դասավանդողի համար էլ է դրույքը 22 ժամ»:* (Փորձագիտական կարծիք)

Ուսուցիչների ցածր վարձատրությունը շարունակում է մնալ ամենահաճախ քննարկվող խնդիրների շարքում: Այն բացասաբար է անդրադառնում կրթության որակի վրա. եթե ուսուցիչը կարողանա աշխատավարձով իր նվազագույն կենսական պայմաններն ապահովել, ապա կնվիրվի իր աշխատանքին և ավելի բարձր արդյունք ցույց կտա:

Կադրային քաղաքականության վերանայման կարիք կա: Դպրոցները չեն կարողանում թարմացնել իրենց անձնակազմը, նոր կադրերի տեղեր համարյա չեն բացվում, քանի որ կենսաթոշակային տարիքի ուսուցիչների մի մասը շարունակում են աշխատել դպրոցում:

Փորձագետների կարծիքով, Հայաստանում **հանրակրթության մակարդակում մեծ է դասագրքային կախվածությունը:** Այնինչ, կրթության ամենազլխավոր աղբյուրը ուսուցիչն է՝ իր փորձառությամբ և մասնագիտական մոտեցումներով: Կրթության որակը տուժում է ոչ թե չափորոշիչների

պատճառով (մշակված բովանդակության մեջ չէ խնդիրը), այլ բովանդակության մատուցման մեջ է խնդիրը, այսինքն ուսուցիչների: *«Մասնավարժորեն աղապտացված որակյալ կրթական ծառայությունները առաջին հերթին պայմանավորված են որակյալ դասավանդմամբ, ոչ թե իդեալական գրված դասագրքային տեքստերով: Միննույն դասագիրքը կարդացող 31.000 երեխաների համար չի կարող ունիվերսալ լինել, ուսուցչի հիմնական գործը նյութի մատուցումն է»:* (Փորձագիտական կարծիք)

Փորձագետների կարծիքով, այսօր **դասագիրքը չի ծառայում իր նպատակին**, քանի որ երեխայի համար մատչելի լեզվով գրված չէ: Եթե երեխան չի գնում դասի, չի լսում ուսուցչին, ապա նա չի կարող տանը այդ դասագրքով սովորել: Շատ անհամապատասխանություններ կան նաև դպրոցական դասագրքերի և բուհի ընդունելության պահանջի միջև:

Դպրոցի 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակը նախատեսված է կրկնության և ավարտական միասնական քննություններին նախապատրաստվելու համար: Սակայն, իրականում տեղի է ունենում նպատակի և արդյունքի միջև ձևախեղում: **Դպրոցը փող է ստանում, որ այդ ծառայությունը մատուցի. ուսուցիչներն աշխատավարձ են ստանում, բայց ծառայությունը լիարժեք չի մատուցվում:**

Միջին մասնագիտական կրթական ծրագիրն առանձին ծրագիր է: Ավագ դպրոցից հետո աշակերտը պետք է որոշի՝ գնալ միջին մասնագիտական կրթության ճանապարհով, թե՞ ոչ: Սահուն անցում ապահովված չէ, որը հնարավոր կլիներ, եթե արհեստագործական հոսքերը գործեին ավագ դպրոցներում:

Ավագ դպրոցը չունի հստակ մեթոդաբանություն մասնագիտական կողմնորոշում ապահովելու համար: Այն աշակերտները, որոնք հույսը դնում են դպրոցի վրա, հաճախ կարող են շփոթմունքի մեջ հայտնվել: Դպրոցը կարող է, ելնելով իր խնդիրներից, որոշել, որ երեխան պետք է սովորի այս կամ այն հոսքում, որպեսզի հոսքը համալրվի: Արդյունքում՝ որոշ դեպքերում հոսքային բաժանումը ձևական բնույթ է ստանում:

Բացի այդ, ավագ դպրոցները հայեցակարգում ներկայացվում են որպես նախամասնագիտական կրթություն տրամադրող օղակ, որը ենթադրում է, որ հիմնական դպրոցից հետո երեխան պետք է բավական մասնագիտական կողմնորոշում ունենա: Սա հակասական է: Մի կողմից, դեռ շուտ է ինքնուրույն կողմնորոշման համար, իսկ, մյուս կողմից, հիմնական դպրոցում որևէ էական աշխատանք մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ չի տարվում, երեխան պատահականությամբ և ոչ ինքնուրույն ընտրում է իր ապագա մասնագիտական հոսքը: Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշման հնարավորությունները սահմանափակվում են նաև առաջարկվող հոսքերով և ենթահոսքերով:

Որպես կանոն, ավագ դպրոցներում **չկա մասնագիտական կողմնորոշման մասնագետի հաստիք:** Արդյունքում՝ երեխաների մասնագիտության ընտրության հարցում ամենակարևոր դերը խաղում են ծնողները և ոչ թե իրենք:

Եվս մեկ խնդիր կապված է **հոսքային դասարանների կարգավիճակի** հետ: Կրթության համակարգի մեջ դրանց կարգավիճակը հստակեցված չէ, ինչն իմաստագրվում է հոսքային կրթությունը: Այն, որ երեխան ընտրել է տվյալ հոսքը, ոչ մի ձևով չի անդրադառնում իր հետագա ուսման վրա: Ավարտական քննությունները նույնն են, որևէ սահմանափակումներ և առավելություններ չկան տարբեր հոսքերի շրջանավարտների համար: Կարևոր խնդիր է նաև ոչ հոսքային առարկաների դասավանդման հարցը: Օրինակ՝ հումանիտար հոսքում բնագիտական առարկաներն անցնում են մեկ ժամով, ինչն անիմաստ է՝ նման ժամաքանակը աշակերտին որևէ գիտելիք ստանալու հնարավորություն չի տալիս:

Ենթահոսքերը ավագ դպրոցներում կազմավորվում են շատ հազվադեպ: Ենթահոսքերի քիչ լինելու պատճառն առաջին հերթին տնտեսական է, երկրորդ՝ կադրային, և երրորդ՝ ծրագրային: Ենթահոսքի ձևավորման պարագայում ԿԳ նախարարությունն առանձին ենթահոսքերի ծրագրեր և դասագրքեր չի մշակում, այդ գործառույթը մնում է դպրոցի վրա:

Ավագ դպրոցների հոսքային և ենթահոսքային կրթությունը հնարավորություն չտվեց նաև հաշվի առնել տարածքային (քաղաքի, գյուղի) առանձնահատկությունները: Դպրոցը չունի բավական ազատություն, որպեսզի ինքնուրույն կազմի ծրագիրը՝ հիմնվելով տվյալ տարածքի բնակչության կարիքների և աշխատաշուկայի պահանջների վրա: *«Օրինակ՝ գյուղատեխնիկայի օգտագործման համար ինչ ֆիզիկա է պետք ուսումնասիրել, եթե այդ աշակերտը հետո գնալու է գյուղինստիտուտի մեքենաշինական բաժնում սովորի: Ահա այսպիսի ճկունություն մենք չունենք: Մենք ստիպված ենք ուսումնասիրել ֆիզիկան այն ծրագրով, ինչ ծրագրով գրել է մի շատ հարգելի գիտնական մարդ: Սա շատ կարծր համակարգ է, ընդհանուր է բոլոր դպրոցների համար: Եվ, արդյունքում, երեխան սկսում է չսովորել այդ ֆիզիկան: Ասում է՝ ինձ միևնույն է, քո ֆիզիկան ինձ պետք չի, ուստի ես կսովորեմ այնքան, որ ստանամ դրական գնահատական»:* (Փորձագիտական կարծիք)

Մի շարք արմատական խնդիրներ ծագեցին՝ **միասնական քննությունների կազմակերպման** հետ կապված: Վերջին տարիներին կյանքի կոչվեց շտեմարաններով քննություն հանձնելու մոտեցումը, որի արդյունքում դպրոցը վերածվել է ռեպետիտորական կենտրոնի: Այդ իսկ պատճառով, աշակերտներն ավագ դպրոցն սկսեցին արհամարհել՝ անուղակիորեն արժեզրկվեց դասը, դասագիրքը, դպրոց գնալու կարևորությունը, ստեղծագործական կարողությունների, հաղորդակցական կարողությունների զարգացումը, հիմնարար կարողություններ զարգացնող կրթություն ստանալու շահագրգռվածությունը: Փոխարենը՝ շտեմարանները թույլ են տալիս զուտ վարժանքով, արդեն հայտնի վարժությունների, խնդիրների հիման վրա տիրապետել լուծման ձևերին և հաջողությամբ քննություն հանձնել ու բուհ ընդունվել: Արդյունքում՝ ավագ դպրոցները բոլորովին չնպաստեցին կրկնուսուցման ծավալների կրճատմանը, ընդհակառակը՝ **ավագ դպրոցները դարձել են կրկնուսուցության օջախներ:** Հատկապես գյուղական համայնքներում, դպրոցների տնօրենները՝ աշակերտների քանակ ապահովելու նպատակով, մանկավարժական անձնակազմում ձգտում են ընդգրկել անվանի կրկնուսուցներ: *«Ստեղծվեցին շտեմարաններ, որոնք մեր տունը ավելի շատ քանդեցին, և երեխաները սովորելու փոխարեն շտեմարանի ճիշտ պատասխաններն են անգիր անում: Միջնակարգ դպրոցն էլ է նույն սկզբունքով աշխատում, քանի որ միասնական քննությունները վերաբերում են բոլոր դպրոցներին»:* (Փորձագիտական կարծիք)

Փորձագետների կարծիքով, այն, որ կրկնուսուցների ծառայություններից օգտվողների թիվը չի նվազում, վկայում է, որ **ավագ դպրոցն այնքան էլ լավ չի իրականացնում իր գործառնությունները:**

Այսօր **երեխաների հաճախելիությունը դպրոցներ, հատկապես ավարտական դասարաններում, զուտ պարտադրանքի արդյունք է,** ոչ մի շահագրգռող բան չկա:

Ավագ դպրոցներին զուգահեռ, **կրթության երրորդ աստիճանն իրականացնող այլ տիպի ուսումնական հաստատություններ չկան,** բացի մասնավորներից: Արհեստագործական ուսումնարանն ապահովում է միասնական քննության մասնակցություն: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կրթության երրորդ աստիճանը երեք տարի է: Սակայն, ուսումնարանների ուսումնական ծրագրով հանրակրթությունն ավարտվում է մեկ ու կես տարում, դրանից հետո մասնագիտական կուրս են անցնում: Ստացվում է, որ խախտվում է «Հանրակրթության մասին» օրենքը: Մարդիկ օգտագործում են քոլեջներն ու ուսումնարանները ավելի մեծ ազատություն ունենալու համար: Այսինքն՝ ուսումնարանները դառնում են ավելի հեշտ ճանապարհով բուհ տանող օղակներ, դրանով հարվածելով ավագ դպրոցին: Եվ սա վնասում է ավագ դպրոցի կայացմանը, չնայած դա անվանում են մրցակցություն: Արդյունքում, օրենք ընդունվեց, որ քոլեջ ավարտողը պետք է վեց ամիս աշխատի, որպեսզի իրավունք ունենա մասնակցելու միասնական քննություններին: Բայց ոչ բոլորը գիտեն այդ մասին: Արդյունքում՝ ստացվում է, որ քոլեջները խաբում են դիմորդներին:

Հանրակրթության բնագավառում վերջին տարիների բարեփոխումների առանցքն այն է, որ հմտությունների, կարողությունների և արժեքների ուսուցանումը պետք է ավելի կարևորվի, քան ակադեմիական գիտելիքները, ինչը պետական հանրակրթական չափորոշիչներով հստակ ամրագրված է: Դպրոցը պատրաստում է քաղաքացի: Սակայն, **ավագ դպրոցում դաստիարակության բաղադրիչին բավական ուշադրություն չի դարձվում,** այդ տարիների

դաստիարակության պակասը զգացվում է նաև հետագայում: Արդյունքում՝ *«փողոցն է դաստիարակում»:* (Փորձագիտական կարծիք)

Փորձագետներն ավագ դպրոցների կայացման համար մեծ **խոչընդոտ են համարում գործող ուսումնական պլանը:** Ուսումնական պլանը, ըստ Հանրակրթության մասին օրենքի, սահմանում է, որ պարտադիր առարկաները, որոնք պետք է ուսուցանվեն՝ անկախ դպրոցի ընտրությունից, պետք է կազմեն ուսումնական պլանի առնվազն 30%-ը: Սա շատ վտանգավոր սահմանում է, քանի որ առնվազն 30%-ը կարող է լինել նաև 100%: Եվ արդյունքը հենց այդպես էլ ստացվում է. ավագ դպրոցի 10-րդ դասարանում ուսումնական պլանի 34 ժամից 21 ժամը պարտադիր ժամաքանակն է կազմում, այսինքն՝ ոչ թե 30%-ն է, այլ 70%-ից ավելին: **Դպրոցը գործնական ճկունություն չունի:** Իրականում ստացվում է, որ դպրոցը ընտրության հնարավորություն չունի: Ավագ դպրոցի ծրագրի հիերարխիան հետևյալն է՝ հանրակրթության պետական չափորոշիչի հիման վրա կազմվում է առարկայական չափորոշիչը, ապա կազմվում է ծրագիրը: Ծրագիրն ասում է՝ որպեսզի ապահովվեն առարկայական չափորոշիչի պահանջները, պետք է անցնել հետևյալ թեմաները, և նշվում է յուրաքանչյուր թեմային տրամադրվող ժամաքանակը, ինչը դարձյալ հնարավորություն չի տալիս դպրոցին ճկուն լինել և մատուցվող ծառայությունը համապատասխանեցնել աշակերտների հետաքրքրություններին:

Կրթական չափորոշիչները նախանշում են, թե որքան գիտելիքներով և կարողություններով պետք է դպրոցը ապահովի սովորողին: Նախանշված չափորոշիչները միշտ չեն կիրառվում, քանի որ չկա գործիք՝ ստուգելու, թե ապահովվե՞լ է արդյոք ուսուցիչը նախանշված չափորոշիչը, չկա չափորոշիչը չապահովելու դեպքում համապատասխան արձագանքման մեխանիզմ, որոշ առարկաների չափորոշիչները շատ ավելին են պահանջում, քան հնարավոր է ուսուցանել, հանրակրթական դպրոցի ուսուցիչները պատշաճ մակարդակով իրագեղված չեն կրթական չափորոշիչների մասին, որոշ առարկաների չափորոշիչներ չափելի չեն, հստակ չեն ձևակերպված, տարբեր առարկաների չափորոշիչները գրված են տարբեր ոճով և փոխհամաձայնեցված չեն: Որևէ մեկը պատասխանատվություն չի կրում, վերահսկողություն չի իրականացնում՝ արդյոք դպրոցի ուսումնական գործունեությունը համապատասխանում է կրթության չափորոշիչին, թե՞ ոչ, գնահատման թեստերը, մեխանիզմները բխում են չափորոշիչներից:

Քանի որ ավագ դպրոցների հայտարարված նպատակներից շատերը (մասնավորապես՝ համապատասխան կրթական միջավայրի ստեղծումը) դեկլարատիվ բնույթ են կրում և իրականություն չդարձան, ապա **աշակերտների զգալի մասը, հատկապես վճարունակ ընտանիքներից, սկսեցին տեղափոխվել դեպի մասնավոր դպրոցներ**, որոնք ապահովել են այդպիսի միջավայր:

Եվս մեկ խնդիր ժամանակավոր բնույթ է կրում. ավագ դասարաններ ընդունվող՝ տասներորդ դասարան փոխադրվող, **երեխաների հոսքը 2015-2016 ուսումնական տարվա կտրվածքով կրճատվելու է**, քանի որ 2006 թվականին, երբ անցում իրականացվեց 11-ամյա կրթությունից 12-ամյա կրթությանը, առաջին դասարան ընդունվեցին երկու տարիքային խմբի երեխաներ: Առաջինը 2000 թվականին մինչև հուլիսի 1-ը ծնվածները, որոնք սովորելու էին 8 տարի հիմնական դպրոցում, և երկրորդը՝ 2000 թվականին հուլիսի 1-ից հետո ծնվածները, որոնք սովորելու էին 9 տարի հիմնական դպրոցում: Այս երկրորդ խմբի երեխաների ծնողները, դիմելով տարբեր կասկածելի միջոցների, ցանկանալով կրճատել երեխաների ուսուցման տարիները, երեխաներին տեղավորեցին իրենց տարիքային խմբին չհամապատասխանող դասարաններում: Արդյունքում՝ 2014 թվականին հիմնական դպրոցների շրջանավարտների և ավագ դպրոց ընդունվողների թիվն էապես ավելի մեծ էր, քան կլինի 2015թ. սեպտեմբերին:

Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման ձևավորված համակարգը ելնում է պետական բյուջեում այդ ուղղությամբ առկա գումարից: Այն բաժանելով աշակերտների թվի՝ ստանում են մեկ աշակերտին հասանելիք գումարը: Նման մոտեցումը կրթական ծառայությունների որակի բարելավման հնարավորություն չի տալիս, քանի որ չի ելնում դպրոցի առկա պահանջներից: Միևնույն ժամանակ, ըստ աշակերտների թվի ֆինանսավորումը ստեղծում է մրցակցություն

ավագ և միջնակարգ դպրոցների միջև: Երկուսն էլ շահագրգռված են մեծ թվով աշակերտներ ունենալ:

Ավագ դպրոցում **կրեդիտային համակարգի** ներդրման նախագիծը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Քննարկվում են ամենատարբեր մոտեցումներն ու գաղափարները: Կրեդիտային համակարգը պահանջում է փոփոխություններ ամբողջ կրթության համակարգում՝ և՛ դպրոցում, և՛ ՄՄՈՒՀ-ում, և՛ բուհում:

Հանրակրթության ընթացքում ստացած կրեդիտները պետք է ապահովեն աշակերտների շարժունություն՝ աստիճանից աստիճան, համակարգից համակարգ, հանրակրթությունից դեպի մասնագիտական կրթական ծրագրեր, և ճկունություն աշակերտների համար՝ ինքնուրույն ձևավորելու իր կրթության բովանդակությունը՝ ելնելով իր նախասիրություններից և նպատակներից: Կրեդիտները պետք է կարևորեն երեխայի մասնակցությունը համայնքային կյանքին, խրախուսեն նրա ակտիվությունը, մոտիվացնեն աշակերտներին, իսկ հետագայում բացեն նրա առջև նաև բուհի դռները: Կրեդիտային համակարգը կնպաստի ավագ դպրոցների արժևորմանը և կրկնուսույցության ծավալների կրճատմանը:

Կրեդիտային համակարգի ներդրումը մի շարք ռիսկեր է պարունակում: Նախ՝ կրեդիտային համակարգը կարող է մեխանիկորեն փոխարինել միասնական քննություններին՝ դառնալով անցագիր դեպի բուհ: Բացի այդ, հնարավոր է, որ մի դպրոց ազնվորեն կկիրառի կրեդիտային համակարգը, իսկ մյուսը՝ ուղղակի կբաժանի կրեդիտները: Առարկա-կրեդիտ հարաբերակցության հաշվարկման եղանակը շատ բարդ գործընթաց է, որը դեռևս հստակեցված չէ: Կրեդիտային համակարգի ներդրումն անհրաժեշտաբար կպահանջի ավագ դպրոցներում աշակերտների համար կրեդիտային համակարգից օգտվելու հարցում հավելյալ խորհրդատվության կազմակերպում:

12-ամյա պարտադիր կրթակարգի ներդրման միջոցով հասարակությունն իր քաղաքացու առջև պահանջ է դնում. լիարժեք քաղաքացի ձևավորվում է այսպիսի սոցիալական միջավայրում, 12 տարիների ընթացքում: ՀՀ ԿԳՆ տվյալներով՝ ներկայումս տարեկան շուրջ 4500 երեխաներ հիմնական դպրոցն ավարտելուց հետո չեն շարունակում կրթությունը, իսկ դա բացասաբար է անդրադառնում նրանց հետագա սոցիալական կյանքի վրա, և ի թիվս այլ խնդիրների՝ բարձրանում է անչափահասների կողմից հանցագործությունների կատարման տոկոսը: Պակաս կարևոր չէ նաև աշխատաշուկայի համար որակյալ մարդկային ռեսուրսների պատրաստման խնդիրը, որը սահմանափակում է իննամյա պարտադիր կրթակարգը: Բացի այդ, հանրակրթության երրորդ մակարդակում կրթությունը չշարունակող երեխաների թիվը դեռ շատ մեծ չէ, և պետությունն ի վիճակի է այսօր ֆինանսավորել այդ հատվածի կրթությունը պարտադիր տասներկուամյայի շրջանակներում:

12-ամյա պարտադիր կրթակարգի հետ կապված հետևյալ ռիսկերը կարելի է առանձնացնել: Կրթության որակը կարող է տուժել այն պատճառով, որ «չսովորող» աշակերտների ներկայությունը ավագ դպրոցում կխանգարի դասապրոցեսի կազմակերպմանը և բացասաբար կանդրադառնա մյուս սովորողների մոտիվացիայի վրա: Մյուս մտավախությունը կապված է տղաների համար կրթությունը շարունակելու հնարավորությունների հետ: Տասներկու տարի սովորելով դպրոցում՝ տղաներն ավարտում են դպրոցը 18 տարեկանում: Նրանք, չհասցնելով բուհ ընդունվել, գնում են բանակ, իսկ 20 տարեկանում վերադառնալով՝ դպրոցում ստացած գիտելիքներն արդեն մոռացվում են, և նրանք զրկվում են մասնագիտություն ստանալու հնարավորությունից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են ՀՀ ավագ դպրոցներում և միջնակարգ դպրոցների ավագ դասարաններում (այսուհետ՝ դպրոցներ) կրթության որակի բարելավմանն ուղղված մի շարք առաջարկություններ՝ ըստ առանձին բաղադրիչների.

Ընդհանուր բնույթի առաջարկություններ

1. Իրականացնել հանրային իրազեկման արշավներ՝ տեղեկացնելով բնակչության լայն զանգվածներին հանրակրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումների մասին, շեշտելով դրանց դրական ազդեցությունը կրթության և հասարակական կյանքի այլ բնագավառների վրա:
2. Հստակեցնել հանրակրթության երկրորդ և երրորդ մակարդակների նպատակները:
3. Նախատեսել դպրոցում աշխատող համայնքային սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքներ, որոնք կնպաստեն երեխաների հարմարմանը նոր դպրոցական միջավայրին, դպրոցում կատարված բարենպաստ մթնոլորտ, կկանխարգելեն և կկարգավորեն ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, դպրոց-ծնող կոնֆլիկտները:
4. Օգտագործելով տարբեր PR տեխնոլոգիաներ՝ ձևավորել ԿԳՆ, հանրակրթության համակարգի, դպրոցների և ուսուցիչների դրական իմիջ հասարակության մեջ:
5. Մշակել ուսուցիչների վարձատրության մրցակցային մեխանիզմներ՝ խթանելու ուսուցիչների ինքնակրթությունը և նպաստելու կրթության որակի բարելավմանը:
6. Մշակել դպրոցի 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում նախատեսված կրկնության և ավարտական միասնական քննություններին նախապատրաստման հստակ մեթոդաբանություն՝ պարտադրելով դպրոցին կատարելու իր առջև դրված պարտականությունները և մատուցելու կրթական ծրագրերով նախատեսված ծառայությունները:
7. Ստեղծելով դպրոցում համապատասխան կրթական միջավայր (լաբորատորիաներ, տեխնիկական հագեցվածություն և այլն)՝ ապահովել նաև այդ միջավայրի նպատակային օգտագործումը:
8. Մշակել դպրոցում կրթության որակի մշտադիտարկման մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա հաշվի առնել սովորողների և ծնողական համայնքի կարծիքը դպրոցի կողմից մատուցվող կրթական ծառայությունների վերաբերյալ:

Վերապատրաստումներ

9. Դպրոցների տնօրենների համար նախատեսել դպրոցի ղեկավարման և կառավարման տեսության, մարդկային, վարչական և ֆինանսական ռեսուրսների կառավարման վերաբերյալ դասընթացներ:
10. Ուսուցիչների վերապատրաստումների ժամանակ ընդգրկել հետևյալ թեմաները.
 - երեխաների տարիքային առանձնահատկություններ,
 - դեռահասների հոգեբանություն, նրանց հետ հաղորդակցման հմտություններ,
 - հասունացման տարիքի երեխաների հետ աշխատանքի հմտություններ,
 - միջանձնային փոխհարաբերությունների հոգեբանություն,
 - կոնֆլիկտների հաղթահարում և կարգավորում:
11. Մշակել ավագ և միջնակարգ դպրոցների ավագ դասարանների ուսուցչի որակավորման միասնական չափորոշիչներ:

12. Ուսուցիչների աշխատանքի ընդունելության ժամանակ ստուգվող մասնագիտական որակների շարքում նախատեսել թեկնածուի կողմից դասի պլան կազմելու և աշակերտին գնահատելու հմտությունները:
13. Սկսնակ ուսուցիչների աշխատաժամաքանակում նախատեսել փորձառու ուսուցիչների մոտ դասալսումներ փորձի փոխանակում ապահովելու նպատակով:

Հոսքային և ենթահոսքային կրթություն

14. Հոսքային կրթությունը համաձայնեցնել աշխատաշուկայի պահանջների, երեխաների նախասիրությունների և մասնագիտությունների արդի պահանջարկի հետ՝ ապահովելով ենթահոսքերի բազմազանությունը:
15. Ենթահոսքային դասարանների կրթական ծրագրերի մշակման համար դպրոցներին ցուցաբերել մեթոդական և նյութական աջակցություն:
16. Դպրոցի հոսքային կրթությունը դարձնել ավելի ճկուն՝ ստեղծելով աշակերտների մասնագիտական նախասիրություններին համապատասխան դասընթացներին մասնակցելու այլընտրանքային հնարավորություններ, անգամ եթե դպրոցում չկա համապատասխան հոսք/ենթահոսք աշակերտների ոչ բավարար քանակի պատճառով (օրինակ՝ այլ ուսումնական հաստատություններում, անկախ մասնագետների ներգրավմամբ և այլն):
17. Հոսքային և ենթահոսքային դասարաններ ավարտած երեխաների համար սահմանել կրթությունը շարունակելու ընթացակարգ, որը հաշվի կառնի դպրոցում երեխայի ունեցած առաջադիմությունն՝ ըստ հոսքային առարկաների:
18. Մշակել հոսքային դասարաններում ոչ մասնագիտական առարկաների դասավանդման ուսումնական նոր պլան, որը թույլ կտա ապահովել համապատասխան գիտելիքներ այդ առարկաների գծով:

Մասնագիտական կողմնորոշում

19. Իրազեկել դպրոցների ավագ դասարանների սովորողներին ՄՄՈՒՀ-ների և բուհերի ընդունելության, վերջիններիս կողմից տրամադրվող կրթական ծառայությունների և ուսուցանվող մասնագիտությունների մասին:
20. Դպրոցների աշակերտների համար ՄՄՈՒՀ-ների և բուհերի ներկայացուցիչների հետ հանդիպումների պարտադիր ձևաչափ մշակել:
21. Մշակել ավագ և միջնակարգ դպրոցի սովորողի մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանություն՝ օգտագործելով առկա լավագույն փորձը (օրինակ՝ «Այբ» դպրոցի մոտեցումները) հաշվի առնելով ՀՀ-ում և արտասահմանում մասնագիտությունների առկա առաջարկը, օգտագործելով երեխաների նախասիրությունների և հակումների գնահատման արդի մեթոդիկաները:
22. Նախատեսել դպրոցներում սովորողների մասնագիտական կողմնորոշման մասնագետի հաստիք:

Հանրակրթական չափորոշիչներ

23. Վերանայել հանրակրթական չափորոշիչները, ծրագրերը և ուսումնական պլանները՝ գործընթացի մեջ ներգրավելով միջնակարգ և ավագ դպրոցների փորձառու ուսուցիչներին:
24. Ապահովել չափորոշիչների չափելիությունը:
25. Մշակել չափորոշիչների ապահովումը ստուգելու գործիքներ և ընթացակարգեր:
26. Կրթական չափորոշիչները չապահովելու դեպքում նախատեսել որոշակի պատժամիջոցներ դպրոցի տնօրենի և/կամ ուսուցչի նկատմամբ, ինչպես նաև խնդիրը լուծելու գործուն ընթացակարգեր:

27. Ապահովել դպրոցի ուսումնական պլանի ճկունությունը՝ «Հանրակրթության մասին» օրենքին համաձայն՝ դպրոցներին տրամադրելով գործնական ճկունություն, որը հնարավորություն կտա համապատասխանեցնել կրթական ծառայությունները սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, հետաքրքրություններին, սոցիալական, տնտեսական և տարածաշրջանային առանձնահատկություններին, ինչպես նաև ապահովելով դպրոցների մրցունակությունը:
28. Վերանայել դպրոցական դասագրքերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով առարկաների հաջորդականությանը և փոխհամաձայնեցմանը, կրթության շարունակականության ապահովմանը, ինչպես նաև շարադրանքի, լեզվի մատչելիությանը:
29. Համաձայնեցնել դպրոցական ծրագրերը և դասագրքերը բուհ ընդունվելու պահանջներին՝ նպաստելով նաև շտեմարանների հետ դրանց հակասության խնդրի լուծմանը:

Միջնակարգ դպրոցներ

30. Խթանել միջնակարգ դպրոցների ավագ դասարաններում հոսքային և ենթահոսքային կրթության իրականացումը:
31. Խթանել միջնակարգ դպրոցներում արհեստագործական հոսքերի ձևավորումը:
32. Միջնակարգ դպրոցների ավագ դասարաններում աշակերտների առավելագույն քանակը սահմանել նույնքան, որքան ավագ դպրոցներում:

Կրեդիտային համակարգի ներդրմանն ընդառաջ

33. Մշակել առարկա-կրեդիտ հարաբերակցության հաշվարկման հստակ մեթոդաբանություն:
34. Հանրակրթության ընթացքում ստացած կրեդիտները պետք է ապահովեն աշակերտների շարժունություն՝ աստիճանից աստիճան, համակարգից համակարգ, հանրակրթությունից դեպի մասնագիտական կրթական ծրագրեր:
35. Ապահովել ճկունություն աշակերտների համար՝ ինքնուրույն ձևավորելու իրենց կրթության բովանդակությունը՝ ելնելով իրենց նախասիրություններից և կրթական նպատակներից:
36. Կրեդիտային համակարգի միջոցով կարևորել աշակերտի մասնակցությունը համայնքային կյանքին, խրախուսել նրա ակտիվությունը և սովորելու մոտիվացիան:
37. Ապահովել դպրոցի սովորողներին խորհրդատվություն կրեդիտային համակարգի վերաբերյալ:
38. Մշակել կրեդիտային համակարգի կիրարկման գործընթացի վերահսկման գործուն համակարգ: